ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍԿԱՆԱԼ

ԾՈՍԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

ՀԱՍԿԱՆԱԼ

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

«Ծոմապահությունը կարևոր աստվածաշնչյան գործողություն է անհատական և միասնական պաշտամունքի համար: Բայց և այնպես, այսօր այն ընդհանուր առմամբ մատնվել է մոռացության, ասես ծայրահեղ ճգնակեցության մի վերապրուկ, որից մենք արդեն ազատվել ենք: Այս անչափ անհրաժեշտ աշխատանքային ձեռնարկում Փոլ Վոշերը ներկայացնում է Սուրբ գրքի խոհուն, հիմնավոր և օգտակար ուսումնասիրություն, որի նպատակն է սովորեցնել մեզ ծոմապահություն կատարել ըստ Աստծո հայտնված կամքի: Ես աղոթում եմ, որ Աստված զորավոր կերպով օգտագործի այս ուսուցումը՝ վերականգնելու համար ծոմապահության օրինավոր տեղը հազարավոր քրիստոնյաների կյանքում»:

– **Դոկտոր Ջոել Բիկ, «Մաքրակրոն բարեփոխված աստվածաբանական ճեմարանի»** նախագահ

«Այս աշխատանքային ձեռնարկին ծանոթանալը մեծ ուրախություն և արտոնություն էր ինձ համար: Դժբախտաբար, ծոմապահությունը դարձել է ոչ կիրառելի կամ պարզապես անհարմարավետ շատ եկեղեցիներում, թեև կարելի է ստանալ մեծ հոգևոր օգուտ և օրհնություններ այն պատշաճ կերպով հասկանալու դեպքում: Այս գիրքը վարպետորեն ներկայացնում է այս թեմայի համակողմանի ուսումնասիրություն և անում է դա հավասարակշռված՝ խուսափելու համար այնպիսի շեղումներից և չափազանցություններից, որոնք երբեմն ուղեկցում են ծոմապահությունը: Գոհանում եմ Աստծուց, որ առաջնորդեց ինձ այս արժեքավոր աշխատությանը՝ անձամբ իմ օգտի համար, և սրտանց հանձնարարում եմ այն յուրաքանչյուր Աստծո զավակի, ով լրջությամբ և զգաստությամբ է վերաբերվում իր հոգևոր ընթացքին»:

– **Սթիվ Լի, «Սերմոն Աուդիոյի»** հիմնադիր

«Իր ամենահայտնի քարոզի մեջ Հիսուս Քրիստոսն ասաց Իր աշակերտներին. «Երբ որ ծոմ եք պահում»՝ ենթադրելով, որ ծոմապահությունը տեղ էր ունենալու նրանց կյանքում: Այնուամենայնիվ, շատերի պատկերացումն այսօր այնպիսին է, ասես ծոմապահությունը դրվեց գերեզմանը մեր Փրկչի հետ և հարություն չառավ Նրա հետ: Փոլ Վոշերը քննում է այս սխալական մտածելակերպը Սուրբ գրքի վառ լույսի ներքո, որի արդյունքում ստացված սուրբգրային, ամփոփ և օգտակար ձեռնարկը ծոմապահության մասին լավագույնն է իմ կարդացածներից: Այս գրքի սիրտը և ուղերձն է հարել սուրբ, եռանդուն և Հոգով վերափոխված քրիստոնեական կյանքին, որն օժանդակվում է ծոմապահությամբ: Աղոթքով ուսումնասիրե՛ք այս ձեռնարկը, մանրակրկիտորեն կիրառե՛ք այն և սրտանց ապրե՛ք այս սկզբունքներով՝ Քրիստոսի փառքի համար: Այսպես վարվելով՝ դուք անպատճառ օգուտ կբերեք ձեր անձին»:

– **Ջեֆ Փոլարդ, «Սիոն սարի աստվածանչյան եկեղեցու»** հովիվ և *«Ֆրի Գրեյս Բրոդքասթեր»* պարբերականի խմբագիր

ՀԱՍԿԱՆԱԼ **ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ**

Հեղինակային իրավունքները՝ 2020թ., Փոլ Դեյվիդ Վոշեր

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել ցանկացած կերպով՝ առանց գրավոր թույլտվության, բացառությամբ՝ կարճ մեջբերումների քննադատական հոդվածների և ակնարկների մեջ: Ուղղե՛ք ձեր խնդրանքները հրատարակչին հետևյալ հասցեով.

Հրատարակված է.

«Հարթ Քրայ» Միսիոներական ընկերություն
Փ/Ա 3506
Ռեդֆորդ, Վիրջինիա 24143

www.heartcrymissionary.com

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, 2020թ.
Առաջին հրատարակություն

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, կամ, հատուկ նշումների դեպքում, «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչից» (NASB):

Խմբագրում. Մեգան Նեշ և Ֆորեսթ Հայթ
Սրբագրում. Մերի Քլեր Քասլբերի, Հաննա Մաթենիա և Ջոել Քեյդի
Էջադրում և ձևավորում. Ջոն Գրին, Մեթյու Ռոբինսոն, Ֆորեսթ Հայթ և Մայքլ Ռիս

ՀԱՍԿԱՆԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Բովանդակություն

Ներածություն 7

Ուսումնական ծրագիր՝ ըստ ցանկության 11

Հասկանալ ծոմապահությունը

1. Ներածություն ծոմապահության մասին 13
2. Քրիստոնյան և ծոմապահությունը 18
3. Ծոմապահությունը՝ որպես սրտի արձագանք 24
4. Ծոմապահություն դեպի վեր (Մաս Մեկ) 27
5. Ծոմապահություն դեպի վեր (Մաս Երկու) 32
6. Ծոմապահություն դեպի ներս (Մաս Մեկ) 35
7. Ծոմապահություն դեպի ներս (Մաս Երկու) 43
8. Ծոմապահություն դեպի ներս (Մաս Երեք) 47
9. Ծոմապահություն դեպի դուրս 50
10. Հանդիսավոր ժողով (Մաս Մեկ) 57
11. Հանդիսավոր ժողով (Մաս Երկու) 59
12. Հանդիսավոր ժողով (Մաս Երեք) 66
13. Զգուշացումներ և խոստումներ 69
14. Դիտարկումներ և նախազգուշացումներ 76

Հավելված. Գործնական ցուցումներ ծոմապահության վերաբերյալ 80

Անձնական ծոմապահություն և խոնարհություն

1. Ընդհանուր ակնարկ անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու մասին 85
2. Աստվածային երաշխիք անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու համար 91
3. Նախախնամության կանչ անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու համար 94

ՀԱՍԿԱՆԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿԻՑ

Այս դասընթացի մեծագույն նպատակն է, որ ուսանողը հանդիպում ունենա Աստծո հետ՝ Նրա Խոսքի միջոցով: Այս ուսումնական ձեռնարկը հիմնված է այն համոզմունքի վրա, որ Աստվածաշունչը Աստծո ոգեշնչված և անսխալական Խոսքն է, և այնպես է կազմված, որ ուսանողը բառացիորեն անկարող է ընթերցել այն՝ առանց բաց Աստվածաշնչի: Նպատակն է՝ օգնել ընթերցողին հնազանդվել Պողոս առաքյալի հորդորին Բ Տիմոթեոս 2.15-ում.

> *«Ձանք արա, որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստծո առջև՝ իբրև մի մշակ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարես»:*

Այս ձեռնարկի յուրաքանչյուր գլուխ ծոմապահության մեջ վարժվելու վարդապետության մասին է: Յուրաքանչյուր գլուխն ավարտելու համար ուսանողը պետք է պատասխանի հարցերի և կատարի առաջադրանքներ, որոնք տրված են համաձայն օգտագործված աստվածաշնչյան հատվածների: Ուսանողին առաջարկվում է մտորել յուրաքանչյուր աստվածաշնչյան հատվածի շուրջ և գրի առնել մտքերը: Այս դասընթացի օգտավետությունը կախված է ուսանողի ջանքերից: Եթե ուսանողը պատասխանի հարցերին՝ առանց մտածելու, գրեթե արտագրելով համապատասխան աստվածաշնչյան հատվածը և չձգտելով հասկանալ դրա իմաստը, այս գիրքը քիչ օգտավետ կլինի:

«Հասկանալ ծոմապահությունը» գիրքը գլխավորապես աստվածաշնչյան ուսումնական ձեռնարկ է և չի պարունակում գունազարդ պատկերներ, հետաքրքրաշարժ պատմություններ և աստվածաբանական մեկնություններ: Հեղինակը ցանկացել է ստեղծել այնպիսի աշխատություն, որը պարզապես մատնացույց է անում Աստվածաշունչը և թույլ է տալիս, որ Աստծո Խոսքը խոսի իր փոխարեն:

Այս ուսումնական ձեռնարկը կարող է օգտագործվել անհատական ուսումնասիրության համար, փոքր խմբերում, կիրակնօրյա դպրոցների դասարաններում կամ ցանկացած միջավայրում: Շատ կարևոր է, որ ուսանողն ինքնուրույն ավարտի յուրաքանչյուր գլուխը մինչև փոքր խմբի կամ կիրակնօրյա դպրոցի դասարանի հավաքույթը, որտեղ նրանք քննարկելու են այդ գլուխը և պատասխանելու են դրանում գտնվող հարցերին խմբի կամ աշակերտական թիմի առաջնորդի հետ:

ՀՈՐԴՈՐ ՈՒՍԱՆՈՂԻՆ

Մենք հորդորում ենք յուրաքանչյուր ուսանողի զբաղվել աստվածաշնչյան վարդապետության ուսումնասիրությամբ և բացահայտել դրա վեհ դիրքը քրիստոնեական կյանքում: Ճշմարիտ քրիստոնյայի համար շատ դժվար կլինի գործել և նույնիսկ գոյատևել, եթե նրա զգացմունքները հակասում են նրա մտքին կամ, այլ կերպ ասած, եթե նրա պատկերացումն Աստծուն ընծայվելու մասին հակասում է Աստծո մասին նրա վարդապետական գիտելիքին: Համաձայն Աստվածաշնչի, ո՛չ մեր զգացմունքները, ո՛չ էլ փորձառությունը բավարար հիմք չեն քրիստոնեական կյանքի համար: Միայն Աստվածաշնչի ճշմարտությունները, որոնք փոխանցվում են վարդապետության ուսուցման միջոցով և հասկացվում են մտքով, կարող են լինել այն հաստատ հիմքը, որի վրա մենք պետք է կառուցենք մեր համոզմունքները և վարքը և որոշենք մեր զգացմունքների ու փորձառությունների հիմնավոր լինելը: Միտքը սրտի թշնամին չէ, իսկ վարդապետությունը չի խոչընդոտում նվիրմանը: Երկուսն էլ անփոխարինելի են և պետք է անբաժան լինեն: Սուրբ գիրքը պատ-

վիրում է սիրել մեր Տեր Աստծուն մեր ամբողջ սրտով, մեր ամբողջ անձով և մեր ամբողջ մտքով (Մատթեոս 22.37), և երկրպագել Աստծուն և՛ հոգով, և՛ ճշմարտությամբ (Հովհաննես 4.24):

Վարդապետական ուսուցումը և՛ զարգացնում է մեր միտքը, և՛ ամրացնում է մեր նվիրումը: Այն ջերմեռանդ որոնում է, ձգտում առ Աստված, որը պետք է առաջնորդի ուսանողին ավելի մեծ անձնական վերափոխման, հնազանդության և ի սրտե երկրպագության: Գոյություն ունի մեծ սխալմունք, որից ուսանողը պետք է զգուշանա. նա չպետք է փնտրի անանձնական գիտելիք՝ Աստծո Անձը որոնելու փոխարեն: Թե՛ չգիտակցված նվիրումը, թե՛ սոսկ տեսական գիտելիք ստանալու ձգտումը անօգուտ են, որովհետև երկու դեպքում էլ մարդը կորցնում է Աստծուն:

ՆՈՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Այս գրքի անգլերեն հրատարակության մեջ օգտագործվել է «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշունչը» (NASB): Աստվածաշնչի այս թարգմանությունն ընտրվել է հետևյալ պատճառներով. (1) թարգմանիչների անվարան համոզվածությունը, որ Աստվածաշունչն Աստծո անսխալական Խոսքն է և (2) ճշգրիտ թարգմանությունը բնագրային լեզուներից:

Ներկա հայերեն հրատարակության մեջ Աստվածաշնչի այս թարգմանությունը (NASB) օգտագործվում է, երբ առկա է մեջբերված հատվածների իմաստային երկվություն հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանության (1869թ.) հետ: Այն ավելանում է գրքի տեքստին և աստվածաշնչյան մեջբերումներին փակագծերի մեջ՝ որպես այլընտրական տարբերակ:

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

Պնդումներն Աստվածաշնչին վերաբերող նույնիսկ ամենափոքր թեմաների գիտակ լինելու մասին մատնում են անձի ամբարտավանությունը և անտեղյակությունը: Սա հատկապես վերաբերում է աստվածապաշտության այնպիսի անձնական բնագավառներին, ինչպիսիք են Աստվածաշնչի ընթերցանությունը, աղոթքը և ծոմապահությունը: Ես դեռ չեմ հանդիպել այնպիսի մարդու, ով ցավում է այս բնագավառներին չափից շատ ժամանակ տրամադրելու համար, սակայն ճանաչում եմ անթիվ մարդկանց (որոնց թվում նաև ես եմ), ովքեր ցավում են այդ ամենը հաճախակի անտեսելու համար: Մի՞թե մենք չենք կարող համեմատել մեզ Մարթայի հետ, ով հոգս էր քաշում և շատ բաներով զբաղված էր՝ անտեսելով այն բարի բաժինը, որն ընտրեց Մարիամը (Ղուկաս 10.41,42):

Ներկայացնելով այս հրաժարումը՝ կարող եմ անցում կատարել այն դրդապատճառին, որով որոշեցի գրել այս աշխատանքային ձեռնարկը ծոմապահության մասին: Այն եռակի է: Առաջինը՝ ես գրում եմ այս մասին, քանի որ ծոմապահությունը հոգևոր պաշտամունք է, որն առկա է թե՛ Հին, թե՛ Նոր կտակարաններում: Երկրորդը՝ ես գրում եմ այս մասին, քանի որ բազմաթիվ հավատացյալներ՝ թե՛ երիտասարդ, թե՛ տարեց, տարիներ շարունակ հարցրել են ինձ, թե որն է ծոմապահության պատշաճ տեղը քրիստոնեական կյանքում և ինչպես իրենք պետք է կատարեն այն: Եվ վերջինը՝ ես գրում եմ այս մասին, քանի որ այս թեմայով կա շատ քիչ տեղեկություն:

Լավ է, որ Աստծո ժողովուրդը դեռևս համարում է, որ Աստվածաշնչի ուսումնասիրությունը և աղոթքը հիմնարար են քրիստոնեական կյանքի համար, իսկ դրանցում հավատարիմ մարդիկ ազնիվ և իմաստուն են: Միևնույն ժամանակ, ցավալի է, որ բազմաթիվ ժամանակակից քրիստոնյաներ ունեն խիստ սխալական պատկերացումներ ծոմապահության մասին՝ որ այն անցյալի վերապրուկ է, որ այն անհնարին սխրանք է, որը պետք է կատարվի միայն «հոգևոր վերնախավի» կողմից, կամ (ամենավատը) որ այն վնասակար ծես է, և այն կատարում են միայն ծանրագույն մոլեռանդները, որոնք հավատում են, որ մարմնի կործանումը միակ ճանապարհն է դեպի ճշմարիտ սրբությունը: Ես գրել եմ այս աշխատանքային ձեռ-

նարկը քողազերծելու համար այս սխալական գաղափարները և օգնելու համար Աստծո ժողովրդին հասկանալ ծոմապահությունը և դրա պատշաճ տեղը քրիստոնեական կյանքում:

Ամփոփելով՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել իմ կին Չարոյին՝ նրա մշտական խրախուսանքի համար իմ բոլոր ձեռնարկություններում, և իմ չորս զավակներին՝ Յանին, Էվանին, Ռոուենին և Բրոնվինին, որոնք շարունակում են մեծ օրհնություն լինել ինձ համար: Ես նույնպես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել «Հարթ Քրայ» ծառայության աշխատակից Ֆորեսթ Հայթին՝ այս ձեռագիրը խմբագրելու և այս գրքի գրաֆիկայի, էջադրման և ձևավորման աշխատանքները վերահսկելու համար: Նրա ներդրումն այս աշխատության ընդհանուր ընթեռնելիության մեջ անգնահատելի է: Նույնպես շնորհակալ եմ «Հարթ Քրայի» ամբողջ անձնակազմին, որոնք մեծապես խրախուսել են ինձ այս գիրքը գրելու և հրատարակելու ընթացքում:

ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔ

Այս գրքի վերջում ընդգրկված է *«Անձնական ծոմապահություն և խոնարհություն»* կոչվող մի սեղմ աշխատություն, որի հեղինակը շոտլանդացի աստվածաբան Թոմաս Բոստոնն է: Այս գրքի հեղինակը (Փոլ Վոշերը) և խմբագիրը (ես՝ Ֆորեսթ Հայթը) մեծ հարգանքով են վերաբերվում նրան: Այն *«Բոստոնի աշխատությունների լիակատար ժողովածուի»* մեջ զետեղված *(11-րդ հատոր) «Հուշամատյան անձնական և ընտանեկան ծոմապահության և խոնարհության»* աշխատության կրճատված և արդիականացված տարբերակն է:

Գոյություն ունեն հարաբերականորեն քիչ աշխատություններ ծոմապահության մասին, և մեզ համար դժվար էր գտնել գրքեր, որոնց միջոցով ուսանողները կարող էին ուսումնասիրել այս թեման: Մենք որոշեցինք ընդգրկել Բոստոնի սեղմ աշխատությունն այս թեմայով՝ մասամբ այս խնդիրը թեթևացնելու համար, հատկապես այն պատճառով, որ նախկինում այն հեշտորեն հասանելի չէր՝ *«Բոստոնի աշխատությունների լիակատար ժողովածուի»* մեջ թաքնված լինելու պատճառով: Հուսով ենք, որ այս հին աշխատության վերահրատարակումը օրհնություն կդառնա շատերի համար:

Որոշում կայացնելով ընդգրկել *«Անձնական ծոմապահություն և խոնարհություն»* աշխատությունը՝ զգացինք, որ անհրաժեշտ է հարմարեցնել այն ժամանակակից ընթերցողին: Փոլ Վոշերի «Հասկանալ ծոմապահությունը» գիրքը, ինչպես նաև «Աստվածաշնչյան հիմունքներ քրիստոնեական հավատքի համար» շարքի բոլոր աշխատանքային ձեռնարկները գրված են ուսանողի համար հնարավորինս հասկանալի լեզվով՝ անկախ նրա նախնական գիտելիքներից: Այնուամենայնիվ, Բոստոնը գրի է առել իր աշխատությունը 18-րդ դարի վաղ շրջանում, և այսօր դրա լեզուն հիմնականում դժվարըմբռնելի է:

Այդ իսկ պատճառով, ես զբաղվեցի այդ գրքի կրճատմամբ և արդիականացմամբ, որպեսզի դարձնեմ այն հնարավորինս պարզ և ըմբռնելի՝ առանց թուլացնելու իմաստը: Իսկապես որ մեծ ջանք է գործադրվել՝ փոփոխությունները նվազագույնի հասցնելու և հեղինակի ասելիքին հավատարիմ մնալու համար: Այն դեպքում, երբ անհրաժեշտ էր ավելի ծավալուն խմբագրում՝ իմաստը պարզեցնելու համար, ես ընդգրկել եմ գրքի համապատասխան հատվածների հեղինակային շարադրանքը տողատակի նշումներում՝ հավաստիանալու համար, որ Բոստոնի խոսքերը սխալ մեկնաբանված չեն, և որոշ դեպքերում ցույց տալու համար հին լեզվի գեղեցկությունը:

Այդ աշխատության երեք գլուխներից յուրաքանչյուրի վերջում ավելացրել եմ նաև հարցեր մտորումների համար, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենան գրի առնել իրենց մտքերը և շարունակել ուսումնասիրությունը աշխատանքային ձեռնարկի ձևաչափով: Աղոթում եմ և վստահ եմ, որ *«Անձնական ծոմապահություն և խոնարհություն»* աշխատությունը օգտակար և կառուցողական կլինի նրանց համար, ովքեր ուսումնասիրելու են *«Հասկանալ ծոմապահությունը»* գիրքը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ՝ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Սրբացնել եկեղեցական համայնքը», Ռիչարդ Օուեն Ռոբերտս (և այլք)
«Անձնական ծոմապահություն և խոնարհություն», Թոմաս Բոստոն (ընդգրկված է)
«Անհույս իրավիճակ. ինչպե՞ս վարվել», (քարոզ) Չարլզ Սփերջեն
«Քարոզներ հմ. 98 և 99. Հոգևոր ծոմապահության պարտավորությունը, օգուտը և պատշաճ ձևը», Սեմյուել Միլլեր
«Ծոմապահության, աղոթքի և անձը մեղքի պատճառով խոնարհեցնելու վարդապետությունը», Արթուր Հինդերշեմ (առաջադեմ ուսանողների համար)

ՀԱՍԿԱՆԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական ծրագիր՝ ըստ ցանկության

ՀԱՍԿԱՆԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Շաբաթ Մեկ	**Ներածություն ծոմապահության մասին և Ծոմապահություն դեպի վեր**
Օր Մեկ	Գլուխ 1
Օր Երկու	Գլուխ 2
Օր Երեք	Գլուխ 3
Օր Չորս	Գլուխ 4
Օր Հինգ	Գլուխ 5
Շաբաթ Երկու	**Ծոմապահություն դեպի ներս**
Օր Մեկ	Գլուխ 6, Բաժին 1
	Գլուխ 6, Բաժին 2, Գլխավոր կետ 1
Օր Երկու	Գլուխ 6, Բաժին 2, Գլխավոր կետեր 2-4
Օր Երեք	Գլուխ 7
Օր Չորս	Գլուխ 8
Օր Հինգ	Կրկնություն և աղոթք
Շաբաթ Երեք	**Ծոմապահություն դեպի դուրս և Հանդիսավոր ժողով**
Օր Մեկ	Գլուխ 9, Բաժին 1
	Գլուխ 9, Բաժին 2
	Գլուխ 9, Բաժին 3, Գլխավոր կետեր 1-2
Օր Երկու	Գլուխ 9, Բաժին 3, Գլխավոր կետեր 3-5
	Գլուխ 9, Բաժին 4
Օր Երեք	Գլուխ 10
	Գլուխ 11, Բաժին 1, Գլխավոր կետեր 1-2
Օր Չորս	Գլուխ 11, Բաժին 1, Գլխավոր կետեր 3-7
Օր Հինգ	Գլուխ 11, Բաժին 2
	Գլուխ 12
Շաբաթ Չորս	**Աստվածաշնչյան ցուցումներ ծոմապահության համար**
Օր Մեկ	Գլուխ 13, Բաժին 1
Օր Երկու	Գլուխ 13, Բաժիններ 2-3
Օր Երեք	Գլուխ 14
Օր Չորս	Հավելված
Օր Հինգ	Կրկնություն և աղոթք

ԱՆՁՆԱԿԱՆ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

Շաբաթ Հինգ	**Անձնական ծոմապահություն և խոնարհություն**
Օր Մեկ	Գլուխ 1 (Կրկնողության հարցերով)
Օր Երկու	Գլուխ 2 (Կրկնողության հարցերով)
Օր Երեք	Գլուխ 3, Բաժին 1 (Կրկնողության հարցեր 1-2)
Օր Չորս	Գլուխ 3, Բաժին 2 (Կրկնողության հարց 3)
Օր Հինգ	Կրկնություն և աղոթք

ՀԱՍԿԱՆԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 1. Ներածություն ծոմապահության մասին

ԻՆՉ Է ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ Աստվածաշնչում ծոմապահությունը հիմնականում ենթադրում է հրաժարում սննդից որոշակի ժամանակահատվածով՝ Աստծուն փնտրելու համար: Ծոմապահության այս հիմքային սկզբունքը նույնպես կարող է ընդգրկել հրաժարում ցանկացած գործունեությունից, միջոցառումից կամ ժամանակավոր հաճույքից՝ Աստծուն մոտենալու համար, օրինակ՝ հրաժարում ընկերական շփումից՝ մենության մեջ Աստծո հետ ժամանակ անցկացնելու համար, հրաժարում քնից՝ ամբողջ գիշերն աղոթքի մեջ անցկացնելու համար, կամ հրաժարում որևէ աշխատանքից, նախասիրությունից կամ ժամանցից՝ Աստծուն ժամանակ տրամադրելու համար:

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՆՉՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ստորև գտնվում է ծոմապահության մասին սուրբգրային հղումների բավականին սպառիչ ցուցակ: Ընդգրկված են նաև այնպիսի հատվածներ, որոնք վերաբերում են ծոմապահությանը միայն անուղղակի կերպով, օրինակ՝ հատվածներ Աստծո հանդեպ քաղցի և ծարավի մասին: Ընթերցե՛ք այս ցուցակը մտախոհությամբ և աղոթքով:

Ղևտացիների 16.29,31. Քավության օրը Իսրայելի ժողովրդին պատվիրված էր խոնարհեցնել կամ տրտմեցնել իրենց անձերը: Այս արտահայտությունն ունի անձնուրացության իմաստ և ամենից հաճախ զուգորդվում է ծոմապահության հետ (Սաղմոս 35.13, Եսայի 58.3, Եզրաս 8.21): Նույնպես կարդացե՛ք Ղևտացիների 23.27-29 և Գործք 27.9:

Ելից 24.12-18. Մովսեսը ծոմ պահեց Սինա սարի վրա քառասուն օր ու գիշեր՝ Օրենքի քարե տախտակները ստանալիս (Երկրորդ Օրինաց 9.9):

Ելից 34.27,28. Մովսեսը ծոմ պահեց Սինա սարի վրա քառասուն օր ու գիշեր, որպեսզի բարեխոսեր ապստամբ Իսրայելի համար և ստանար Օրենքի երկրորդ օրինակը (Երկրորդ Օրինաց 9.17-19, 10.10):

Դատավորաց 20.26-28. Իսրայելը ծոմ պահեց և առաջնորդություն խնդրեց Աստծուց Բենիամինի ցեղի դեմ պատերազմում:

Ա Թագավորաց 1.6-11. Աննան ծոմ պահեց և աղոթեց, որպեսզի Աստված բացեր իր որովայնը և որդի տար իրեն:

Ա Թագավորաց 7.6-8. Իսրայելը ծոմ պահեց Մասփայում՝ ի նշան ապաշխարության, և փրկություն խնդրեց Տիրոջից:

Ա Թագավորաց 31.11-13. Գաղաադի Յաբիսի քաջ մարդիկ ծոմ պահեցին՝ սգալով Սավուղ թագավորի և նրա որդիների մահը, նաև նրանց մարմինների պղծվելու համար:

Բ Թագավորաց 1.11,12. Դավիթը և իր զինվորները ծոմ պահեցին՝ սգալով Սավուղի, Յովնաթանի և փղշտացիների դեմ պատերազմում սրից ընկած զինվորների մահը:

Բ Թագավորաց 12.15-23. Դավիթը ծոմ պահեց, որպեսզի Տերը ողորմություն ցուցաբերեր և խնայեր իր զավակի կյանքը, որին Աստված զարկեց մահացու հիվանդությամբ՝ որպես պատիժ:

Գ Թագավորաց 21.9-13. Հեզաբելը և Աքաաբն օգտագործեցին ծոմապահությունը՝ աստվածապաշտ ձևանալու և Նաբովթի սպանության դավադրությունը քողարկելու համար:

Գ Թագավորաց 21.20-29. Լսելով իր դատաստանի մասին Եղիա մարգարեից՝ Աքաաբ թագավորը խոնարհեցրեց իրեն Աստծո առջև՝ ծոմապահության միջոցով:

Բ Մնացորդաց 20.1-4. Հուդայի թագավոր Հովսափատը ծոմ պահեց, որպեսզի ազատվեր մովաբացիների, ամմոնացիների և մաոնացիների հետ պատերազմի սպառնալիքից:

Եզրաս 8.21-23. Եզրասը և իր հետ գերության մեջ գտնվողները խոնարհեցրին իրենց անձերը ծոմապահության միջոցով, որպեսզի Աստված շնորհեր իրենց անվտանգ ճանապարհորդություն Ահավա գետից մինչև Երուսաղեմ:

Նեեմիա 1.3-11, 2.1-8. Նեեմիան ծոմ պահեց՝ սգալով Երուսաղեմում գտնվող մնացորդի համար, որոնք մեծ նեղության և անարգանքի մեջ էին: Նա խոստովանեց Իսրայելի մեղքերը և աղաչեց Աստծուն ողորմություն ցուցաբերել՝ տալով իրեն բարեհաճություն Արտաշես թագավորի առջև:

Նեեմիա 8.18, 9.1-3. Իսրայելի ժողովուրդը ծոմ պահեց հանդիսավոր ժողովի ժամանակ՝ լսելու համար Աստծո օրենքը և խոստովանելու իրենց և իրենց հայրերի մեղքերը:

Եսթեր 4.16. Եսթեր թագուհին, իր աղախինները և Շուշան քաղաքում ապրող հրեաները ծոմ պահեցին, որպեսզի Եսթերը բարեհաճություն գտներ թագավորի առջև, և հրեաները փրկվեին Համանի ծրագրած կործանումից:

Եսթեր 9.20-22,30,31. Փուրիմի օրը հաստատվեց որպես տոն՝ ի հիշատակ հրեաների մեծ փրկության Համանի հրամաններից և իրենց բոլոր թշնամիներից: Այս տոնակատարությունն ընդգրկում էր ոչ միայն խնջույքներ, ցնծություն և նվերներ, այլև ծոմապահություն և սուգ:

Սաղմոս 4.7. Աստված սրտին ավելի մեծ ուրախություն է տալիս, քան՝ ցորենը և նոր գինին:

Սաղմոս 27.4. Դավթի մեծագույն ցանկությունը Աստծո գեղեցկությանը նայելն էր:

Սաղմոս 34.8. Դավիթը հորդորեց Աստծո ժողովրդին ճաշակել և անձամբ տեսնել, որ Տերը քաղցր է:

Սաղմոս 35.13,14. Դավիթը խոնարհեցրեց իր անձն Աստծո առջև՝ ծոմ պահելով որոշ մարդկանց համար, երբ նրանք հիվանդ էին և կարիքի մեջ:

Սաղմոս 42.1,2, 63.1. Սաղմոսերգուն նկարագրում է ձգտումն առ Աստված՝ որպես քաղց և ծարավ Նրա հանդեպ:

Սաղմոս 69.9,10. Դավիթը լաց էր լինում և ծոմ էր պահում, որովհետև նախանձավորություն ուներ աստվածային իրողությունների հանդեպ, և որովհետև անօրեն մարդիկ նախատում էին Աստծո անունը:

Սաղմոս 73.25. Ասափը չէր ցանկանում ոչինչ այս երկրի վրա՝ Աստծուց և Նրա ներկայությունից ավելի:

Սաղմոս 102.4, 107.18. Աստծո ժողովուրդը ներկայացվում է այն աստիճան ճնշված, որ, ինչպես գրված է, «մոռացան» (102.4) իրենց կերակուրը և նույնիսկ «զզվեցին» (107.18) դրանից:

Սաղմոս 109.24. Դավիթը ֆիզիկապես տկարացել էր ծոմից՝ գտնվելով իր թշնամիների միջև:

Եսայի 58.1-5. Իսրայելը հարցրեց, թե ինչու Աստված չի նկատում իրենց ծոմերը: Աստված հանդիմանեց նրանց իրենց անօրինության և կեղծավորության համար:

Եսայի 58.6-14. Աստված նկարագրում է արդարների ծոմապահությունը, որը հաճելի է Իրեն:

Երեմիա 36.9,10,20-26. Ամբողջ ժողովուրդը Երուսաղեմի և Հուդայի քաղաքներից ծոմ հայտարարեց և լսեց Երեմիայի գրքից կարդացվող խոսքերը: Այնուամենայնիվ, նրանք ուշադրություն չդարձրին Աստծո զգուշացումներին:

Դանիել 6.16-19. Դարեհ թագավորը ամբողջ գիշեր ծոմ պահեց Դանիելի փրկության համար, որին նա առանց դիտավորության դատապարտել էր առյուծների գուբը գցվելուն:

Դանիել 9.3-20. Դանիելը ծոմ պահեց՝ խոստովանելով իր և իր ժողովրդի մեղքը:

Դանիել 9.2,22,23. Դանիելը ծոմ պահեց՝ խնդրելով իմաստություն, որպեսզի հասկանար մարգարեություններն Իսրայելի ապագայի մասին:

Հովել 1.14,15, 2.12-17. Աստված պատվիրեց Իսրայելին ծոմ պահել և հանդիսավոր ժողով հրավիրել, որպեսզի ժողովուրդն ապաշխարի և ողորմություն աղերսի մինչև Տիրոջ օրվա (Աստծո դատաստանի) գալը:

Հովնան 3.4-10. Հովնանի քարոզելուց հետո նինվեացիները ծոմապահություն հայտարարեցին, ապաշխարեցին իրենց անօրինության համար և աղերսեցին Աստծո ողորմությունը:

Զաքարիա 7.1-7, 8.19. Իրենց գերության ընթացքում հրեաները սահմանել էին չորս ամենամյա ծոմապահություն՝ չորրորդ, հինգերորդ, յոթերորդ և տասներորդ ամիսներին:

Մատթեոս 4.1-3. Հիսուսը ծոմ պահեց քառասուն օր ու գիշեր անապատում, մինչև փորձչի կողմից փորձվելը:

Մատթեոս 6.16. Հիսուսն ակնկալում էր, որ Իր աշակերտները ծոմապահություն էին կատարելու, և զգուշացրեց նրանց սխալ դրդապատճառների մասին (օրինակ՝ կեղծավորության) ծոմապահության ժամանակ:

Մատթեոս 6.17,18. Հիսուսը սովորեցրեց ծոմապահության ճիշտ դրդապատճառների և վարձատրության մասին:

Մատթեոս 9.14,15. Հիսուսը սովորեցրեց, որ Իր աշակերտները ծոմապահություն էին կատարելու Իր համբարձումից հետո:

Մատթեոս 9.16,17. Հիսուսը տարանջատեց ծոմապահության հին կարգը (որը կատարում էին փարիսեցիները և Հովհաննես Մկրտչի աշակերտները) նոր կարգից (որը կատարելու էին Իր աշակերտները):

Մարկոս 9.28. Հիսուսը հիշատակեց ծոմապահությունն աղոթքի հետ՝ որպես հավատացյալի հավատքը զորացնելու միջոց հոգևոր պատերազմի համար: *Այս հատվածի թարգմանությունների միջև առկա տարբերությունները քննարկվում են հաջորդ ենթաբաժնում:*

Ղուկաս 2.36-38. Աննա մարգարեուհին օր ու գիշեր ծառայում էր Աստծուն տաճարում՝ ծոմով և աղոթքով: Հավանաբար, նրա աղոթքները վերաբերում էին եկող Մեսիայի գալուստին սպասելուն:

Ղուկաս 18.11,12. Փարիսեցիները ծոմ էին պահում շաբաթը երկու անգամ (նույնպես կարդացե՛ք Մատթեոս 9.14):

Ղուկաս 18.9-14. Հիսուսը դատապարտեց ծոմապահությամբ պարծենալը՝ սեփական անձն արդարացնելու նպատակով:

Գործք 10.30. Կոռնելիոսն աղոթում և ծոմ էր պահում, երբ հրեշտակը հայտնվեց նրան և կարգադրեց մարդ ուղարկել ու կանչել Պետրոսին: *Այս հատվածի թարգմանությունների միջև առկա տարբերությունները քննարկվում են հաջորդ ենթաբաժնում:*

Գործք 13.1-3. Քրիստոնյաներն Անտիոքում ծոմապահություններ էին կատարում: Նման ծոմապահություններից մեկի ընթացքում միսիոներական շարժ սկսվեց:

Գործք 13.1-3. Քրիստոնյաները ծոմապահություն էին կատարում միսիոներներ նշանակելու կապակցությամբ:

Գործք 14.22. Քրիստոնյաներն Անտիոքում ծոմապահություն կատարեցին՝ որպես միսիոներների և երեցների նշանակման մի մաս:

Հռոմեացիների 14.6. Պողոսը գրեց, որ հավատացյալը կարող է ազատորեն հետևել իր խղճին տոնական օրեր նշելու և կերակուրի հարցերում, սակայն նա պարտավոր է անել ամեն ինչ Աստծո և Նրա փառքի համար:

Ա Կորնթացիների 7.5. Պողոսը նշեց ծոմապահությունը և աղոթքը որպես ամուսնական հարաբերության մեջ ժուժկալության պատշաճ պատճառներ: *Այս հատվածի թարգմանությունների միջև առկա տարբերությունները քննարկվում են հաջորդ ենթաբաժնում:*

Ա Կորնթացիների 9.24-27. Հաղթական քրիստոնեական կյանքի համար անհրաժեշտ է ժուժկալություն, ինչն ընդգրկում է մարմինը կարգապահության վարժեցնելը՝ Աստծո կամքին հնազանդեցնելու համար:

Բ Կորնթացիների 6.4,5. Ծոմապահությունը այն չափանիշներից է, որոնց հիման վրա Պողոս առաքյալը հանձնարարում էր իրեն՝ որպես Աստծո ճշմարիտ ծառա: *Այս հատվածի թարգմանությունների միջև առկա տարբերությունները քննարկվում են հաջորդ ենթաբաժնում:*

Բ Կորնթացիների 11.27. Պողոս առաքյալը հաճախ էր ծոմ պահում իր ծառայության ընթացքում: *Այս հատվածի թարգմանությունների միջև առկա տարբերությունները քննարկվում են հաջորդ ենթաբաժնում:*

Կողոսացիների 2.23. Պողոսը հայտարարեց, որ ճգնավորական սովորույթները և մարմնին խստորեն վերաբերվելը անօգուտ են մարմնավոր ցանկությունների դեմ պայքարելու հարցում:

Ա Տիմոթեոս 4.1-5. Հերձվածություն է դրդել մարդկանց հրաժարվել այն կերակուրներից, որոնք Աստված ստեղծել է հավատացյալների և ճշմարտությունը ճանաչողների համար, որ գոհությամբ վայելեն:

ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Վերևում բերված ծոմապահությանը վերաբերող աստվածաշնչյան հատվածների ամփոփ դիտարկման մեջ նշեցինք հինգ հատված, որոնք հավելյալ դիտարկման կարիք ունեն՝ թարգմանությունների միջև առկա տարբերությունների պատճառով: Մինչև մեր ուսումնասիրությունը շարունակելը, մանրամասնորեն կքննարկենք յուրաքանչյուրը:

ՄԱՐԿՈՍ 9.28

Որոշ անգլերեն թարգմանություններ (KJV/NKJV) ընդգրկում են ծոմապահությունն աղոթքի հետ, այնինչ մյուսները (NASB/ESV) բաց են թողնում այն՝ նշելով միայն աղոթքը: Ամենավաղ հունարեն ձեռագրերում (Ալեքսանդրյան, Արևմտյան և Կեսարյան) չկա «և ծոմով» արտահայտությունը: Այնուամենայնիվ, այն գտնվում է գրեթե մնացած բոլոր ձեռագրերում և թարգմանություններում: Այն պահպանողական աստվածաբանները, որոնք բաց են թողնում ծոմապահությունը, համոզված են, որ այն ավելացում է գրագիրների կողմից, որը կրում է վաղ և միջնադարյան եկեղեցում ծոմապահության վրա մեծ շեշտադրման ազդեցությունը: Այնուամենայնիվ, նույնիսկ եթե «և ծոմով» արտահայտությունը հետագա ավելացում է, այն չի հակասում առողջ վարդապետությանը և գործելակերպին: Հիշեք՝ այն, որ աշակերտներն անկարող էին հանել այդ դևին, միայն անուղղակիորեն էր կապված աղոթքի (և/կամ ծոմապահության) պակասի հետ: Նրանց ձախողման գլխավոր պատճառն այն էր, որ նրանք չունեին հոգևոր իշխանություն, քանի որ չունեին հավատք (Մատթեոս 10.1, Մարկոս 9.18,19, Մատթեոս 17.19,20): Նման աղոթքին, աստվածաշնչյան ծոմապահությունը կարող է հավատացյալի հավատքը զորացնելու միջոց լինել, և ամբողջ Հին կտակարանում այն ներկայացվում է որպես Աստծուց փրկություն խնդրելու միջոց:

ԳՈՐԾՔ 10.30

Որոշ անգլերեն թարգմանություններում (KJV/NKJV) նշվում է, որ Կոռնելիոսն աղոթում և ծոմ էր պահում, այնինչ մյուսներում (NASB/ESV) գրված է, որ նա միայն աղոթում էր: Կրկին, տարբերությունը թարգմանությունների միջև հիմնված է հունարեն ձեռագրերի տարբերակների վրա: Որոշ աստվածաբաններ պնդում են, որ այս պատմության 30-րդ խոսքի հղումը ծոմապահության մասին ջնջվել է այն պատճառով, որ 1-4 խոսքերում գտնվող առաջին պատմության մեջ գրված չէ ծոմապահության մասին: Մյուսները համարում են, որ հղումը ծոմապահության մասին ավելացում է գրագիրների կողմից, որը կրում է վաղ և միջնադարյան եկեղեցում ծոմապահության վրա մեծ շեշտադրման ազդեցությունը: Այնուամենայնիվ, նույնիսկ եթե «ծոմ էի պահում» արտահայտությունը հետագա ավելացում է, այն չի հակասում առողջ վարդապետությանը և գործելակերպին:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 7.5

Որոշ անգլերեն թարգմանություններում (KJV/NKJV) նշված է ամուսնական զույգերի կողմից աղոթք և ծոմապահություն կատարելը, այնինչ մյուսներում (NASB/ESV) նշված է միայն աղոթքը: Կրկին, այս տարակարծությունը հիմնված է հունարեն ձեռագրերի տարբերակների վրա: Ամենավաղ ձեռագրերը չեն հիշատակում ծոմապահությունը: Այդ իսկ պատճառով, բազմաթիվ պահպանողական աստվածաբաններ համարում են, որ հետագա ձեռագրերում գտնվող այս հղումը նույնպես ավելացում է գրագիրների կողմից: Կրկին, նույնիսկ եթե «ծոմապահություն» բառը հետագա ավելացում է, այն չի հակասում առողջ վարդապետությանը և գործելակերպին: Իրականում, նման դեպքերում անհավանական չէ, որ ծոմապահությունը կարող էր կատարվել աղոթքի հետ միասին:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 6.5 և 11.27

Անգլերեն թարգմանություններից մեկում (KJV) գրված է. «հսկումներում և ծոմերում», այնինչ այլ թարգմանություններ (NASB/ESV) վերծանում են այս բառերը որպես «անքնության և քաղցի մեջ»: Այս տարբերությունների պատճառը ոչ թե տարբեր հունարեն ձեռագրերն են, այլ տարակարծությունը հունարեն բառերի թարգմանության հարցում: Երկրորդ Կորնթացիների 6.5-ում (NASB/ESV) գրված «անքնություն» բառը թարգմանված է հունարեն ***«ագրուպնի՛ա»*** բառից, որը կարող է նշանակել անքնություն կամ հսկում: «Քաղց» բառը թարգմանված է հունարեն ***«նեստեի՛ա»*** բառից, որը կարող է նշանակել թե՛ կրոնական ծոմապահություն, թե՛ հարկադրված ծոմապահություն՝ կարիքի, աղքատության կամ ծանր հանգամանքների պատճառով: Երկրորդ Կորնթացիների 11.27-ում (NASB/ESV) «անքնություն» բառը կրկին թարգմանված է հունարեն ***«ագրուպնի՛ա»*** բառից, բայց «քաղց» բառը թարգմանված է հունարեն ***«լիմո՛ն»*** բառից, որն ամենից հաճախ նշանակում է սով, քաղց կամ սովամահություն: Հնարավոր է՝ Պողոս առաքյալը նկատի ուներ երկու գաղափարն էլ: Հավանաբար, նա հետևում էր Հիսուսի օրինակին՝ անցկացնելով գիշերներ աղոթքի մեջ (Մարկոս 1.35, Ղուկաս 6.12): Երբեմն նա ստիպված էր մնալ առանց կերակուրի՝ աղքատության կամ այլ հանգամանքների պատճառով (Փիլիպեցիների 4.12, Ա Կորնթացիների 4.11), երբեմն էլ նա հոժարաբար ծոմ էր պահում՝ Տիրոջը փնտրելու համար:

Գլուխ 2. Քրիստոնյան և ծոմապահությունը

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ

Որոշ անկեղծ քրիստոնյաներ պնդում են, որ ծոմապահությունը վերաբերում է Հին կտակարանին և պատվիրված չէ քրիստոնյաներին Նոր կտակարանում: Թեև ճշմարիտ է, որ Նոր կտակարանում չկա ոչ մի հստակ պատվեր ծոմապահություն կատարելու մասին, թե՛ Հին, թե՛ Նոր կտակարաններում կան բավականաչափ խոսքեր, որոնք սատարում են տեսանկյունն այն մասին, որ ծոմապահությունը և՛ թույլատրելի է, և՛ խրախուսելի է Նոր կտակարանի հավատացյալների համար: Դիտարկենք հետևյալ ապացույցը ստորև:

1. Մատթեոս 6.2-18-ում Հիսուսը նշում է հրեական աստվածապաշտության երեք սյուները կամ դրսևորումները: Գրի առեք դրանք ստորև գտնվող բացատներում.

   ա. *Երբ որ Ո*_____ *անես (խս. 2):*

   բ. *Երբ որ Ա*_____ *անես (խս. 5):*

   գ. *Երբ որ Ծ*_____ *եք պահում (խս. 16):*

   ՆՇՈՒՄՆԵՐ. Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը չի ասում՝ «եթե» ողորմություն անեք, աղոթեք կամ ծոմ պահեք, այլ՝ «երբ» անեք այս բարեպաշտ գործերը: Այս հատվածում Տեր Հիսուսը ցույց է տալիս, որ Ինքն ակնկալում է, որ Իր աշակերտները ծոմապահություն կատարեն մինչև Իր վերադարձը: Նույնպես, ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը չի պատվիրում ծոմապահություն կատարել և չի հաստատում ծոմապահությունը որպես հոգևոր գործողություն, որը պետք է կատարեն բոլոր սրբերը ամեն ժամանակ: Նոր կտակարանը հաճախակի է պատվիրում բոլոր հավատացյալներին աղոթել (Ղուկաս 18.1, Ա Թեսաղոնիկեցիների 5.17) և նվիրատվություններ կատարել (Եփեսացիների 4.28, Եբրայեցիների 13.16, Ա Հովհաննես 3.17): Սակայն մենք չենք կարող ասել նույնը ծոմապահության մասին:

2. Գործք առաքելոց գիրքն արտացոլում է առաջին դարի եկեղեցու պատմությունը: Ինչ կերպով են հետևյալ հատվածներն այս գրքից ցույց տալիս, որ Առաջին եկեղեցին ծոմապահություն էր կատարում, և որ ծոմապահությունը վավերական է և կիրառելի է քրիստոնյաների համար այսօր:

   ա. *Գործք 13.1,2*

   _____

   _____

   _____

բ. *Գործք 14.19-23*

ՆՇՈՒՄՆԵՐ. Անպատասխանատու կլիներ ենթադրելը, որ այս ծոմապահության դեպքերը տեղի էին ունենում՝ միայն, որովհետև Առաջին եկեղեցու հավատացյալները չէին հասկանում իրենց նոր կյանքը Քրիստոսում և դեռ հարում էին հին ավանդույթներին: Յուրաքանչյուր դեպքում Պողոս առաքյալը և Եկեղեցու մյուս առաջնորդները և՛ ներկա էին, և՛ մասնակցում էին ծոմապահությանը:

3. Կրկին, Նոր կտակարանում չկա ծոմապահություն կատարելու պատվեր: Այնուամենայնիվ, գոյություն ունեն ծոմապահության դրական օրինակներ ամբողջ Հին կտակարանում: Կարելի՞ է հեղինակավոր ցուցումներ համարել այս օրինակները մերօրյա հավատացյալների համար: Ի՞նչ են սովորեցնում մեզ այս մասին հետևյալ հատվածները Նոր կտակարանից:

ա. *Հռոմեացիների 15.4*

բ. *Ա Կորնթացիների 10.11*

ՆՇՈՒՄՆԵՐ. Հին կտակարանի ուսուցումները և պատմությունները գրված են Նոր կտակարանի Եկեղեցու շինության համար: Այնպես որ, Հին կտակարանի ուսմունքը ծոմապահության մասին, ինչպես նաև ծոմապահության դրական և բացասական օրինակները հաստատ հիմք են մեր օրերի համար: Հին կտակարանի նվիրյալ սրբերից շատերը ծոմապահություններ էին կատարում: Սա մեծ վկայություն է ծոմապահության օգտի և հարատև կարևորության մասին: Այն մարդիկ, ովքեր ծոմապահություն են կատարում, գտնվում են Սուրբ գրքի և Եկեղեցու պատմության մեծագույն սրբերի ընտիր ընկերակցության մեջ:

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

Մատթեոս 9.14-17-ում (նույնպես Ղուկաս 5.33-39-ում) Հովհաննես Մկրտչի աշակերտները եկան Հիսուսի մոտ և հարցրին, թե ինչու Նրա աշակերտները ծոմ չեն պահում: Շատերն օգտագործել են այս հարցը և Հիսուսի պատասխանը՝ առաջադրելու համար մի ուսմունք, ըստ որի Հիսուսի գալուստը դարձրեց ծոմապահությունը ոչ միայն ոչ անհրաժեշտ, այլև՝ ոչ պատշաճ: Այնուամենայնիվ, այս հատվածի ուշադիր ընթերցումը ցույց կտա, որ Հիսուսը չի ժխտում ծոմապահությունը. փոխարենը, Նա վերափոխում է ծոմապահությունը՝ համակելով այն նոր կյանքով և հույսով: Կարդացե՛ք Մատթեոս 9.14-17-ը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, այնուհետև կատարե՛ք հետևյալ վարժությունները:

1. Համաձայն 15-րդ խոսքի առաջին կեսի, ինչպե՞ս է Հիսուսը պատճառաբանում, որ Իր աշակերտները ծոմ չէին պահում այդ որոշակի ժամանակահատվածում:

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք պետք է հիշենք Հիսուսի պատասխանի համատեքստը: Նրա մտադրությունը ոչ թե ծոմապահությունը ժխտելն էր, այլ պատասխանելը այն հարցին, թե ինչու Իր աշակերտները ծոմ չէին պահում: Հիսուսի պատասխանը պարզ էր և խորը. այդ պահին ծոմապահության հետ կապված սուգը և փափագն անտեղի կլինեին, քանի որ Փեսան (Քրիստոսը) նրանց հետ էր: Մարմնավորված Քրիստոսն ուրախության և ցնծության պատճառ էր:

2. Համաձայն 15-րդ խոսքի երկրորդ կեսի, ե՞րբ Քրիստոսի աշակերտների համար պատշաճ կլիներ ծոմ պահելը: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսի աշակերտների համար լիովին պատշաճ կլիներ ծոմ պահելը (1) երբ Փեսան բռնի կերպով վերցվեց նրանցից և խաչվեց, ինչպես նաև (2) եկեղեցու դարաշրջանի ամբողջ ընթացքում՝ տառապանքի, կարիքի և հոգևոր պատերազմի ժամանակաշրջանում, որում Քրիստոսի աշակերտները կարիք կունենային վերցնել իրենց մատակարարումն աղոթքի և ծոմապահության միջոցով, և որում նրանք փափագելու էին Քրիստոսի ներկայության լիությանը և սպասելու էին Նրա վերադարձին:

3. Լեռան քարոզի մեջ Հիսուսը հաստատում է, որ ծոմապահությունը շարունակելու է արդիական լինել Իր աշակերտների համար (Մատթեոս 6.16-18), և Նա չի ժխտում դրա օգուտը Մատթեոս 9-րդ գլխի այս հատվածում: Այնուամենայնիվ, 16,17 խոսքերում Նա օգտագործում է երկու պատկերավոր օրինակ՝ ցույց տալու համար, որ լինելու են կարևոր տարբերություններ փարիսեցիների և Հովհաննեսի աշակերտների ծոմապահության և եկեղեցու ծոմապահության միջև: Ինչպիսի՞ օրինակներ է բերում Հիսուսը:

ա. *Ն*_____ *Հ*_____՝ *հին հանդերձի վրա:* Նոր, դեռևս չնեղացած կտորը չի կարող օգտագործվել որպես կարկատան հին մաշված հագուստի համար. նեղանալով՝ նոր կտորը կպատռի հին հագուստը՝ թողնելով այն ավելի վատ վիճակում:

բ. *Ն*_____ *Գ*_____՝ *հին տիկերի մեջ:* Նոր գինին չի կարելի պահել հին, չորացած տիկերի մեջ. դրանք կճաքեն, երբ նոր գինին խմորվի և ընդարձակվի, և երկուսն էլ կկորչեն:

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսը նմանեցնում է փարիսեցիների և Հովհաննեսի աշակերտների ծոմապահությունը հին հանդերձի և հին տիկերի: Փարիսեցիների ծոմապահությունը դարձել էր դատարկ ավանդույթ, արտաքին ծես և ծրագրված գործողություն (կարդացե՛ք Ղուկաս 18.11,12): Հովհաննեսի աշակերտների ծոմապահությունը բնութագրվում էր սուգով, տրտմությամբ և Մեսիայի փրկության հանդեպ փափագով: Այս երկու մոտեցումների լույսի ներքո ակնհայտ է, թե ինչ կերպով քրիստոնեական ծոմապահությունը պետք է տարբերվի ոչ միայն փարիսեցիների դատարկ սովորույթից, այլև Հովհաննեսի անկեղծ աշակերտների ծոմապահությունից: Ի տարբերություն փարիսեցիների սովորույթի, այն ծոմապահությունը, որը Հիսուսը պատվիրեց, ծնված էր Աստծո հանդեպ ի սրտե ձգտումից և փափագից:

Այն շատ ավելին էր, քան փարիսեցիական հասկացությունը որոշակի օրերին կատարվող ավանդական ծեսի, պարտադիր գործունեության կամ կրոնական վարժանքի մասին: Ի տարբերություն Հովհաննեսի աշակերտների, Քրիստոսի աշակերտները ծոմ չէին պահելու որպես փրկությանը սպասող մարդիկ, այլ՝ որպես մարդիկ, որոնք արդեն վերապրել են փրկությունը: Եկեղեցու երկար դարերի ընթացքում դեռևս լինելու էին տառապանքներ, սուգ և փափագ, բայց Քրիստոսի աշակերտները և նրանց ծոմապահությունը համակված էին լինելու Քրիստոսի ներկայությամբ, Նրա փրկության հավաստմամբ և մեծ սպասումով, որ «ամեն խնդրող առնում է, և որոնողը գտնում է, և դուռը թակողին կբացվի» (Մատթեոս 7.8): Քրիստոսի գալուստը լիովին փոխեց ամեն ինչ: Նրա ավարտված աշխատանքը Գողգոթայում, Նրա հարության հույսն ու զորությունը, ինչպես նաև Սուրբ Հոգուն ուղարկելը նորոգեցին ամեն ինչ, նույնիսկ ծոմապահությունը: Մեր նոր կյանքը Քրիստոսում՝ Հին ուխտում տրված խոստման իրականացումն է, որը նախանշված էր Հին կտակարանի ծեսերով, և որին սպասում էին Հին կտակարանի սրբերը: Թեև մենք դեռ սպասում ենք ամեն ինչի վերականգնմանը Հիսուսի երկրորդ գալուստի ժամանակ, Երկնքի թագավորությունն արդեն իսկ եկել է և համակել է մեր կյանքերն ուրախությամբ, բավականությամբ և մեծ սպասումով: Մենք ծոմ չենք պահում՝ կարգադրված կամ օրինապաշտական ծես կատարելու համար. մենք ծոմ ենք պահում՝ ի պատասխան Աստծո հանդեպ ունեցած սրտանց փափագի: Մենք ծոմ չենք պահում, քանի որ անպտուղ ենք. մենք ծոմ ենք պահում, քանի որ ճաշակել և տեսել ենք, որ Տերը քաղցր է, և այս լիությունը դրդել է մեզ ավելի ձգտել Նրան: Մենք ծոմ չենք պահում, քանի որ Թագավորությունը դեռ չի եկել. մենք ծոմ ենք պահում, քանի որ այն եկել է, և քանի որ մենք փափագում ենք դրա ընդլայնմանը մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում և մինչև աշխարհի ծայրերը:

4. Հիմնվելով այն հատվածների վրա, որոնք ուսումնասիրեցինք, և այն ճշմարտությունների վրա, որոնք դիտարկեցինք, գրե՛ք կարճ բացատրություն եկեղեցում ծոմապահության վավերական լինելու մասին և այն մասին, թե ինչ տարբերակիչ հատկանիշներ ունի քրիստոնեական ծոմապահությունը:

ա. *Արդյո՞ք ծոմապահությունը վավերական է քրիստոնյայի համար այսօր: Գրի առեք ձեր մտքերը:*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

բ. *Որո՞նք են քրիստոնեական ծոմապահության կարևոր առանձնահատկությունները: Ինչո՞վ է քրիստոնեական ծոմապահությունը տարբերվում փարիսեցիների և Հովհաննես Մկրտչի հետևորդների ծոմապահությունից:*

Գլուխ 3. Ծոմապահությունը՝ որպես սրտի արձագանք

Այս կարճ գլուխը կարելի է համարել ամենակարևորը ամբողջ այս ուսումնասիրության մեջ, քանի որ այս գլխի նպատակն է բացատրել ծոմապահության էությունը՝ պատասխանելով, թե «ինչո՞ւ ենք մենք ծոմ պահում» հարցին: Այն հիմքային ճշմարտությունը, որը ցանկանում ենք փոխանցել, հետևյալն է. ***ծոմապահությունն այնպիսի ձգտման, ցանկության կամ կարիքի հետևանք է, որը ետ է մղում մյուս բոլոր ձգտումները, ցանկությունները և կարիքները, ինչը երբեմն ընդգրկում է կերակուրի և այլ ժամանակավոր հաճույքների անհրաժեշտությունը և վայելքը***:

ՍՐՏԻ ԱՐՁԱԳԱՆՔ

Ծոմապահությունն այնպիսի սրտի արձագանք է, որն այնքան է կլանված որևէ ցանկությամբ կամ կարիքով, որ հրաժարվում է ժամանակավոր հաճույքներից և նույնիսկ կյանքի համար անհրաժեշտ միջոցներից՝ ձգտելով իրականացնել այդ ցանկությունը: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ այն ձգտումը կամ ցանկությունը, որը համակում է մարդուն և մղում է ծոմապահության, կարող է լինել աստվածահաճո կամ մարմնավոր: Մովսեսը ծոմ պահեց Իսրայելի ներման համար, քանի որ նա սիրում էր իր ժողովրդին և նախանձավոր էր Աստծո փառքի համար (Ելից 34.27,28): Դավիթը սիրուց և և խղճահարությունից դրդված՝ ծոմ պահեց իր մահացող նորածին որդու համար (Բ Թագավորաց 12.15-23): Աննան ծոմապահություն էր կատարում տաճարում, քանի որ նվիրված էր Աստծուն և փափագում էր Մեսիայի գալուստին (Ղուկաս 2.36-38): Ի հակադրություն այս օրինակներին, Սավուղի վախը և ինքնախղճահարությունը հեռացրին նրանից ուտելու ցանկությունը (Ա Թագավորաց 28.20): Նմանապես, Աքաաբն այն աստիճան կլանված էր Նաբովթի խաղողի այգին զավթելու չար ցանկությամբ, որ չէր ուզում ոչինչ ուտել (Գ Թագավորաց 21.4): Եվ վերջինը, մարդկանցից փառք ստանալու ցանկությունը դրդում էր փարիսեցիներին ծոմ պահել շաբաթը երկու անգամ (Մատթեոս 6.16, Ղուկաս 18.11,12):

Սաղմոսների գրքում կա երկու հատված, որոնք կօգնեն մեզ հասկանալ ծոմապահության բնույթը և դրդապատճառները: Թեև դրանք անմիջականորեն չեն առնչվում ծոմապահության հետ, սակայն ցույց են տալիս ծոմապահության մի բանալի սկզբունք: Առաջինը Սաղմոս 102.4-ն է, որում սաղմոսերգուն աղաղակում է. «Սիրտս կոտրվեց և ցամաքեց խոտի նման, որ **հաց ուտելս էլ մոռացա**» (թավատառն ավելացված է): Այստեղ տեսնում ենք, որ սաղմոսերգուի նեղությունը և դրանից ազատվելու ցանկությունը դուրս էին մղել հասարակ ժամանակավոր մտահոգությունները: Նա այլևս չէր վայելում կերակուրը. այն նույնիսկ չէր գալիս նրա մտքին: Երկրորդ հատվածը Սաղմոս 107.17,18-ից է, որում Աստծո ժողովուրդը տառապում էր այն աստիճան, որ «նրանց **անձերը** ամեն կերակուրից **զզվեցին**» (թավատառն ավելացված է): Նրանց նեղությունն այնքան մեծ էր, և դրանից ազատվելու ցանկությունն այնքան ուժգին էր, որ կերակուրը ոչ միայն ցանկալի չէր, նույնիսկ զզվելի էր: Նրանց վերաբերմունքը կերակուրի հանդեպ կարելի է ամփոփել հետևյալ հարցով. «Ինչպե՞ս կարող ենք նույնիսկ մտածել կերակուրի մասին այսպիսի ժամանակ»:

Վերևում բերված երկու հատվածներում կերակուրը մոռացվել էր և նույնիսկ զզվելի էր դարձել, քանի որ կար նեղություն, որից մարդիկ ցանկանում էին ազատվել: Այս պատճառահետևանքային հարաբերությունը ծոմապահության հիմքն է, և այն կիրառելի է ցանկացած կարիքի և ցանկության դեպքում: Մենք ծոմ ենք

պահում, երբ որևէ ցանկություն կամ կարիք, որը միայն Աստված կարող է լրացնել, դուրս է մղում ժամանակավոր հաճույքները և դրդում է մեզ փնտրել Նրան:

– Մենք կարող ենք լինել այնպիսի նեղության մեջ և դրանից ազատվելու այնպիսի ձգտում ունենալ, որ մոռանանք կերակուրի մասին և հարատևենք աղոթքի մեջ:
– Մենք կարող ենք մի կողմ դնել կերակուրը և ժամանակավոր հաճույքները, քանի որ Աստված բացահայտում է որևէ մեղք մեր կյանքում և զգալ է տալիս, որ մենք հաշտության, վերականգնման և այդ մեղքին իշխելու հրատապ կարիք ունենք:

– Մենք կարող ենք մոռանալ մեր կերակուրի մասին, քանի որ նախանձավոր ենք Աստծո անվան համար, և քանի որ անօրենները նախատում են այն:

– Մենք կարող ենք այն աստիճան կլանված կամ մտահոգված լինել Եկեղեցու մաքրությամբ կամ ազգերի դարձի գալով, որ անտեսենք կերակուրը՝ բարեխոսության համար:

– Մենք կարող ենք մոռանալ ցանկացած միտք կերակուրի կամ ժամանակավոր հաճույքներին ձգտելու մասին, քանի որ ունենք բավականություն Աստծո ներկայության մեջ և ուրախություն Նրա հետ շարունակաբար հաղորդակցվելու պատճառով:

Որպես ամփոփում. քրիստոնյան կարող է ծոմապահություն կատարել բազմապիսի պատճառներով: Այնուամենայնիվ, ճշմարիտ ծոմապահության բոլոր դեպքերն ունեն մեկ ընդհանրություն. մենք ծոմ ենք պահում, երբ որևէ կարիք, տրտմություն կամ աստվածային ցանկություն այն աստիճան ուժգին և համակող է դառնում, որ մենք բառացիորեն «մոռանում ենք մեր հացն ուտելը», որպեսզի աղոթքով փնտրենք Աստծուն: Հետևյալ օրինակները կարող են օգտակար լինել:

Մի մարդ արտասահմանյան ճանապարհորդություն է ծրագրել և մի քանի տարի գումար է կուտակել դրա համար: Այնուամենայնիվ, մեկնելու պահին նրա երիտասարդ որդին ծանր հիվանդանում է: Այդ պահին նա չի զղջում իր երկար սպասված արձակուրդը կորցնելու մասին. նույնիսկ միտքն այդ մասին դուրս է մղվում նրանից. այն հեռացվում է անհամեմատ ավելի մեծ սիրո և կարիքի կողմից: Նմանապես, քրիստոնյան կարող է հրաժարվել կերակուրից և այլ ժամանակավոր հաճույքներից, քանի որ նա համակված է մեկ այլ քրիստոնյայի բժշկության, որևէ չավետարանված ազգախմբին Բարի լուրը հասցնելու կամ մի ամբողջ ազգի բարօրության ցանկությամբ: Նա չի զղջում, որ զրկվել է կերակուրից, շփումից կամ ժամանակավոր հաճույքներից. դրանք դուրս են մղվել նրա սրտից և մտքից ավելի ուժգին ցանկությամբ:

Մի անձնավորություն իմանում է, որ իր ոչ առաքինի արարքները ծանր անարգանք են բերել իր հոր վրա: Նա վախենում է այն վնասի պատճառով, որն ինքը հասցրել է իր հոր անվանը և խստորեն մեղադրում է ինքն իրեն: Նա ջանասիրաբար ձգտում է շտկել ամեն ինչ, ուղղել սխալը, գտնել իր հորը և ներում ստանալ նրանից: Նա այլևս չի կարողանում մտածել ժամանակավոր ուրախությունների, մտերիմ ընկերների հետ շփման կամ զվարճանքներից և կերակուրից ստացվող բավականության մասին: Նա պետք է գտնի իր հորը, բացատրի ամեն ինչ և հաշտվի նրա հետ: Նմանապես, քրիստոնյան կարող է հասկանալ, որ իր մեղքը ծանր անարգանք է բերել Աստծո վրա, և համակվել է աստվածային տրտմությամբ, վրդովմունքով, վախով, նաև ներում ստանալու ձգտմամբ ու ցանկությամբ: Նա չի կարողանա խաղաղություն և ուրախություն գտնել ոչ մի ժամանակավոր հաճույքի մեջ, քանի դեռ չի գտել Աստծուն աղոթքի մեջ և չի համոզվել, որ ներված է:

Մի կնոջ ամուսին կանչվել է զինվորական ծառայության հեռավոր երկրում: Ժամանակ առ ժամանակ նա այնքան է կարոտում իր ամուսնուն, որ մոռանում է իր կերակուրի մասին կամ հրաժարվում է դրանից: Ամուսնու հետ շփման ցանկությունը դուրս է մղում նույնիսկ իր առօրյա կարիքների և զվարճանքների ցանկությունը: Նա քանիցս կարդում է նրա նամակները, նայում է լուսանկարները և սպասում է նրա յուրաքանչյուր հեռախոսազանգին: Այն հատուկ պահերին, երբ նրա ամուսինը զանգում է, նա ամբողջ ցերեկը և

երեկոն անցկացնում է նրա հետ խոսելով: Ժամերն աննկատ են անցնում: Նա բաց է թողնում նախաճաշը, ճաշը և ընթրիքը՝ առանց նույնիսկ ամենաթեթև ափսոսանքի: Նրա ուրախությունն այնքա՜ն մեծ է, որ նա պառկում է մահճակալին, բայց հազիվ է կարողանում քնել, քանի որ շարունակ մտածում է նրա մասին: Նմանապես, քրիստոնյան կարող է հրաժարվել կերակուրից և ժամանակավոր հաճույքներից, քանի որ անսահմանորեն ցանկանում է փնտրել Աստծո ներկայությունն աղոթքի մեջ, հաղորդակցվել Նրա հետ և կարդալ Նրա Խոսքը: Ավելին՝ աղոթքի ժամանակ լինում են հատուկ պահեր, երբ Աստված հայտնում է Իր ներկայությունը՝ այցելելով քրիստոնյային, ով կլանվում է Նրանով և մոռանում է ամեն ինչ: Առավոտը, ցերեկը և երեկոն անցնում են մի ակնթարթի պես, և քրիստոնյան պառկում է քնելու՝ անասելի և փառավոր ուրախությամբ:

ՍՐՏԻ ԱՆՍԽԱԼԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

Մինչև այս գլուխն ավարտելը, անհրաժեշտ է նշել մի կարևոր փաստ: Ինչպես արդեն ցույց տվեցինք և դեռ ցույց ենք տալու, ծոմապահությունը պատվիրված չէ Նոր կտակարանում: Ավելին՝ ծոմապահությունը չպետք է պահանջել կամ պարտադիր դարձնել, և այն չպետք է վեհացնել՝ հասուն կամ հոգևոր լինելու չափանիշ դարձնելով: Այնուամենայնիվ, ծոմապահությունը կարող է լինել անսխալական ցուցանիշ, որը բացահայտում է, թե ինչպիսի ձգտումներ են իշխում մեզանում և ղեկավարում մեր կյանքը: Ինչպես որ ճշմարիտ ծոմապահությունը մատնանշում է փափագ Աստծո հանդեպ, կախվածություն Նրա զորությունից և մտահոգություն այլ մարդկանց համար, այնպես էլ ծոմապահությունն անտեսելը կարող է նշանակել անտարբերություն Աստծո հանդեպ, չափազանց մեծ ձգտում սեփական անձին և այս աշխարհի ժամանակավոր հաճույքներին կամ կախվածություն դրանցից:

Մի՞թե մենք այն աստիճան բավարարված ենք այս աշխարհով և դրա ժամանակավոր հաճույքներով, որ բոլորովին չենք փափագում Աստծուն և չենք ձգտում ավելի մեծ չափով վերապրել Նրա ներկայությունը: Մի՞թե մենք այն աստիճան բավարարված ենք մեր ներկա հոգևոր վիճակով, որ չունենք նախանձավորություն ավելի կերպարանվելու Աստծո կամքին և Քրիստոսի պատկերին: Մի՞թե մենք այն աստիճան անտարբեր ենք մարդկանց կարիքների և տառապանքի հանդեպ, որ երբեք նրանց համար ջերմեռանդորեն բարեխոսելու մղում չենք զգում: Որպես ամփոփում. մի՞թե մենք վտանգի մեջ չենք, եթե մեր ձգտումն Աստծո փառքի հանդեպ և ավելի սրբանալու ցանկությունն ու մտահոգությունը այլ մարդկանց կարիքների մասին հազվադեպ են գերազանցում կերակուրի և ժամանակավոր հաճույքների հանդեպ ունեցած մեր ցանկությունը: Ինչպես մենք կպարզենք այս ուսումնասիրությունից, Աստվածաշնչում ծոմապահությունը ներկայացված չէ որպես անհրաժեշտ և հաճախակի կատարվող գործողություն կամ ծրագրված արարողակարգ: Այնուամենայնիվ, եթե այն լիովին բացակայում է մեր կյանքից, դա կարող է նշանակել կա՛մ անտեղյակություն, կա՛մ անտարբերություն:

Գլուխ 4. Ծոմապահություն դեպի վեր

Մաս Մեկ. Փնտրել և երկրպագել Աստծուն

Մենք ցույց տվեցինք, որ ծոմապահությունը վավերական է և՛ քրիստոնյայի համար՝ անհատապես, և՛ եկեղեցու համար՝ հավաքական առումով: Այժմ կդիտարկենք ծոմապահության մի քանի սուրբգրային պատճառ կամ շարժառիթ երեք տարբեր տեսանկյունից՝ ***դեպի վեր***, ***դեպի ներս*** և ***դեպի դուրս***: Մենք կսկսենք ծոմապահությունից դեպի վեր. խոսքն այն ծոմապահության մասին է, որի նպատակն է փնտրել Աստծուն, ծառայել Աստծուն և հասկանալ Աստծո կամքը: Մինչև մեր ուսումնասիրությանն անցնելը հաշվի առեք, որ, թեև մենք դիտարկելու ենք ծոմապահության գլխավոր պատճառներից կամ շարժառիթներից մի քանիսը, այս ուսումնասիրությունը ոչ մի դեպքում սպառիչ չէ: Հավատացյալը և եկեղեցին կարող են ծոմապահության անթիվ պատճառներ ունենալ, որոնք ժամանակը և այս գրքի ձևաչափը թույլ չեն տա մեզ թվարկել:

ՓՆՏՐԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Համաձայն Աստվածաշնչի՝ յուրաքանչյուր հավատացյալ լիարժեք է Քրիստոսի մեջ (Կողոսացիների 2.10), նրանում բնակվում է Սուրբ Հոգին (Հռոմեացիների 8.9), և նրան շնորհված է որդիական հարաբերություն Հոր հետ (Հռոմեացիների 8.14-16, Գաղատացիների 4.6,7): Այնուամենայնիվ, այս աստվածաշնչյան իրողությունները չպետք է ինքնագոհ դարձնեն մեզ: Ընդհակառակը, մենք պետք է լիարժեք օգուտ քաղենք Քրիստոսի մեջ ունեցած մեր նոր դիրքից և ձգտենք ստանալ բոլոր թանկ և վեհ խոստումները, որոնք տրված են մեզ Սուրբ գրքում՝ խոստումներն Աստծուն ավելի լավ ճանաչելու, Նրա հետ ավելի մտերիմ լինելու և Նրա ներկայության, կյանքի և զորության ավելի մեծ դրսևորումը վերապրելու մասին: Այն, որ մենք ճաշակեցինք Աստծուն դարձի ժամանակ, պետք է համակի մեզ ավելին ճանաչելու և վերապրելու ցանկությամբ, և Նրա շնորհքի ամեն նոր դրսևորում պետք է դրդի մեզ անել անհնարինը՝ լիովին օգտագործել յուրաքանչյուր խոստում և արտոնություն, որ Նա շնորհել է մեզ: Երբեմն այս ցանկությունը կարող է այնքան անհաղթահարելի լինել, որ մենք կթողնենք մեր ժամանակավոր հաճույքները, որպեսզի ձգտենք ավելի մեծ լիության և բավականության Աստծո մեջ:

1. Ստորև ներկայացված են Սուրբ գրքի ամենագեղեցիկ և ազդեցիկ հատվածներից մի քանիսը Աստծո հանդեպ փափագի կամ քաղցի մասին: Ուշադրություն դարձրեք յուրաքանչյուրին և գրի առեք ձեր մտքերը: Ինչպե՞ս այս փափագը պետք է արտացոլվի մեր կյանքում:

   ա. *Սաղմոս 27.4*

   _____

   _____

   _____

   _____

բ. *Սաղմոս 42.1,2*

գ. *Սաղմոս 63.1*

2. Սաղմոս 4.6,7-ում Դավիթը հայտարարում է, որ Աստված դրեց ավելի մեծ ուրախություն իր սրտում, քան երբ ցորենի և նոր գինու առատություն կար: Իսկ Սաղմոս 34.8-ում Դավիթը խրատում է մեզ. «Ճաշա-

կե՛ք և տեսե՛ք, որ Տերը քաղցր է»: Ի՞նչ կերպով են այս հատվածներն ապացուցում, որ Աստված տալիս է ավելի մեծ բավականություն, քան կերակուրը: Ի՞նչ կերպով են դրանք խրախուսում մեզ որոշ ժամանակով մի կողմ դնել առօրյա հաճույքները, որպեսզի ճանաչենք Աստծուն և վերապրենք ավելի մեծ մտերմություն Նրա հետ:

ԵՐԿՐՊԱԳԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Աստծուն փնտրելու և ձգտելու մեր մեծագույն նպատակը Նրան երկրպագելն է: Մենք ստեղծվել և փրկագնվել ենք, որպեսզի երկրպագենք Նրան: Իրականում, չափազանցություն չէ ասելը, որ երկրպագությունը քրիստոնյայի կարևորագույն զբաղմունքն է: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ մենք պետք է երկրպագենք Նրան՝ ներկայացնելով մեր կյանքը որպես կենդանի զոհ (Հռոմեացիների 12.1,2) և կատարելով մեր բոլոր գործերը Նրա փառքի համար (Ա Կորնթացիների 10.31): Այնուամենայնիվ, Սուրբ գիրքը նույնպես կանչում է մեզ հատուկ պահերի, երբ մենք նվիրում ենք մեզ Տիրոջը երկրպագություն անելուն և ծառայություն մատուցելուն, ինչը մեծ արտոնություն է: Նման պահերին ծոմապահությունը կարող է մեծ օրհնություն լինել և մեծ օգուտ տալ:

1. Ղուկաս 2.36,37-ում գրված է Աննա մարգարեուհու մասին, ով Ասերի ցեղից էր: Նա անչափ նվիրված էր Աստծուն և սպասում էր Մեսիայի գալուստին: Ըստ 37-րդ խոսքի՝ ինչպե՞ս էր Աննան ցույց տալիս իր նվիրումը Տիրոջը: Ինչպե՞ս էր նա ծառայում Տիրոջը: Կարո՞ղ է քրիստոնյան անել նույնը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ծառայել» բառը թարգմանված է հունարեն ***«լատրեո՛ւո»*** բառից, որը նշանակում է և՛ ծառայություն, և՛ երկրպագություն (Մատթեոս 4.10, Փիլիպեցիների 3.3, Եբրայեցիների 10.2)։ Այն օգտագործված է Սուրբ գրքի վերջին գլխում՝ նկարագրելու համար մեր ծառայությունն Աստծուն նոր երկնքում և նոր երկրի վրա (Հայտնություն 22.3)։ Մենք հազվադեպ ենք մտածում, որ Տիրոջը երկրպագությամբ ծառայելն ընդգրկում է ծոմապահությունը և աղոթքը, սակայն ծոմապահությունը և աղոթքն այն ծառայության գործերից են, որոնք ամենից հաճելի են Նրան։ Սա հիշեցնում է մեզ, թե որքանով կարող ենք տրվել զբաղվածությանը Մարթայի պես և շեղվել բազմաթիվ գործերով։ Սակայն մենք կարող ենք շատ բան սովորել Մարիամից, ով ընտրեց «բարի բաժինը» և հանդարտորեն նստեց Հիսուսի ոտքերի մոտ (Ղուկաս 10.39-42)։

2. Միգուցե մենք կանչված չենք լիովին ընծայվելու ծոմապահությանը և աղոթքին, ինչպես Աննան։ Կան այլ առաջադրանքներ, որոնք պետք է կատարել, օրինակ՝ Մեծ Հանձնարարականը և Եկեղեցու շինությունը։ Այնուամենայնիվ, նույնիսկ ամենազբաղված հավատացյալները և ծառայողները պետք է սովորեն մի կողմ դնել իրենց գործերը և նվիրել իրենց Տիրոջը ծառայություն մատուցելուն։ Համաձայն Գործք 13.1,2-ի, ինչ էին անում Պողոս առաքյալը, մի քանի ուսուցիչներ և մարգարեներ և միգուցե Անտիոքի ամբողջ եկեղեցին անմիջապես այն բանից առաջ, երբ ծնվեց այս աշխարհին հայտնի մեծագույն միսիոներական շարժումներից մեկը։

   ա. *Տիրոջը Պ_____ (կամ՝ ծառայություն) էին Մ_____ և Ծ_____ էին պահում։* «Պաշտոն մատուցել»-ը թարգմանված է հունարեն ***«լեիտուրգե՛ո»*** բառից, որն օգտագործվում է նկարագրելու համար ղևտացի քահանաների ծառայությունը խորանում և տաճարում (Ելից 28.43, 29.30, Ղուկաս 1.23, Եբրայեցիների 10.11)։ Այժմ քրիստոնյան թագավորական քահանայության մաս է (Ա Պետրոս 2.9) և կանչված է օրհնության պատարագ մատուցելու Աստծուն (Եբրայեցիների 13.15)։ Հավատացյալի համար մեծ արտոնություն և օգուտ է նվիրել հատուկ ժամանակ Տիրոջը երկրպագություն անելուն և ծառայություն մատուցելուն։ Ծոմապահությունը կարող է հրաշալի ուղեկից լինել այս սուրբ և թագավորական գործերին։

3. Ի՞նչ սովորեցիք այս բաժնից, որը Տիրոջը աղոթքով և ծոմով ծառայելու մասին էր։ Ինչպե՞ս կարող եք կիրառել ձեր սովորածը ձեր կյանքում։

_____

_____

Գլուխ 5. Ծոմապահություն դեպի վեր

Մաս Երկու. Հասկանալ Աստծո կամքը

Քրիստոնեական կյանքը պետք է լիովին հիմնված լինի Աստծո կամքի վրա և ուղղորդվի Աստծո կամքով: Մենք պետք է համապատասխանեցնենք Նրա ծրագրին այն, ինչ մտածում ենք, խոսում ենք և անում ենք: Այնպես որ, մեզ համար էապես կարևոր է հասկանալ Աստծո կամքը: Հետևյալ նորկտակարանյան հատվածներից կտեսնենք, թե երբ են հավատացյալները ծոմ պահում հենց այս նպատակով: Սա չի նշանակում, որ մենք պետք է ծոմ պահենք յուրաքանչյուր որոշումից առաջ, որպեսզի իմանանք Աստծո կամքը: Այն, ինչ մեզ անհրաժեշտ է իմանալ Աստծո կամքի մասին մեր կյանքում, գրեթե ամբողջովին հայտնվում է մեզ Աստվածաշնչի միջոցով (Սաղմոս 119.9,105): Սուրբ գիրքը նույնպես հորդորում է մեզ խորհուրդ կամ խրատ ստանալ աստվածապաշտ մարդկանցից, երբ կարևոր որոշումներ ենք կայացնում (Առակաց 11.14, 12.15, 13.10): Այնուամենայնիվ, այն դեպքերը, երբ ճանապարհը պարզ չէ և անհրաժեշտ է լիարժեք վստահություն, պատեհ առիթներ են Տիրոջը երկրպագությամբ, աղոթքով և ծոմով փնտրելու համար:

1. Դանիել 9.2-ում գրված է, որ Դանիելը ձգտում էր հասկանալ Աստծո կամքը Երուսաղեմի ավերման և գերության մեջ գտնվողների վերադարձի վերաբերյալ՝ Երեմիայի մարգարեությունների միջոցով: Համաձայն 3-րդ խոսքի, ինչպե՞ս էր Դանիելը փնտրում պատասխաններ իր հարցերին: Համաձայն 21-23-րդ խոսքերի, ինչպե՞ս Աստված պատասխանեց նրան: Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածներից ծոմապահության և Աստծո կամքի մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կամքը հայտնվում է մեզ Սուրբ գրքի միջոցով. այնպես որ, մենք կախված չենք երազներից, տեսիլքներից կամ հրեշտակային այցելություններից: Այնուամենայնիվ, Սուրբ գրքի ճշմարտությունները հոգևորապես են հասկացվում, և դրա համար անհրաժեշտ է Սուրբ Հոգու լուսավորումը (Ա Կորնթացիների 2.12-16): Այդ իսկ պատճառով, մենք պետք է կարդանք Աստվածաշունչը՝ գիտակցելով, որ կախված ենք Աստծուց՝ այն հասկանալու համար, և խնդրելով Նրան սովորեցնել մեզ: Ինչպես տեսնում ենք Դանիելի օրինակից, ծոմապահությունը կարող է ունենալ իր դերը Աստծո կամքը փնտրելու և հասկանալու մեջ:

2. Երեցների (հովիվների) նշանակումը եկեղեցում ամենակարևոր որոշումներից է եկեղեցական համայնքի համար: Այնպես որ, անչափ կարևոր է, որ եկեղեցին հստակ հասկանա Աստծո կամքն այս հարցում: Ինչ էր ընդգրկված երեցների ընտրության և նշանակման մեջ Գործք 14.22-ում:

   ա. *Ա_____ արեցին՝ Ծ_____ պահելով:* Թեև ընտրության և նշանակման գործընթացում ներգրավված էին Առաջին եկեղեցու երկու ամենապատվելի առաջնորդները (Պողոս առաքյալը և Բառնաբասը), հավատացյալները, միևնույն է, աղոթեցին և ծոմ պահեցին: Մենք չպետք է անտարբեր լինենք Աստծո կամքի վերաբերյալ կամ ուղղակի ենթադրենք, որ Նա կառաջնորդի մեզ՝ անկախ այն բանից, թե ինչպես ենք վարվում: Փոխարենը, մենք պետք է ջանասեր լինենք և գործադրենք մեզ տրված բոլոր միջոցները՝ Նրա կամքը հստակորեն հասկանալու և ճիշտ որոշումներ կայացնելու համար: Այս ճշմարտությունն ազդեցիկ կերպով երևում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի կյանքում. Նա աղոթեց ամբողջ գիշեր՝ մինչև տասներկու առաքյալներին ընտրելը և կարգելը (Ղուկաս 6.12,13): Նույնպես կարևոր է նշել, որ այս օրինակները հիմք չեն երեցներ ընտրելուց առաջ ծոմապահությունը ***պարտադիր դարձնելու*** համար. դրանք միայն ցույց են տալիս, որ ծոմապահությունը ***պատշաճ*** է այն դեպքերում, երբ այն անհրաժեշտ է համարվում: Պողոս առաքյալը չի նշում ծոմապահությունը երեցներին վերաբերող երկու ամենակարևոր հատվածներում (Ա Տիմոթեոս 3.1-7, Տիտոս 1.5-9):

3. Գործք 13.1-3-ում ականատես ենք դառնում ճշմարտապես արտասովոր երևույթի՝ այս աշխարհին հայտնի մեծագույն միսիոներական շարժումներից մեկի ծնունդին: Աստված Սուրբ Հոգու միջոցով առաջնորդեց Անտիոքի եկեղեցուն առանձնացնել Բառնաբասին և Սողոսին (Պողոս առաքյալին)՝ հեթանոսներին ավետարանելու համար: Համաձայն 2-րդ խոսքի, ինչ պայմաններում Աստված հայտնեց Իր կամքն այդ եկեղեցուն: Ինչ էին անում հավատացյալները: Ինչ կարող ենք սովորել դրանից:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Երբ Անտիոքի հավատացյալներն իրենց նվիրել էին երկրպագությանը և ծոմապահությանը, Տերը հայտնեց նրանց Իր կամքը հեթանոսներին Ավետարանը հասցնելու վերաբերյալ և ցույց տվեց, թե ովքեր պետք է առաջնորդեին այդ աշխատանքը՝ Բառնաբասը և Սողոսը (Պողոս առաքյալը): Այս հատվածը հայտնում է մեզ հետևյալ ճշմարտությունը. որքան ավելի ենք ժամանակ հատկացնում, որ մոտենանք Աստծուն երկրպագությամբ, աղոթքով և նույնիսկ ծոմապահությամբ, այնքան ավելի կհասկանանք Նրա կամքը և այնքան ավելի օգտակար կդառնանք Նրա նպատակների համար:

4. Աստված ողորմածաբար և հստակ հայտնում է մեզ Իր կամքը Սուրբ գրքում: Աստվածաշունչը նույնպես խրատում է մեզ խորհուրդ կամ խրատ հարցնել աստվածապաշտ հասուն քրիստոնյաներից, որոնք կարող են օգնել մեզ հասկանալ Աստծո կամքը: Այնուամենայնիվ, լինում են նաև պահեր, երբ անհրաժեշտ է կարևոր որոշումներ կայացնել, և ճանապարհը պարզ չէ: Այդ պահերին մենք կարող ենք փնտրել Աստծո կամքը՝ աղոթքի և ծոմապահության միջոցով: Ստորև թվարկեք այն կարևոր որոշումները, որոնք կայացնելու համար դուք պետք է փնտրեք Աստծուն՝ ծոմապահության միջոցով:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Տիրոջն աղոթքի մեջ փնտրելու ժամանակ Սուրբ Հոգին կարող է տպավորել Իր կամքը մեր սրտին կամ մտքին: Այնուամենայնիվ, մենք պետք է զգույշ լինենք: Բոլոր տպավորությունները չէ, որ Աստծուց են, և մեր սրտերն ու մտքերը կարող են հեշտորեն խաբվել: Աստծո կամքի միակ անսխալական չափանիշը Սուրբ գիրքն է: Այնպես որ, մենք պետք է համեմատենք բոլոր մտքերը, տպավորությունները և մարդկանց խորհուրդները Սուրբ գրքի անսխալական խոսքերի հետ: Մենք պետք է մերժենք այն ամենը, ինչը հակասում է ***գրվածին***:

Գլուխ 6. Ծոմապահություն դեպի ներս

Մաս Մեկ. Բացահայտել մեղքը

Նախորդ գլուխներում դիտարկեցինք հավատացյալների ծոմապահության երեք անչափ կարևոր պատճառ՝ Աստծուն փնտրելը, Աստծուն երկրպագելը և Աստծո կամքը հասկանալը: Այս և հաջորդ երկու գլուխներում կդիտարկենք ***ծոմապահությունը դեպի ներս***, որի նպատակն է սեփական անձի ստուգումը, ապաշխարությունը և հաղթանակը մեղքի հանդեպ:

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Ծոմապահությունը գերազանց պայմաններ է ստեղծում փորձության և սեփական անձը ստուգելու համար: Հեռացնելով կերակուրի հաճույքը և հարմարավետությունը՝ մենք կարողանում ենք ավելի պարզ տեսնել մեր «իրական դեմքը»: Սա ծոմապահության ամենաօգտակար կողմերից է, որը, սակայն, հաճախ անտեսվում է հավատացյալների մեծ մասի կողմից:

Մեզ համար շատ ավելի հեշտ է աստվածապաշտ վարք ցուցաբերել և քողարկել մեր բնավորության ծածուկ թերությունները, երբ մեր հիմնական կարիքները լրացված են, և մեր հանգամանքները բարենպաստ են: Մելամաղձոտ մարդը կարող է ուրախ վարք ցուցաբերել, երբ ամեն ինչ ընթանում է իր ուզածով: Ագահ մարդը կարող է առատաձեռն լինել, երբ ինքը բարգավաճում է: Անհամբեր մարդը կարող է երկայնամտությամբ վարվել այլ մարդկանց հանդեպ, երբ իր հանգամանքները նպաստավոր են: Այնուամենայնիվ, երբ հանգամանքները վատանում են, դա արտացոլվում է նրանց վարքի վրա, և հաճախ ի հայտ է գալիս նրանց իրական բնավորությունը:

Այս ճշմարտությունն ավելի լավ պատկերելու համար, մտածենք, թե ինչպես ենք արդարանում մեր բարկացկոտ և անհամբեր վարքի համար: Հաճախ մենք ասում ենք, որ այդ պահերին «ասես մենք չլինեինք»՝ որոշակի մարմնական տկարության կամ դժվարին հանգամանքի պատճառով: Այնուամենայնիվ, ճշմարիտ է հենց հակառակը: Տկարությունը կամ դժվարին հանգամանքն ի հայտ է բերում իրական անձը, որը քողարկված էր ավելի հարմարավետ հանգամանքներով: Նշանակում է՝ նեղությունը ոչ թե բարկացկոտ և անհամբեր դարձրեց մեզ, այլ ի հայտ բերեց մեզանում թաքնված բարկացկոտությունը և անհամբերությունը: Այսպիսով, մենք բացահայտում ենք, որ հաճախ նման ենք երեխաների, որոնք, թվում է, հանդարտ են և լավ վարք ունեն, քանի դեռ նրանցից չեն վերցրել այն, ինչ իրենց դուր է գալիս: Այդ ժամանակ նրանց մոտ զայրույթի պոռթկում է սկսվում. ի հայտ է գալիս նրանց իրական բնավորությունը:

Թեև մենք չպետք է նպատակաուղղված ձգտենք անբարենպաստ հանգամանքների կամ նեղությունների՝ մեր հավատքը և բնավորությունը ստուգելու համար, դրանք մեր կյանքում կատարվող Աստծո սրբացման աշխատանքի կարևոր մասն են, և մենք պետք է ընդունենք (Հռոմեացիների 5.3, Հակոբոս 1.2): Աստվածաշնչյան ծոմապահությունը ծառայում է սրբացմանը գրեթե նույն կերպով, ինչ նեղությունը, քանի որ այն ոչ միայն հեռացնում է ինչ-որ հիմնարար կարիք, այլև վերցնում է մեզնից այն, ինչը շատերի համար սխալմամբ դարձել է ուրախության և մխիթարության գլխավոր աղբյուրը՝ կերակուրը և դրան ուղեկցող շփումը: Մեր իրական բնավորությունը բացահայտվում է ծոմապահության միջոցով, երբ հեռացվում են ժամանակավոր հաճույքների արտաքին հենարանները, և մենք հնարավորություն ենք ստանում ազատվել մեր ծածուկ մեղքերից՝ ապաշխարության և Քրիստոսից ավելի մեծ կախվածություն ձեռք բերելու միջոցով:

ՀԱՍԿԱՆԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

1. Մատթեոս 4.1-11-ում գրված է Հիսուսի փորձության մասին անապատում: Առաջինից երրորդ խոսքերում բացահայտում ենք երեք ճշմարտություն, որոնք կարող են վերաբերել ծոմապահության մեջ գտնվող հավատացյալին:

   ա. *Հիսուսը Հ_____ Ա_____ Տ_____ (խս. 1):* Մարկոսի Ավետարանում գրված է, որ Հոգին բառացիորեն «հանեց» կամ «վտարեց» Հիսուսին անապատ (1.12): Իրականում, Մարկոսն օգտագործում է նույն հունարեն բառը (***«Էկբա՛լլո»***), որն օգտագործվում է՝ նկարագրելու համար դևեր «հանելը»: Գաղափարն այն է, որ Աստծո կամքն էր, որ Քրիստոսը փորձվեր անապատում: Նմանապես, Աստծո կամքն է, որ հավատացյալներն անցնեն փորձության ժամանակներով, որպեսզի նրանց ճշմարիտ բնավորությունն ի հայտ գա, և նրանք փոխեն այն՝ ապաշխարությամբ և հավատքով (Ա Պետրոս 1.6,7):

   բ. *Հիսուսը Ս_____:* Քրիստոսի ճշմարիտ բնավորությունն ի հայտ եկավ, երբ Նա վատագույն հանգամանքներում էր՝ առանց նույնիսկ կյանքի հիմնական հաճույքների՝ կերակուրի և շփման: Անապատը և ծոմապահությունը դարձան այն հալոցը, որը բացահայտեց Քրիստոսի իրական խառնվածքը (Եբրայեցիների 4.15): Ծոմապահության դերն այստեղ ակնհայտ է: Կերակուրի և դրան հաճախ ուղեկցող շփման հաճույքներից զրկված՝ մեր ճշմարիտ բնավորությունն է՛լ ավելի պարզորեն է երևում, և մեղքն է՛լ ավելի պարզորեն է բացահայտվում: Մենք հնարավորություն ենք ստանում հաղթահարել մեր ծածուկ մեղքերը՝ ապաշխարությամբ և հավատքով:

   գ. *Փ_____ Նրա մոտ գալով... (խս. 3):* Ինչպես Քրիստոսի անապատային փորձության մեջ, սատանան կարող է մոտենալ մեզ, երբ մենք ծոմ ենք պահում, որպեսզի մեղադրի, դատապարտի և գայթակղեցնի: Այնուամենայնիվ, նրա չարիքը կարող է վերածվել բարիքի մեզ համար, եթե մենք հակառակվենք նրան, մոտենանք Աստծուն, սրբենք մեր ձեռքերը և մաքրենք մեր սրտերը (Հակոբոս 4.7,8): Յուրաքանչյուր բացահայտված մեղք պետք է դրդի մեզ խոստովանության: Յուրաքանչյուր գայթակղություն պետք է ձևավորի մեզանում ավելի մեծ կախվածություն Աստծուց:

2. Հիմնվելով այն ճշմարտությունների վրա, որոնք քաղեցինք Մատթեոս 4.1-3-ից, ինչպե՞ս ծոմապահությունը կարող է օգնել մեզ հնազանդվել Ողբ Երեմիայի 3.40-ում գրված հորդորին. «Քննենք մեր ճանապարհները և փորձենք և ետ դառնանք Տիրոջը»:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ Հին կտակարանում ծոմապահությունն ամենից հաճախ առնչվում է մեղքի պատճառով կոտրվածության, ապաշխարության և խոստովանության հետ: Այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ, որ ծոմապահությունն անհրաժեշտ չէ՝ Աստծուց ներում ստանալու համար: Մենք ներում և վերականգնում ենք ստանում իրական ապաշխարության և Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով: Ծոմապահությունը պարզապես արձագանք է այն հավատացյալի կողմից, ով հասկացել է իր մեղքի զարհուրելի բնույթը և այնքա՜ն կոտրված է իր հանցանքի պատճառով, այնքա՜ն է վախենում մեղքի կործանարար հետևանքներից, և այնքա՜ն է ցանկանում շտկել ամեն ինչ, որ բոլոր ժամանակավոր հաճույքները մոռացվում են՝ Աստծո հաղորդակցությունը և օգնությունը փնտրելու համար:

1. Երկրորդ Կորնթացիների 7.11-ում տեսնում ենք ճշմարիտ աստվածաշնչյան ապաշխարության ազդեցիկ օրինակ: Ցույց տվեք դրա յուրաքանչյուր հատկանիշը՝ համաձայն այս խոսքի:

   ա. *Ա*_____ *Ու*_____ *Կ*_____ *Տ*_____: «Աստծո ուզած կերպով» բառակապակցությունը թարգմանված է հունարեն ***«կատա՛ թեոն»*** կամ «դեպի Աստված» բառակապակցությունից: Աստծո ուզած կերպով տրտմությունն ուղղված է Աստծուն: Ճշմարտապես ապաշխարող մարդը չի տրտմում՝ միայն, որովհետև իր հանցանքը կամ իր մեղքի հետևանքն ազդել է իր վրա. առաջին հերթին նա տրտմում է, որովհետև ինքը վիրավորանք է հասցրել Աստծուն:

   բ. *Ջ*_____: Հունարեն ***«սպուդե»*** բառից, որը նշանակում է աշխատասիրություն և ջանասիրություն, կամ ճիշտ վարվելու լուրջ և եռանդուն ցանկություն:

   գ. *Ա*_____: Հունարեն ***«ապոլոգի՛ա»*** բառից, որը նշանակում է բանավոր պաշտպանություն կամ որևէ մեկի բարի անվան վերականգնում: Ճշմարտապես ապաշխարող հավատացյալը ցանկանում է ճիշտ վարվել՝ ապացուցելու համար իր նորոգված նվիրումն Աստծո կամքին և իրեն արդարացնելու համար: Նա ցանկանում է ապաշխարության արժանի պտուղ բերել (Մատթեոս 3.8):

   դ. *Հ*_____: Հունարեն ***«ագանակտեսիս»*** բառից, որը նշանակում է վրդովմունք, բարկություն և սրտնեղություն: Շատ իրական իմաստով, ճշմարտապես ապաշխարած հավատացյալը բարկանում է ինքն իր վրա այն մեղքի պատճառով, որը գործել է (Եփեսացիների 4.26,27):

   ե. *Վ*_____: Այս բառը վերաբերում է Աստծո երկյուղին՝ Նրա կամքից դուրս մնալու և սեփական մեղքի կործանարար ազդեցության վախին: Այն ապացուցում է, որ ապաշխարած հավատացյալն իրապես գիտակցում է մեղքի զարհուրելի և վտանգավոր հետևանքները:

   զ. *Փ*_____: Հունարեն ***«էպիպո՛թեսիս»*** բառից, որը նշանակում է ջերմեռանդ, կրակոտ և նույնիսկ անզուսպ ցանկություն կամ փափագ: Ճշմարտապես ապաշխարած հավատացյալը փափագում է սրբության, վերականգնման և նորոգված շփման Աստծո և այլ հավատացյալների հետ:

է. *Ն*_____*:* Հունարեն ***«զելո՛ն»*** բառից, որը նշանակում է ավյուն կամ սաստիկ նվիրում: Այն անտարբերության հականիշն է:

ը. *Վ*_____*:* Հունարեն ***«էկդիկեսիս»*** բառից, որը նշանակում է արդարության իրագործում և նույնիսկ վրեժխնդրություն: Այն ուղղված չէ որևէ մարդու, այլ վերաբերում է հավատացյալի արդարադատություն իրականացնելու և սխալները շտկելու որոշմանը:

2. Ինչպես արդեն նշեցինք, ամբողջ Հին կտակարանում ծոմապահությունը հաճախ առնչվում է ապաշխարության հետ: Ստորև ծոմապահությամբ ուղեկցվող թե՛ անձնական, թե՛ հավաքական ապաշխարության մի քանի օրինակներ են: Դրանք պատկերում են այն ճշմարտությունների մեծ մասը, որոնք բացահայտեցինք Բ Կորնթացիների 7.11-ում: Ամփոփե՛ք յուրաքանչյուր հատվածը ձեր բառերով: Ի՞նչ կարող ենք սովորել ապաշխարության և ծոմապահության մասին այս հատվածներից:

ա. *Նեեմիա 1.3-10*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Նեեմիայի ծոմապահության գլխավոր կետերը հետևյալն են. սուգ և ողբ Աստծո ժողովրդի նեղության և անարգության պատճառով (խոսքեր 3,4), աղոթք (խս. 4), մեղքի խոստովանություն (խոսքեր 6,7) և փրկության աղաչանք՝ հիմնված Աստծո բնավորության (խս. 5) և խոստումների (խս. 8-10) վրա:

բ. *Նեեմիա 9.1-3*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Իսրայելի ծոմապահության գլխավոր կետերը հետևյալն են. խոնարհություն և սուգ (խս. 1), առանձնացում անօրեններից (խս. 2), մեղքի խոստովանություն և երկրպագություն (խոսքեր 2,3) և ընթերցումներ Աստծո Օրենքից (խս. 3)։ Ուշադրություն դարձրեք, որ գոյություն ունի անմիջական կապ Աստծո Խոսքի կամ Օրենքի և հավատացյալի կյանքում մեղքի բացահայտման և խոստովանության միջև։ Կոտրվածությունը, խոստովանությունը և ծոմապահությունը պետք է լիովին հիմնված լինեն Աստծո կամքի հայտնության վրա, որը տրված է Նրա Խոսքի միջոցով։

գ. *Դանիել 9.3-5,17-19*

ՆՇՈՒՄՆԵՐ. Դանիելի ծոմապահության գլխավոր կետերը հետևյալն են. աղոթք և աղաչանք ներման և վերականգնման համար (խոսքեր 3,17-19), խոնարհություն և սուգ, որոնք արտահայտվում են քուրձով և մոխրով (խս. 3), դավանություն Աստծո հավատարմության մասին (խս. 4) և Աստծո ժողովրդի մեղքերի խոստովանություն (խս. 5)։ Ուշադրություն դարձրեք, որ Դանիելի աղաչանքի հիմքը Իսրայելի ներման համար ո՛չ Իսրայելի արժանիքներն էին, ո՛չ էլ Դանիելի ծոմապահության արժանիքը, այլ Աստծո բնավորությունը (խս. 18)։

դ. *Հովել 2.12,13*

ՆՇՈՒՄՆԵՐ. Ծոմապահության գլխավոր կետերը, որոնք հայտնում է Հովել մարգարեն, հետևյալն են. դեպի Տերը ետ դառնալը նշանակում է շրջվել մեղքից (խս. 12), իրական կոտրվածությունն ի հայտ է գալիս լացով և սուգով (խոսքեր 12,13), ինչպես նաև Տիրոջ բնավորությանը և խոստումներին հուսալով (խս. 13)։ Ուշադրություն դարձրեք, որ ծոմապահությունը երբեք չպետք է վերածվի արտաքին ծեսի (այսինքն՝ տրտմության արտաքին ցուցադրության, ինչպիսին է հանդերձները պատռելը)։ Ճշմարիտ ծոմապահությունը ներքին իրողության (այսինքն՝ մեղքի պատճառով ճշմարիտ տրտմության կամ սիրտը պատռելու) արդյունք է։

ե. *Հովնան 3.4-10*

ՆՇՈՒՄՆԵՐ. Նինվեի ծոմապահության գլխավոր կետերը հետևյալն են. հավատք Աստծո Խոսքի հանդեպ (խս. 4), խոնարհություն մեծից՝ փոքրի մոտ, նույնիսկ՝ թագավորի (խոսքեր 5,6), սուգ, որն արտահայտվում է քուրձով և մոխրով (խոսքեր 6-8), ջանասեր աղոթք (խս. 8), ուրացում և հեռացում մեղքից (խս. 8) և հույս՝ Աստծո ողորմությանը (խոսքեր 9,10)։

3. Գործք 9-րդ գլուխը պատմում է Առաջին եկեղեցու ամենամեծ հալածող տարսոնացի Սողոսի դարձի գալու մասին։ Դամասկոսի ճանապարհին փառավորված Հիսուսին հանդիպելուց հետո Սողոսը կուրացավ, և նրան ձեռքից բռնած քաղաք տարան։ Համաձայն 9-րդ խոսքի՝ ի՞նչ արեց Սողոսն առաջին հերթին այդ հանդիպումից և իր դարձի գալուց հետո։ Ի՞նչ կարող ենք սովորել այս իրադարձությունից ապաշխարության և ծոմի մասին։

ՆՇՈՒՄՆԵՐ. Հարություն առած Հիսուսին հանդիպելուց հետո Պողոսը բախվեց ներքին ճգնաժամի. նրա ամբողջ պատկերացումն իրականության մասին ի չիք դարձավ: Նա հասկացավ, որ սխալ էր ամեն ինչի վերաբերյալ: Թեև նա ֆիզիկապես կուրացել էր, առաջին անգամ կյանքում նա լույս էր տեսնում: Պողոսի շրջադարձային ապաշխարությունը և նրա անմիջական արձագանքը չպետք է օրինակ համարվեն բոլոր հավատացյալների համար: Այնուամենայնիվ, կան որոշ բաներ, որոնք կարող ենք սովորել նրա փորձառությունից: Առաջինը՝ մեր օրինազանցությունը լուրջ հարց է, որին չպետք է թեթևորեն վերաբերվել: Երբ Աստված հայտնում է մեզ մեր մեղքը, մենք պետք է արձագանքենք դրան լուրջ խորհրդածությամբ: Երկրորդը՝ ցանկացած հայտնություն ճշմարտության մասին լուրջ հարց է, քանի որ մենք դառնում ենք այդ ճշմարտության տնտեսը: Մենք երբեք չպետք է անփութորեն վարվենք ճշմարտության հետ: Մենք պետք է հսկենք այն մեր սրտերում, մտորենք դրա նշանակության շուրջ և որոշենք, թե ինչպես պատշաճ կերպով արձագանքել դրան: Երրորդը՝ կան լուրջ և կարևոր ճշմարտություններ, որոնք պահանջում են առանձնացում առօրյա կյանքից՝ հասկանալու համար, թե ինչ է Տերն արել և ինչ է ցանկանում անել մեր կյանքում: Ծոմապահությունը կարող է դառնալ այս գործունեության կարևոր մասը, հատկապես հաշվի առնելով մեր ժամանակի թեթևամտությունը և զբաղվածությունը:

4. Աստվածաշնչում կա ծոմապահությամբ ուղեկցվող ապաշխարության մեկ օրինակ, որն առանձնանում է մյուսներից՝ որպես Աստծո ողորմության և ներողամտության դրսևորում: Սուրբ գիրքը պատմում է, որ Աքաաբ թագավորը չարիք գործեց Տիրոջ առջև ավելի, քան նրանից առաջ բոլոր եղածները (Գ Թագավորաց 16.30), և արեց ավելին՝ Իսրայելի Տեր Աստծուն բարկացնելու համար, քան Իսրայելի բոլոր թագավորները, որ նրանից առաջ էին (Գ Թագավորաց 16.33): Ի պատասխան Աքաաբի չարությանը՝ Աստված ուղարկեց Եղիա մարգարեին, որը սարսափելի դատաստան ազդարարեց նրա կյանքում: Համաձայն Գ Թագավորաց 21.27-29-ի, ինչպե՞ս արձագանքեց Աքաաբը, և ինչպե՞ս Աստված վարվեց Աքաաբի հետ: Ի՞նչ է սա սովորեցնում մեզ Աստծո բնավորության մասին: Ինչպե՞ս կարելի է կիրառել այս ճշմարտությունները հավատացյալի կյանքում:

ՆՇՈՒՄՆԵՐ. Տերը ողորմած և գթած է, երկայնամիտ է և առատ ողորմությամբ և ճշմարտությամբ (Ելից 34.6,7)։ Եթե Աստված այդքան կամենում էր ներել չար Աքաաբ թագավորին, մի՞թե Նա նույնպես չի ցանկանա ներել Իր զավակներին։ Հռոմեացիների 8.31-35-ում Պողոս առաքյալը հարցնում է. «Ապա ի՞նչ ասենք այս բաների համար. եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ։ Որ Իր Որդուն էլ չխնայեց, այլ մեր ամենի համար մատնեց Նրան, էլ ինչպե՞ս Նրա հետ ամեն բան չի շնորհի մեզ։ Ո՞վ է, որ Աստծո ընտրվածների դեմ մեղադիր լինի. Աստված է, որ արդարացնում է։ Ո՞վ է, որ դատապարտի. Քրիստոսը, որ մեռավ, և ավելի՝ որ հարություն էլ առավ և Աստծո աջ կողմն է, որ մեզ համար Բարեխոս էլ է։ Ապա ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց»։

Գլուխ 7. Ծոմապահություն դեպի ներս

Մաս Երկու. Պայքարել մեղքի դեմ

Ապաշխարությունն ինքնանպատակ չէ. մենք պետք է ցանկանանք աճել շնորհքով, տիրապետել մեր անձին և հաղթել մեղքը: Ամենից հաճախ հիշատակվող միջոցները, որոնցով կարող ենք շնորհք ստանալ սրբացման մեջ աճելու համար, Աստծո Խոսքն է (ուսուցումը, մտորումը և անգիր սովորելը) և աղոթքը, սակայն ծոմապահությունը նույնպես կարող է օգտակար միջոց լինել մեղքի հանդեպ ավելի մեծ հաղթանակ տանելու և մարմնի ցանկություններին առավել տիրապետելու համար:

ՀԱՂԹԱՆԱԿ ՄԵՂՔԻ ՀԱՆԴԵՊ

Քրիստոնյան ազատված է մեղքի դատապարտությունից (Հռոմեացիների 8.1) և այլևս ստրկացված չէ մեղքին (Հռոմեացիների 6.6): Այնուամենայնիվ, քրիստոնյան ազատ չէ մեղքի դեմ պայքարից (Գաղատացիների 5.17): Մարմնական բնությունը, այս աշխարհը և սատանան միաբանվել են քրիստոնյայի դեմ, որպեսզի պարտության մատնեն նրան և կործանեն նրա վկայությունը: Այնպես որ, մենք պետք է անենք այն, ինչ մեր ուժերի մեջ է՝ հաստատ կանգնելու համար: Աստծո Խոսքի ուսումնասիրությունը և կիրառումը, ինչպես նաև նվիրումն աղոթքին՝ մեր տրամադրության ներքո գտնվող միակ միջոցները չեն շնորհք ստանալու համար: Եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում ծոմապահությունը նույնպես օգտագործվել է որպես մեղքի հետ պայքարող հավատացյալին զորացնելու միջոց:

Ցանկացած աստվածաշնչյան ուսումնասիրության մեջ մենք պետք է թույլ տանք, որ Սուրբ գիրքը խոսի իր փոխարեն: Մենք պետք է ստանանք մեր վարդապետությունը Խոսքից, ոչ թե առանձնացնենք որոշ հատվածներ համատեքստից՝ մեր սեփական վարդապետությունը կազմելու համար: Սուրբ գրքում չկա ոչ մի խոսք, որն ուղղակիորեն նշում է, որ ծոմապահությունը մեղքի հանդեպ հաղթանակ տանելու միջոց է, և որ դրա շնորհիվ մենք կարող ենք հաղթել որևէ մեղք, որն ընկճում է կամ հեշտորեն պաշարում է մեզ (Եբրայեցիների 12.1): Այնուամենայնիվ, ծոմապահությունը հիշատակվում է աղոթքի հետ՝ որպես հոգևոր գործողություն, որի նպատակն է օգնել Աստծո թագավորության առաջխաղացմանը և մեր անձնական առաջընթացին աստվածապաշտության մեջ (Մատթեոս 6.5,16): Ավելին, ծոմապահությունը հաճախ հիշատակվում է աղոթքի հետ միասին մեծ կարիքի ժամանակ, երբ Աստծո բարեհաճությունը և զորությունը բացարձակ անհրաժեշտություն են՝ խոստովանության, ապաշխարության, թշնամիներից ազատվելու աղաչանքների, հիվանդությունների և դժբախտությունների ժամանակ: Այնպես որ, գոյություն ունի սուրբգրային հիմք՝ ընդգրկելու համար ծոմապահությունն այն միջոցների շարքում, որոնցով ձգտում ենք հաղթել մեղքը: Սա հատկապես ճշմարիտ է, երբ մենք պայքարում ենք այնպիսի մեղքերի դեմ, որոնք, թվում է, հաստատվել են մեր կյանքում և շարունակում են հաղթել մեզ:

ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ

Երանելիների մեջ Հիսուսը սովորեցրեց, որ սրտով մաքուրներն օրհնված են լինելու (Մատթեոս 5.8): Սա բառացիորեն վերաբերում է այն մարդուն, ով չի տատանվում իր նվիրման մեջ: Ավելի ուշ՝ Լեռան քարոզի մեջ, Հիսուսը զգուշացրեց Իր աշակերտներին, որ նրանք չէին կարող ծառայել ավելի, քան մեկ տիրոջ, քանի որ նրանք կատեին մեկին և կսիրեին մյուսին, կամ կնվիրվեին մեկին և կարհամարհեին մյուսին (Մատթեոս 6.24): Այս պատճառով քրիստոնյան պետք է ջանասիրաբար քննի Իր սիրտը և անի այն, ինչ կախված է իրենից՝ համոզվելու համար, որ ո՛չ մեղքը, ո՛չ էլ այն բարի բաները, որոնք միգուցե Տերը տվել է նրան՝ վայելելու

համար, չեն տիրապետում իրեն: Այն, որ հավատացյալը սկսում է գնահատել պարգևն ավելի, քան Պարգևողին, անսովոր երևույթ չէ: Շնորհիվ ծոմապահության, մենք կարող ենք բացահայտել այլ սիրեկանների և այլ տերերի մեր կյանքում, որպեսզի հեռացնենք նրանց ապաշխարության և հավատքի միջոցով:

Ծոմապահության այս կողմը հատկապես կարևոր է քրիստոնեական կյանքի համար զարգացած երկրներում, որոնցում կա բարգավաճման և կյանքի հարմարավետության որոշակի մակարդակ: Բարգավաճումը և ազատությունը մեծ նեղություններից ինքնին չարիք չեն: Այնուամենայնիվ, դրանք գայթակղեցնում են հավատացյալին ստանալ կյանքի նպատակ, մխիթարություն, ուրախություն և բավականություն նյութական իրերից, նպաստավոր հանգամանքներից և ժամանակավոր հաճույքներից, ոչ թե Աստծուց: Սա կարող է հավատացյալի սրտում հանգեցնել ծածուկ կռապաշտության: Ժամանակավոր օրհնություններից հեռանալը և աղոթքին ու ծոմին նվիրվելը կարող են բացահայտել այդ թաքնված կուռքերը և օգնել մեզ տիրապետել դրանց:

1. Առաջին Կորնթացիների 6.12-ում Պողոս առաքյալը շտկում է սխալական ուսմունքն այն մասին, որ քրիստոնյան ազատորեն կարող է մասնակցություն ունենալ ցանկացած բանում, ինչում կամենա: Ըստ առաքյալի խոսքերի՝ մեր ազատությունը սահմանափակվում է այնպիսի բաներով, որոնք օգտակար են մեր աճին և աստվածապաշտությանը: Դրանից հետո նա մի ազդեցիկ պնդում է անում, որը վերաբերում է ոչ միայն Սուրբ գրքին հակառակ բաներ ցանկանալուն, այլև Սուրբ գրքի կողմից հավանություն ստացած բաներ ցանկանալուն:

   ա. *Ես չպիտի Մ_____ Բ_____ Ի_____ տակ լինեմ:* «Իշխանություն» բառը թարգմանված է հունարեն ***«էքսուսիա՛զո»*** բառից, որը նշանակում է. «ունենալ զորություն կամ իշխանություն ինչ-որ մեկի վրա» կամ «տիրապետել ինչ-որ մեկին»: Հիսուսը հռչակեց, որ Իրենն է ամբողջ իշխանությունը (նույն բայի գոյականական ձևը) երկնքում և երկրի վրա: Պողոսը որոշում կայացրեց լինել Քրիստոսի և Նրա հայտնված կամքի իշխանության ներքո և գերի վերցնել յուրաքանչյուր միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար (Բ Կորնթացիների 10.5): Նա թույլ չէր տալիս ո՛չ այն կրքերին, որոնք Սուրբ գիրքն արգելում է, ո՛չ էլ այն ազատություններին, որոնք Սուրբ գիրքը թույլատրում է, տիրապետել իրեն: Քրիստոսը նրա սրտի Տերն էր, նրա կյանքի նպատակը և նրա բավականության աղբյուրը:

2. Առաջին Կորնթացիների 9.24-27-ում Պողոս առաքյալը համեմատում է քրիստոնեական կյանքը մարզախաղերի հետ: Նա մի քանի կարևոր պնդումներ է անում՝ ցույց տալով, որ քրիստոնեական կյանքում անհրաժեշտ է լուրջ վերաբերվել կարգապահությանը: Որո՞նք են այդ պնդումները: Ի՞նչ են դրանք նշանակում քրիստոնյայի համար:

   ա. *Գոյություն ունի Ա_____ Պ_____, որը կարելի է առնել (խոսքեր 24,25):* Մարզական մրցման հաղթողին պսակ էր շնորհվում: Այդ պսակն ապականելի էր կամ ենթակա էր քայքայման (հունարեն ***«փթարտո՛ս»***): Ի հակադրություն, քրիստոնյայի վարձատրությունն անապականելի և հավիտենական է (հունարեն ***«ա՛փթարտոս»***): Եթե ողջամիտ է համարվում, որ մարզիկը մարզվի իր ամբողջ կյանքում փառքի թռուցիկ ակնթարթի և արագորեն ապականվող պսակի համար, որքա՞ն ավելի քրիստոնյան պետք է մարզվի կամ կարգապահության վարժեցնի իրեն, որպեսզի ստանա հավիտենական փառք և անապականելի պսակ:

   բ. *Մենք պետք է այնպես Վ_____, որ Հ_____ (խս. 24):* Քրիստոնեական կյանքի մրցակցային և պատերազմական բնույթն իրական է: Մարդը կարող է ստանալ հավիտենական վարձատրություն կամ կրել հավիտենական կորուստ: Այնուամենայնիվ, այս մրցակցությունը ոչ թե քրիստոնյաների միջև է, այլ քրիստոնյայի և այն ամենի միջև, ինչն ընդդիմանում է նրան, ներառյալ նրա ֆիզիկական մարմինը և անկում ապրած մեղավոր բնությունը: Քրիստոնեական կյանքը նման է մարզական մրցման, որը խոստանում է մեծ վարձատրություն նրանց, ովքեր հաղթում են սուրբ ձգտումներով, նպատակով, ռազմավարությամբ և զգաստությամբ (Հայտնություն 21.7): Այնուամենայնիվ, դրանում չկա խրախուսական մրցանակ միայն մասնակցության համար:

գ. *Մենք պետք է սովորենք Ժ_____ Լ_____ ամեն բանում (խս. 25):* «Ժուժկալ» բառը թարգմանված է հունարեն ***«էգկրատեո՛ումայ»*** բառից, որը նշանակում է մրցույթի պատրաստվող մարզիկի կողմից ցուցաբերվող զգաստություն և ինքնատիրապետում: Մարզիկը որոշում է ժուժկալ լինել ցանկացած կերակուրից և գործունեությունից, որը կարող է թուլացնել իր արդյունավետությունը: «Լինել» բառը թարգմանված է հունարեն ***«ագոնի՛զոմայ»*** բառից, որը նշանակում է «նախանձախնդրորեն և համառորեն ձգտել ինչ-որ բան ստանալուն»: Այս բառն օգտագործվում էր մարզական մրցույթի մասնակցելու կամ թշնամիների դեմ կռվելու դեպքում:

դ. *Մենք պետք է Վ_____ ոչ թե ինչպես Ա_____ (խս. 26):* Պողոսի կյանքի մեծագույն նպատակը Տիրոջը հաճելի լինելն էր (Բ Կորնթացիների 5.9): Եվ նա կառուցում էր իր ամբողջ կյանքը՝ այդ նպատակին հասնելու համար: Նրա կյանքն անկարգ չէր. այն նպատակաուղղված էր, ինչպես որ օլիմպիական մարզիկն է կառուցում իր կյանքի յուրաքանչյուր բնագավառը՝ մրցանակ ստանալու համար: Պողոսը չէր վազում անկանոն. նա վազում էր հստակ ուղղությամբ՝ դեպի իր երկնային վարձատրությունը: Նրա հայացքը մրցավազքի եզրագծին էր (Փիլիպեցիների 3.13,14):

ե. *Մենք պետք է Մ_____ ոչ թե ինչպես օդին Զ_____ (խս. 26):* Կրկին, մենք տեսնում ենք նպատակ, դիտավորություն և մարտավարություն: Պողոսը պայքարում էր հաղթելու համար և ոչինչ չէր անում անկանոն: Նա չէր հարվածում՝ վրիպելու համար. նա զարկում էր ճիշտ այնտեղ, որտեղ նշան էր բռնել: Նման լավ մարզիկի, նա գտնում էր իր կյանքի տկարությունները և ձգտում էր շտկել դրանք, որպեսզի հասներ իր նպատակին:

զ. *Մենք պետք է Ճ_____ մեր Մ_____ (խս. 27):* «Ճնշել» բառը թարգմանված է հունարեն ***«հուպոպիա՛զո»*** բառից, որը նշանակում է «ծեծել՝ կապտուկների մեջ թողնելով» կամ «ուժգին հարվածներ տեղալ՝ վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ»: Բռնցքամարտիկը ենթարկում է իրեն խստապահանջ մարզման՝ իր մարմինը դիմացկուն և ամուր դարձնելու համար, որպեսզի այն դիմանա կռվի ժամանակ: Նմանապես, Պողոսը չէր փայփայում իր մարմինը և տեղի չէր տալիս մարմնի աղերսանքներին զիջողության մասին: Նա ձգտում էր ապրել Հոգու զորությամբ և տեղի չտալ իր ֆիզիկական մարմնի տկարություններին և մարմնական բնության մեղսալի ցանկություններին:

է. *Մենք պետք է Ն_____ մեր Մ_____ (խս. 27):* «Նվաճել» բառը թարգմանված է հունարեն ***«դուլագոգե՛ո»*** բառից, որը նշանակում է «ստրկության տանել»: Այն օգտագործում են՝ նկարագրելու համար հաղթողին, որը ստրկության է տանում իր նվաճած ախոյանին: Պողոսի կյանքը չէր վերահսկվում իր ֆիզիկական կարիքներով և ժամանակավոր ցանկություններով: Նա ինքն էր վերահսկում դրանք Սուրբ Հոգու զորությամբ, համաձայն Աստծո կամքի: Նա ենթարկել էր դրանք Աստծո կամքին և Ավետարանի նպատակին: Մենք պետք է հիշենք, որ մարմինը չար չէ: Այնուամենայնիվ, այն ենթակա է տկարության և այնպիսի բարեհարմարությունների գայթակղությանը, ինչպիսիք են հեշտասիրությունը, հարմարավետությունը, ապահովությունը և հաճույքը: Կարգապահության պահանջների ներքո այն մշտապես աղերսում է զիջողության մասին:

ը. *Հաշվի առնելով այս պնդումները՝ գրի առեք ձեր մտքերը: Ի՞նչ են նշանակում այս ճշմարտությունները հավատացյալի համար:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Առաջին Կորնթացիների 9.26,27-ում Պողոս առաքյալը գրում է, որ նա ճնշում էր իր մարմինը (բառացիորեն «ծեծում էր՝ կապտուկների մեջ թողնելով»): Այնուամենայնիվ, Կողոսացիների 2.23-ում նա զգուշացնում է, որ մարմնի հետ դաժանաբար վարվելը (այսինքն՝ այն վանական կտտանքների ենթարկելը) անօգուտ է մարմնավոր ցանկությունների դեմ պայքարելու հարցում և ավելի սուրբ չի դարձնի հավատացյալին: Այստեղ չկա ոչ մի հակասություն: Առաջին Կորնթացիների 9-րդ գլխում Պողոսը խրատում է մեզ, որ ճնշենք մեր մարմինը՝ ենթարկելով այն մեծագույն նպատակին, որը Քրիստոսի համար ապրելն է և Նրան ծառայելը: Մարզիկը ենթարկում է իր մարմինը խիստ կարգապահության և մարզումների ոչ թե այն պատճառով, որ ատում է իր մարմինը կամ ցանկանում է ոչնչացնել այն, այլ որովհետև ցանկանում է ավելի ուժեղ և ավելի պատրաստված դարձնել՝ մրցավազքում հաղթելու համար: Մրցավազքի կամ կռվի թեժ պահին մարմինը ցանկանում է հանձնվել, տեղի տալ և զիջել: Այնուամենայնիվ, լարված մարզումների և կարգապահության միջոցով այն պետք է սովորի անտեսել ցավը և դիմանալ մինչև հաղթական ավարտը:

3. Փիլիպեցիների 3.18,19-ում Պողոս առաքյալը նկարագրում է կեղծ մարգարեներին և ուսուցիչներին, որոնք բառացիորեն «Քրիստոսի խաչի թշնամիներ» էին: Բացի այն, որ նրանց ուսմունքը սխալ էր, նրանց մտածելակերպը և կենսաոճը լիովին հակասում էին Ա Կորնթացիների 9.24-27-ի օրինակին: Փիլիպեցիների 3.19-ում Պողոսը բացահայտում է երեք արատ կամ մարմնական դրսևորում, որոնք հատուկ էին այդ մարդկանց: Նշե՛ք դրանցից յուրաքանչյուրը ներքևում թողած բացատներում:

   ա. *Նրանց Ա*_____ *իրենց Ո*_____ *էր:* «Որովայն» բառը թարգմանված է հունարեն ***«կոիլի՛ա»*** բառից, որը բառացիորեն նշանակում է «որովայն» կամ «ստամոքս»: Այս հղումը չի սահմանափակվում կերակուրով, այլ ընդգրկում է բոլոր մարդկային ցանկությունները: Չնայած որ թե՛ մեր որովայնը, թե՛ կերակուրը Աստծո պարգևներն են, դրանք կարող են կուռքեր դառնալ մեր կյանքում: Կերակուրը պետք է զբաղեցնի մեր կյանքի մեծ մասը, եթե մենք ցանկանում ենք առողջ լինել: Այնուամենայնիվ, մեր ցանկությունը կերակուրի (և մյուս բոլոր ժամանակավոր հաճույքների) հանդեպ կարող է չափազանց ուժգին կամ անզուսպ դառնալ: Այն կարող է դառնալ մեր գլխավոր ցանկությունը, հենարանը և մխիթարությունը՝ Աստծո փոխարեն: Այն նաև կարող է դառնալ առաքինության կեղծ հենարան և մեղքը քողարկող դիմակ: Ծոմապահությունը կարող է բացահայտել՝ արդյո՞ք դա վերաբերում է մեզ, և օգնել, որ տիրապետենք այդ ցանկությանը:

   բ. *Նրանց Փ*_____ *իրենց Ա*_____ *էր:* Համատեքստը ենթադրում է, որ այս կեղծ ուսուցիչները դարձի չեկած մարդիկ էին, որոնք փառավորվում էին (այսինքն՝ պարծենում կամ ուրախանում էին) մարմնի ամոթալի գործերով (Գաղատացիների 5.19-21): Ամոթալի բան է ցանկանալ որևէ բան, նույնիսկ՝ Աստծո պարգևները ավելի, քան Աստծուն: Ծոմապահությունը կարող է բացահայտել մեր իրական ցանկությունները և ցույց տալ այն աղբյուրը, որից մենք ձգտում ենք բավականություն և մխիթարություն ստանալ՝ լինի Աստված, թե ժամանակավոր հաճույքները: Այն նույնպես կարող է օգնել մեզ կրկին ուղղել մեր ցանկությունները դեպի այն, ինչը ճշմարտապես արժանի է՝ Աստծուն և Նրա թագավորությանը:

   գ. *Նրանք Ե*_____ *Բ*_____ *էին Մ*_____*:* Պողոսը հորդորում է հավատացյալներին Կողոսացիների 3.1,2-ում. «Արդ եթե Քրիստոսի հետ հարություն առաք, ապա խնդրե՛ք վերինները, որտեղ Քրիստոսն է նստում Աստծո աջ կողմը: Վերինները մտածեք, ոչ թե երկրի վրայինները»: Նույնիսկ հավատացյալները կարող են կորցնել իրենց նպատակը և շեղվել իրենց սրտում: Ծոմապահությունը կարող է հայտնել մեզ, թե ինչի վրա է կենտրոնացած մեր միտքը, և որն է մեր սրտի իրական փափագը: Այն կարող է օգնել մեզ կրկին ուղղել մեր ցանկություններն Աստծուն:

Գլուխ 8. Ծոմապահություն դեպի ներս

Մաս Երեք. Ինքնագնահատում

ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մենք կամփոփենք մեր ուսումնասիրության այս բաժինը մի քանի հարցով, որոնք կօգնեն ստուգել մեր սրտերը և ցույց կտան, թե արդյո՞ք ունենք կախվածություն կերակուրից և այլ ժամանակավոր հաճույքներից: Մենք պետք է ջանանք ձևավորել այնպիսի մտերիմ շփում Աստծո հետ, որ գտնենք Նրանում մեր մեծագույն բավականությունը: Մենք մշտապես պետք է զգույշ լինենք, որ մեր կյանքի «բարի պարգևները» չդառնան ավելի կարևոր մեզ համար, քան Նա, Ով տվել է դրանք:

1. Արդյո՞ք դուք կերակուրի, զվարճանքի կամ ժամանակավոր հաճույքների գերության (չափազանց ուժգին կախվածություն) մեջ եք: Անկեղծորեն ստուգեք ձեզ, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը:

2. Արդյո՞ք դուք մխիթարություն և բավականություն եք ստանում կերակուրից, ընկերակցությունից, ժամանակավոր հաճույքներից կամ զվարճանքից, ոչ թե Աստծո հետ շփումից: Անկեղծորեն ստուգեք ձեզ, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը:

3. Արդյո՞ք ձեզ համար ավելի հեշտ է անցկացնել օրը՝ առանց շփվելու Աստծո հետ խոսքի և աղոթքի միջոցով, քան բաց թողնել ձեր կերակուրը, մնալ առանց ընկերակցության կամ առանց որևէ զվարճանքի: Անկեղծորեն ստուգեք ձեզ, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ծոմապահությունը կարող է մեր մարմնին տիրապետելու և Տիրոջն ավելի հնազանդվելու օգտակար միջոց լինել: Ծոմ պահելով կերակուրից, զվարճանքներից և այլ ժամանակավոր հաճույքներից՝ մենք կարող ենք տեսնել, թե որքան կարևոր են այդ բաները դարձել մեր կյանքում, և որքանով ենք կախված դրանցից: Եթե ծոմապահության ժամանակ մենք դժգոհ, դյուրաբորբոք և բարկացած ենք դառնում, կամ նույնիսկ ընկճվում ենք, մենք հասկանում ենք, որ կախվածություն ենք ձեռք բերել ժամանակավոր հաճույքներից՝ Աստծուց կախված լինելու փոխարեն: Դա տհաճ հայտնություն է, բայց դրա շնորհիվ կարող ենք ապաշխարել, խոստովանել և ավելի շատ շնորհք խնդրել Աստծո գահի առջև: Մինչև մեր ծոմն ավարտելը, մենք պետք է աղոթքով փնտրենք Աստծո կամքն այն մասին, թե ինչպես օգտագործել և վայելել կերակուրը և Աստծուց ստացած այլ բարի պարգևները: Ավելին՝ մենք պետք է որոշենք, թե ինչպես կարող ենք ավելի խորը հարաբերություններ կառուցել Աստծո հետ և ավելի մեծ կախվածություն ձեռք բերել Նրանից:

Գլուխ 9. Ծոմապահություն դեպի դուրս

Մենք արդեն դիտարկեցինք ***ծոմապահությունը դեպի վեր*** և ***ծոմապահությունը դեպի ներս***: Այս գլխում կդիտարկենք վերջին տեսանկյունը՝ ***ծոմապահությունը դեպի դուրս***, որն ուղղված է այս աշխարհում Քրիստոսի թագավորության տարածմանը:

ՆՊԱՏԱԿԸ

Ծոմապահությունը դեպի դուրս վերաբերում է այն ամենին, ինչն առնչվում է Աստծո փառքի բացահայտման, Քրիստոսի թագավորության տարածման և այս աշխարհի փրկության հետ: Որպես քրիստոնյաներ, մեր կյանքը պետք է կլանված լինի այս սուրբ նպատակներով: Մենք կանչված ենք ապրելու և գործելու Աստծո փառքի և բոլոր մարդկանց օգտի համար: Հաշվի առնելով այս աշխարհի անկում ապրած բնույթը և մեր իսկ տկարությունը՝ մենք ակնհայտորեն ունենք Աստծո կարիքը: Այդ իսկ պատճառով, աղոթքը, հավանաբար, ամենակարևոր գործունեությունն է, որում հավատացյալը և եկեղեցին կարող են ընդգրկված լինել: Հաշվի առնելով կարիքների անվերջանալի շարքը, որոնցից նույնիսկ ամենափոքրը լրացնելը վեր է մեր ուժերից, աղոթքը դառնում է մեր առաջնահերթ գործը, որին կարելի է միացնել նաև ծոմապահությունը:

Առաջին գլխում դիտարկեցինք ծոմապահության դեպքերի ծավալուն ցանկ Աստվածաշնչից: Դրա միջոցով իմացանք, որ ծոմապահությունը կատարվում էր բազմաթիվ պատճառներով, սակայն յուրաքանչյուր դեպք ուներ երկու ընդհանրություն. մարդու անկարողությունը և Աստծո բացարձակ անհրաժեշտությունը:

Նայելով մեր աշխարհին 21-րդ դարում՝ տեսնում ենք գրեթե անսահման կարիքներ, որոնք ընդգծում են մեր անկարողությունը, և որոնք լուծելու համար անհրաժեշտ է Աստծո գերիշխան միջամտությունը: Նման իրավիճակներում աղոթքը և ծոմապահությունը լիովին պատշաճ արձագանք են համարվում: Ապրելով այնպիսի մշակույթում, որտեղ գերակշռում է զբաղվածությունը և խնդիրները սեփական ուժերով լուծելու միտումը, մենք պետք է հիշենք, որ Աստծուն փնտրելը պետք է լինի մեր առաջին արձագանքը, ոչ թե վերջին ելքը:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆԸ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի գլխավոր և գերիշխող ձգտումն ի հայտ է գալիս Մատթեոս 6.9,10-ում գրված Աղոթքի նմուշի մեջ.

«Մեր Հայ՛ր, որ Երկնքում ես.
Սուրբ լինի Քո անունը,
Գա Քո արքայությունը,
Լինի Քո կամքը՝
Ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»:

Ճիշտ նույն կերպով, այս Աղոթքի նմուշը պետք է արտացոլի նաև մեր կյանքի գլխավոր և գերիշխող ձգտումը: Մենք պետք է փափագենք, որ Աստծո անունը համարվի սուրբ և վեր մնացած բոլոր անուններից, որ Նրա թագավորությունը տարածվի՝ հասնելով ամեն ցեղի, լեզվի, ժողովրդի և ազգի, և որ ամբողջ տիեզերքը կատարելապես հնազանդվի Նրա կամքին: Այն փաստը, որ այս ամենը դեռ տեղի չի ունեցել, պետք է ստեղծի մեզանում սուրբ փափագ կամ դժգոհություն, որը չի դարմանվի, քանի դեռ գիտելիքը Սուրբ Աստծո մասին չի լցրել երկիրը այնպես, ինչպես որ ջրերը ծածկում են ծովը (Ամբակում 2.14):

Աստծո խաղաղությունը պետք է իշխի մեր սրտերում՝ անկախ հանգամանքներից, և մենք պետք է սովորենք հանգիստ գտնել Նրա նախախնամության մեջ: Միևնույն ժամանակ, մեր ձգտումը Նրա թագավորության հանդեպ պետք է դարձնի մեզ դժգոհ, չբավարարված և նույնիսկ տրտմած այն պատճառով, որ Աստծուն տրվող երկրպագությունը սակավ է, իսկ Նրա թագավորության տարածումը սահմանափակ է: Այս դժգոհությունը պետք է դրդի մեզ ոչ միայն ավելի նախանձավոր գործունեության, այլև հարատև աղոթքի: Երբեմն այս ձգտումը պետք է այնքան ուժգին լինի, որ ուտելիքն անհամ թվա, իսկ ժամանակավոր հաճույքները մոռացվեն, քանի որ մենք պե՛տք է հանդիպում ունենանք Աստծո հետ:

ՀԱՍՏԱՏԱԿԱՄ ԱՂՈԹՔ

Աստված տիեզերքի գերիշխան Տերն է: Նա վարվում է Իր կամքի համաձայն երկնքի զորքի հետ և երկրի բնակիչների միջև: Ոչ ոք չի կարող զարկել Նրա ձեռքին և ասել. «Ի՞նչ ես անում»: Նա այնպիսի Աստված չէ, Ում մարդիկ կարող են շահարկել կամ ինչ-որ բան պարտադրել (Դանիել 4.34,35): Այնուամենայնիվ, ամբողջ Սուրբ գրքում այս բացարձակ գերիշխան Աստված պատվիրում է Իր ժողովրդին աղոթել, կանչել, խնդրել և նույնիսկ պայքարել Իր հետ աղոթքի մեջ: Սա հանելուկ չէ, որը պետք է լուծել, այլ՝ խորհուրդ, որը պետք է գիտակցել, և պատվիրան, որին պետք է հնազանդվել: Աստված կանչում է մեզ հարատևելու և հաղթելու աղոթքի մեջ: Մենք չպետք է թողնենք Նրան, քանի դեռ Նա չի օրհնել մեզ: Մենք չպետք է հանգիստ տանք Նրան, քանի դեռ Նա չի կատարել այն, ինչ խոստացել է: Ստորև մենք կդիտարկենք ընդամենը մի քանի աստվածաշնչյան հատվածներ, որոնք հաստատում են նման համարձակությունն աղոթքի մեջ:

1. Մատթեոս 7.7,8-ում գտնում ենք երեք պատվեր և երեք ուղեկցող խոստում այն մասին, որ Աստված ցանկանում է, որ մենք աննահանջ և հաստատակամ լինենք աղոթքի մեջ: Գտեք դրանք և գրի առեք ստորև գտնվող բացատներում.

   ա. *Խ_____, և կտրվի ձեզ (խս. 7):* Մի՞թե Աստված կարող էր ավելի մեծ խոստում տալ, որպեսզի խրախուսեր մեզ աղոթել: Այս խոստումը հիշեցնում է Սաղմոս 81.10-ը. «Լայն բաց արա քո բերանը, և Ես կլցնեմ այն»:

   բ. *Ո_____ և կգտնեք (խս. 7):* Աստված խոստացավ Երեմիա մարգարեին. «Եվ դուք Ինձ կորոնեք և կգտնեք, որովհետև Ինձ կխնդրեք ձեր ամբողջ սրտով» (Երեմիա 29.13):

   գ. *Դուռը Թ_____, և կբացվի ձեզ (խս. 7):* Խոսքն այս հատվածում հաստատակամության մասին է. մենք պետք է խնդրենք, որոնենք և թակենք, մինչև որ պատասխանը տրվի:

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս պատվերներից յուրաքանչյուրը գրված է ներկա ժամանակով և ենթադրում է շարունակական գործողություն. «Շարունակե՛ք խնդրել, շարունակե՛ք որոնել, շարունակե՛ք թակել...»: Բանալին մեկանգամյա աղոթքը չէ, այլ համառ, հաստատակամ և հարատևող աղոթքը: Այս պնդումն էլ ավելի հանգամանորեն է ներկայացվում հաջորդ հատվածում:

2. Ղուկաս 18.1-8-ում գրված է ամենակարևոր հատվածներից մեկը աղոթքի մեջ հաստատակամ լինելու կամ հարատևելու անհրաժեշտության մասին: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. *Համաձայն 1-ին խոսքի, ի՞նչ պատվիրեց Հիսուսը աղոթքի վերաբերյալ:*

(1) Հավատացյալն Ա_____ ժամանակ Պ_____ է աղոթք անի: «Պետք է» բառը թարգմանված է հունարեն «***դեի՛***» բառից, որն ունի անհրաժեշտության իմաստ: Այն ցույց է տալիս, որ ինչ-որ բան անհրաժեշտ է, պահանջված է կամ էապես կարևոր է: Նմանապես, պետք էր կամ հարկ էր («***դեի՛***»), որ Քրիստոսը չարչարվեր (Ղուկաս 24.46):

(2) Եվ Չ_____: «Ձանձրանալ» բառը թարգմանված է հունարեն ***«էկկաե՛ո»*** բառից, որը նշանակում է «թուլանալ, հոգնել, մաշվել, սպառվել կամ կորցնել կենսունակությունը»:

բ. *Համաձայն 2-5-րդ խոսքերի, ի՞նչ կերպով է այս առակի այրի կինը հաստատակամ աղոթքի օրինակ ծառայում:*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Առաջին դարի Պաղեստինի տարածքում ապրող այրի կինն անկարող էր հոգալ իր մասին և ուներ շատ քիչ կամ ոչ մի միջոց (քաղաքական, սոցիալական կամ ֆինանսական), որպեսզի ձայն ունենար դատարանում կամ ազդեցություն թողներ իշխանավորների վրա՝ իր ծանր դրության մեջ օգնություն ստանալու համար: Թեև դատավորն այս առակում այնպիսի մարդ էր, ով ո՛չ վախենում էր Աստծուց, ո՛չ էլ պատվում էր մարդկանց (խս. 4), նա ազդվեց այդ այրի կնոջ աննահանջ հետապնդումներից, քանի որ այդ կինը բառացիորեն ***«հոգնեցնում»*** էր նրան իր խնդրանքներով: «Հոգնեցնում է ինձ» արտահայտությունը թարգմանված է հունարեն ***«հուպոպիա՛զո»*** բառից, որը նշանակում է. «հարվածել աչքի տակ, շարունակ հարվածներ տեղալ, ծեծել, հոգնեցնել կամ խստորեն վերաբերվել»:

գ. *Համաձայն 6-8-րդ խոսքերի, ինչպե՞ս Հիսուսը կիրառեց այրի կնոջ օրինակն Իր աշակերտների աղոթքի կյանքի վերաբերյալ: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք՝ նման խոստումներ ունենալով:*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս առակի իմաստը հետևյալն է. եթե դաժան և անգութ երկրային կառավարիչը, որն ընդամենը սահմանափակ իշխանություն ունի, կարող է ազդվել անօգնական այրի կնոջից և օգնության գալ նրան, որքա՞ն ավելի մեր երկնային Հայրը, Ում գութը բարձր է երկնքից (Սաղմոս 103.11), օգնության կգա Իր սիրելի զավակներին, երբ փնտրում են Իրեն:

դ. *Ութերորդ խոսքի երկրորդ կեսում Հիսուսը մի շատ կարևոր հարց է տալիս: Ո՞րն է այդ հարցը, և ի՞նչ զգուշացում է այն պարունակում Իր աշակերտների համար, այսինքն՝ մեզ համար:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Բառացիորեն... «...Նա կգտնի՞ հավատք այս երկրի վրա»: Սա զգուշացում է բոլոր սերունդների քրիստոնյաներին: Արդյո՞ք Տերը գտնում է մեր մեջ այնպիսի հավատք Իր խոստումներին, որը դրդում է մեզ հաստատակամ աղոթքի, թե՞ մենք նման ենք Սոփոնիա 1.12-ում նկարագրվող մարդկանց, որոնք հոգով լճացած էին և ասում էին. «Տերը ո՛չ բարիք է անում, ո՛չ չարիք»: Արդյո՞ք մենք հույսով սպասում ենք Քրիստոսի գալուստին և մեր արդարացմանը, թե՞ նման ենք վերջին օրերի ծաղրողներին, որոնք ասում են. «Ո՞ւր է Նրա գալստյան խոստումը» (Բ Պետրոս 3.4): Վտանգն այն չէ, որ Աստված անհավատարիմ կլինի Իր խոստումներին, այլ՝ որ մենք անհավատ կլինենք աղոթքի մեջ:

3. Ղուկաս 11.5-10-ում գտնում ենք մեկ այլ զարմանալի հատված աղոթքի մեջ հարատևելու մասին: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

   ա. *Որո՞նք են 5-8-րդ խոսքերում փոխանցվող գլխավոր ճշմարտությունները:*

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Համաձայն 9-10-րդ խոսքերի, ինչպե՞ս Հիսուսը կիրառեց նախորդ օրինակի ճշմարտություններն Իր աշակերտների վերաբերյալ: Ինչպե՞ս այս ճշմարտությունները պետք է կիրառվեն մեր աղոթքի կյանքում:*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

4. Եսայի 62.6,7-ն ամենազարմանալի հատվածներից մեկն է ամբողջ Սուրբ գրքում: Ի՞նչ է սովորեցնում մեզ այս հատվածը աղոթքի մեջ համառության կամ հաստատակամության մասին: Ինչպե՞ս այն կարելի է կիրառել մեր աղոթքի կյանքում:

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Վերևում բերված հատվածում և Ղուկաս 18.1-8 և 11.5-10-ում գտնվող առակներում տեսնում ենք ձանձրացնելու աստիճանի հասնող համառություն: Թեև մենք պետք է դիտարկենք այս առակներն Աստծո գերիշխանության և արժանապատվության ներքո, մենք չպետք է կորցնենք դրանց իրական մտադրությունը. Աստված կանչում է մեզ աննկուն և հարատև աղոթքի: Այսպիսի համարձակությունը պատվում է Աստծուն: Հարատևող աղոթքը ցույց է տալիս ճշմարիտ հավատք առ այն, որ Աստված հավատարիմ է, և որ Նա ի զորու է կատարել այն, ինչ խոստացել է:

5. Հայրապետ Հակոբի կյանքում գտնում ենք հաստատակամ աղոթքի հրաշալի օրինակ: Կարդացե՛ք այս պատմությունը Ծննդոց 32.24-32-ում և բացատրե՛ք, թե ինչպես այն կարելի է կիրառել հավատացյալի աղոթքի կյանքում:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն, որ Աստված թույլ է տալիս և նույնիսկ հրավիրում է նման պայքարի, ցույց է տալիս Նրա բարությունը և շնորհքը: Նման Հակոբի օրինակին, մեր աղոթքի պայքարն Աստծո հետ պետք է արտացոլի աստվածաշնչյան հավասարակշռությունը համարձակության և մեծ երկյուղածության միջև:

ՓԱՓԱԳ, ԱՂՈԹՔ ԵՎ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Որքան ավելի ճանաչենք Աստծուն և կերպարանվենք Նրա Որդու պատկերին, այնքան ավելի կմտահոգվենք Քրիստոսի թագավորության հարցերով և այնքան ավելի կկրենք դրանց բեռը: Մենք կբախվենք կարիքների գրեթե անսահման բազմազանության, որոնց թվում են տկարությունը մեր իսկ կյանքում, չարչարվող սրբերը, դժվարությունների մեջ հայտնված եկեղեցիները, դարձի չեկած ընկերները, չավետարանված ազգերը, հասարակական անարդարությունը և շատ այլ բաներ: Երբ նման խորը խնդիրները հայտնվում են մեր ուշադրության կենտրոնում, մեզ պատվիրված է աղոթքով բերել դրանք Տիրոջ առջև: Եթե մեր սրտերը թեկուզ ինչ-որ չափով արտացոլում են այն հատվածները, որոնք ուսումնասիրեցինք այս գլխում, մենք հանգիստ չենք տա Աստծուն, քանի դեռ Նա չի լուծել առկա խնդիրները կամ ավելի մեծ չափով չի հայտնել մեզ Իր կամքը, որպեսզի մենք դադարենք խնդրել և հանդարտվենք՝ վստահելով Նրա նախախնամությանը:

Այսպիսի պահերին մեր փափագը Քրիստոսի թագավորության հանդեպ կարող է այնքան եռանդուն դառնալ, որ մենք «կմոռանանք» կամ, նույնիսկ, «կզզվենք» մեր կերակուրից և այլ ժամանակավոր հաճույքներից (Սաղմոս 102.4, 107.17,18): Դրանք բառացիորեն կարող են դուրս մղվել մեզանում եղած Քրիս-

տոսի արքայությունը տարածելու ցանկությամբ: Այդ հարցը կարող է այնքա՞ն ծանրակշիռ լինել, իսկ մեր սրտի բեռը՝ այնքա՞ն մեծ, որ մենք կույր կդառնանք ամեն տեսակի ժամանակավոր գեղեցկության հանդեպ, և անարձագանք՝ դրա ամբողջ գրավչության հանդեպ: Երբ այդ բեռները մեր առջև լինեն, մենք կմոռանանք ցանկացած այլ բանի մասին: Մենք չենք հետաձգի մեր աղոթքները և չենք սփոփվի: Մենք չենք թողնի Աստծուն, քանի դեռ Նա չի օրհնել: Մենք հանգիստ չենք տա Նրան, քանի դեռ այդ հարցերը լուծված չեն: Ինչպես որ Նոյեմին ասաց Բոոսի մասին, երբ նա ձգտում էր ազատել Հռութին. «Այն մարդը մինչև որ այս գործը այսօր չվերջացնի, չի հանգստանա» (Հռութ 3.18):

Նման համարձակությունը կարող է վիրավորական կամ նույնիսկ աներկյուղ թվալ որոշ մարդկանց: Նրանք կարող են փաստարկներ բերել Աստծո գերիշխանության մասին և բացատրել, որ Նրա վճիռներն արդեն հաստատված են: Նրանք միգուցե նաև մեղադրեն մեզ այն բանում, որ մենք փորձում ենք շահարկել Աստվածությանը: Այնուամենայնիվ, Աստծո արժանապատվությունը պաշտպանելու իրենց անկեղծ նվիրմամբ հանդերձ, նրանք ժխտում են Նրա Խոսքը: Նախորդ պարբերության բառապաշարն անմիջապես Սուրբ գրքից է: Աստված է, որ պատվիրում է այսպիսի համարձակություն ունենալ: Նա գերիշխան է, և Նրա վճիռները հաստատված են: Նա անում է ամեն ինչ «առաջուց որոշված լինելով, Նրա առաջադրության պես», նաև «ամեն բան հաջողում է Իր կամքի խորհուրդների պես» (Եփեսացիների 1.11): Այնուամենայնիվ, Նա նույնպես ասում է մեզ. «Չունեք, որովհետև չեք խնդրում» (Հակոբոս 4.2): Նա պատվիրում է մեզ հանգիստ չտալ Իրեն մեր խնդրանքներով, մինչև որ Նա կատարի Իր խոստումները (Եսայի 62.6,7): Նա հորդորում է մեզ խնդրել, որոնել, թակել և գտնել (Մատթեոս 7.7,8): Նա տալիս է մեզ այնպիսի մարդկանց օրինակներ, որոնք հանգիստ չտվեցին Իրեն, մինչև որ օրհնեց նրանց (Ծննդոց 32.24-32): Նա սովորեցնում է մեզ առակներ աննահանջ այրիների (Ղուկաս 18.2-7) և ձանձրացնող հարևանների մասին (Ղուկաս 11.5-8): Նա անում է այս ամենը, որ մենք համարձակությամբ և հաստատակամորեն փնտրենք Իրեն աղոթքի մեջ: Այնուամենայնիվ, երբ Մարդու Որդին վերադառնա, արդյո՞ք կգտնի նման հավատք այս երկրի վրա (Ղուկաս 18.8):

Գլուխ 10. Հանդիսավոր ժողով

Մաս Մեկ. Հանդիսավոր ժողովներն Աստվածաշնչում

Աստվածաշնչում ծոմապահությունն ի հայտ է գալիս ոչ միայն որպես անձնական կամ անհատական գործողություն, այլև որպես խմբային կամ հանրային սովորույթ: Հանրային աղոթքի և ծոմապահության դեպքերը հաճախ կոչվում են ***տոնախմբություններ, հանդեսներ*** կամ ***սուրբ ժողովներ:***

Քանի որ Հիսուսը զգուշացրեց մեր աստվածապաշտությունը չհանրայնացնելու մասին (Մատթեոս 6.3,4,6,16,17), ոմանք սխալմամբ եզրակացրել են, որ Նա արգելեց բոլոր տեսակի հանրային աղոթքները և ծոմապահությունները: Այնուամենայնիվ, դա այդպես չէ: Ամբողջ Հին կտակարանում կան հանրային աղոթքի և ծոմապահության անթիվ դեպքեր, որոնք ստանում էին Աստծո հավանությունը: Նոր կտակարանում մենք տեսնում ենք խմբային աղոթք Առաջին եկեղեցու սկզբնավորման պահին (Գործք 1.13,14) և իր գոյության ամենավճռական պահերին (Գործք 4.23-31, 13.1-3):

Հանրային աղոթքը և երբեմն նաև ծոմապահությունը ոչ միայն ընդունելի են Նոր կտակարանի եկեղեցու համար, այլև պետք է խրախուսվեն: Հիմնվելով Սուրբ գրքում առկա օրինակների վրա՝ եկեղեցին կարող է հավաքվել հանդիսավոր ժողովի ծոմապահության և աղոթքի համար, ճգնաժամին կամ մեծ կարիքի ժամանակ, նաև վճռական պահերին, երբ անհրաժեշտ է հասկանալ Աստծո կամքը որևէ օրհասական հարցում: Նույնպես ընդունելի է համախմբել եկեղեցուն հանդիսավոր ժողովի՝ Աստծուն ուրախությամբ և ցնծությամբ փառաբանելու համար:

Թեև «հանդիսավոր ժողով» արտահայտությունը չի գործածվում Նոր կտակարանում, կան հստակ դեպքեր, երբ Առաջին եկեղեցին հավաքվում էր խմբային աղոթքի համար: Ավելին՝ մենք միշտ պետք է հիշենք Պողոս առաքյալի խրատը Հռոմեացիների 15.4-ում.

> *«Նրա համար, ինչ որ գրվեց (Հին կտակարանում), մեր սովորելու համար գրվեց, որ համբերությամբ և գրքերի մխիթարությամբ հույսն ունենանք»:*

Օգնելու համար ուսանողին իր ուսումնասիրության մեջ, ստորև ներկայացվում է հանդիսավոր ժողովներին վերաբերող հիմնական աստվածաշնչյան հատվածների ցուցակ: Այս հատվածներից շատերը հանդիսավոր ժողովների անմիջական հղումներ են, իսկ մյուսները պարզապես նկարագրում են այս սովորույթը:

Ա Թագավորաց 7.5,6. Սամուել մարգարեն ժողովեց ամբողջ Իսրայելը Մասփայում, որպեսզի ժողովուրդը խոստովաներ իր մեղքը և խնդրեր Տիրոջը ազատել իրենց փղշտացիներից:

Բ Մնացորդաց 7.9. Սողոմոն թագավորը հանդիսավոր կերպով ժողովեց ամբողջ Իսրայելը՝ տաճարի նավակատիքն անելու և Աստծուն փառաբանելու համար: Այս հանդիսավոր ժողովին հաջորդեց յոթօրյա տոնակատարություն՝ ցնծությամբ (կարդացե՛ք նաև Թվոց 29.12):

Բ Մնացորդաց 15.8-15. Ասա թագավորը ժողովեց Հուդայի բոլոր բնակիչներին, որպեսզի բոլորը ուխտ կնքեին Տեր Աստծո հետ, որ թողնելու էին իրենց կռապաշտությունը և խնդրելու էին Նրան ամբողջ սրտով և անձով:

Բ Մնացորդաց 20.1-13. Հովսափատ թագավորը ժողովեց ամբողջ Հուդան և ծոմապահություն հայտարարեց՝ խնդրելու համար Աստծո փրկությունը իրենց վրա հարձակվող Մովաբի, Ամմոնի և մաոնացիների բանակներից:

Բ Մնացորդաց 23.16. Հովիադա քահանան ժողովեց Հուդայի բոլոր մարդկանց, որպեսզի ուխտ կնքեր իր, ժողովրդի և թագավորի միջև, որ իրենք լինելու էին Տիրոջ ժողովուրդը:

Բ Մնացորդաց 34.31-33. Հովսիա թագավորը ժողովեց Երուսաղեմի և Բենիամինի ամբողջ բնակչությունը, որպեսզի բոլորը հետևեին Տիրոջը և պահեին Նրա պատվիրանները իրենց ամբողջ սրտով և անձով:

Եզրաս 8.21-23. Եզրաս քահանան ժողովեց գերության մեջ գտնվողներին, որոնք իր հետ Երուսաղեմ էին վերադառնում, որպեսզի ծոմ պահեին և աղոթեին, որ Աստված ճանապարհորդության ժամանակ պաշտպաներ իրենց:

Եզրաս 10.1-12. Մի շատ մեծ բազմություն Իսրայելից ժողովվեց Եզրաս քահանայի հետ, որպեսզի խոստովանեին իրենց մեղքերը և ուխտ կնքեին Տիրոջ հետ՝ երկրում բնակվող անաստված ազգերից առանձնանալու համար:

Նեեմիա 9.1-3. Եզրաս քահանայի առաջնորդությամբ, այն իսրայելցիները, որոնք վերադարձել էին գերությունից, առանձնացան բոլոր այլազգիներից և ժողովվեցին, որպեսզի լսեին Աստծո Խոսքը և խոստովանեին իրենց մեղքերը՝ ծոմով և քուրձով:

Եսայի 1.10-15. Իսրայելի բացահայտ ապստամբության և կրոնական կեղծավորության պատճառով Տերն ատում էր նրանց զոհերը, կրոնական տոնակատարությունները և հանդիսավոր ժողովները:

Հովել 1.14,15. Հովել մարգարեի միջոցով Աստված պատվիրեց երկրի բոլոր բնակիչներին, որպեսզի գնային Աստծո տուն և աղաղակեին Տիրոջը՝ աստվածային դատաստանից խուսափելու համար:

Հովել 2.12-17. Հովել մարգարեի միջոցով Աստված պատվիրեց ամբողջ ժողովրդին՝ առանց բացառության, հավաքվել հանդիսավոր ժողովի և ծոմ պահել ճշմարիտ ապաշխարությամբ՝ աստվածային դատաստանից խուսափելու համար:

Գործք 1.4, 2.1. Մինչև Իր համբարձումը, Քրիստոսը պատվիրեց աշակերտներին չհեռանալ Երուսաղեմից, այլ սպասել Սուրբ Հոգու թափմանը, որը խոստացվել էր Հովել մարգարեի կողմից (Հովել 2.28-32):

Գործք 4.23-31. Աշակերտները հավաքվեցին հալածանքի ժամանակ, որպեսզի խնդրեին Տիրոջից պաշտպանություն և ուժ՝ համարձակ վկայելու համար:

Գլուխ 11. Հանդիսավոր ժողով

Մաս Երկու. Հանդիսավոր ժողովի հրավեր

Ինչպես նշվեց նախորդ գլխում, հանդիսավոր ժողով կարելի է հրավիրել բազմաթիվ պատճառներով: Այս գլխում կդիտարկենք Աստվածաշնչում գտնվող երկու ամենատարածված պատճառները. (1) Աստծո օգնությունը խնդրելը ճգնաժամային պահին և (2) ապաշխարություն մեղքից՝ Աստծո դատաստանը կամ խրատը հեռացնելու համար:

ԱՍՏԾՈ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԴՐԵԼԸ

Երկրորդ Մնացորդաց 20.1-30-ում Հովսափատ թագավորը ժողովեց ամբողջ Հուդան և ծոմապահություն հայտարարեց՝ խնդրելու համար Աստծո փրկությունը իրենց վրա հարձակվող Մովաբի, Ամմոնի և մառնացիների բանակներից: Եկեղեցին կարող է մեծ խրատ և խրախուսանք ստանալ այս հինկտակարանյան պատմությունից, երբ հայտնվում է ճգնաժամային իրավիճակներում, որոնք անկարող է լուծել: Ծանոթացե՛ք Բ Մնացորդաց 20.1-30-ի բովանդակությանը, այնուհետև կատարե՛ք հետևյալ վարժությունները:

1. Համաձայն Բ Մնացորդաց 20.1,2-ի, ինչպիսի՞ ճգնաժամի բախվեցին Հովսափատ թագավորը և Հուդայի ժողովուրդը: Անվանե՛ք որոշ ճգնաժամեր, որոնց եկեղեցին կարող է բախվել այսօր, և որոնք կարող են հանդիսավոր ժողով հրավիրելու պատճառ հանդիսանալ:

_____

_____

_____

_____

_____

_____

2. Համաձայն Բ Մնացորդաց 20.3,4-ի և 20.13-ի, ինչպե՞ս արձագանքեցին Հովսափատը և Հուդայի ժողովուրդը: Ինչպե՞ս եկեղեցին պետք է արձագանքի, երբ բախվում է այնպիսի ճգնաժամի, որն անկարող է լուծել:

_____

_____

_____

3. Երկրորդ Մնացորդաց 20.5-12-ում գրված է Հովսափատ թագավորի աղոթքը: Նրա աղոթքում մենք գտնում ենք չորս անչափ կարևոր տարր կամ հատկանիշ, որոնց արժե նմանակել: Նկարագրե՛ք յուրաքանչյուրը ձեր բառերով և բացատրե՛ք, թե ինչպես դրանք կարելի է կիրառել եկեղեցում այսօր՝ անհաղթահարելի ճգնաժամերի ընթացքում:

ա. *Աստծո գերիշխանությունը (խս. 6)*

ՆՇՈՒՄՆԵՐ. Բոլոր աղոթքները պետք է հիմնված լինեն Աստծո ամենակարող լինելու և Նրա բացարձակ գերիշխանության հանդեպ ունեցած հավատքի վրա:

բ. *Աստծո խոստումները (խոսքեր 7-9)*

ՆՇՈՒՄՆԵՐ. Բոլոր աղոթքները պետք է հիմնված լինեն Աստծո խոստումների վրա: Աստծո խոստումներին կասկածելն անհավատություն է, իսկ հավատալը այն բաներին, որոնք Աստված չի խոստացել, անհիմն ինքնավստահություն է: Երկուսն էլ մեղք են:

գ. *Ճգնաժամը (խոսքեր 10,11)*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված գիտի մեր կարիքները՝ Նրանից խնդրելուց առաջ (Մատթեոս 6.8), և Նա գիտի մեր ճգնաժամը՝ դրա տեղի ունենալուց առաջ (Եսայի 44.7,8)։ Այնուամենայնիվ, մենք պետք է բերենք մեր կարիքները Նրա առջև, ներկայացնենք մեր իրավիճակը և աղաչենք՝ Նրա խոստումների հիման վրա։

դ. *Մարդկանց անկարողությունը և կախվածությունը (խս. 12)*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աղոթքը հիմնված է զույգ համոզմունքների վրա՝ Աստծո բացարձակ գերիշխանության և մեր բացարձակ անկարողության։ Հիսուսը հաստատեց, որ Աստծո օրհնությունները տրվում են հոգով աղքատներին և նրանց, ովքեր խոստովանում են իրենց ամբողջական կախվածությունը Նրանից և ապրում են դրան համապատասխան (Մատթեոս 5.3)։

4. Երկրորդ Մնացորդաց 20.14-19-ում գրված է, որ Աստված խոսեց ժողովրդի հետ Զաքարիայի որդի Հազիելի միջոցով։ Ի՞նչ Աստված խոստացավ ժողովրդին, և ինչպե՞ս նրանք արձագանքեցին Աստծո խոսքին։ Ինչպե՞ս կարելի է կիրառել Հազիելի խոսքը և մարդկանց արձագանքը ժամանակակից եկեղեցում։

ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև մենք չունենք հստակ մարգարեություններ մեր խնդիրների վերաբերյալ, սակայն ունենք Աստծո խոսքը, որը տալիս է մեզ անթիվ խոստումներ այն մասին, որ Աստված հավատարմորեն հոգ կտանի Իր ժողովրդի մասին և կազատի նրանց նեղության ժամանակ: Աստծո բնավորության և խոստումների հռչակումը՝ համաձայն Սուրբ գրքի, հանդիսավոր ժողովի կարևոր տարրերից է:

5. Համաձայն Բ Մնացորդաց 20.20-22-ի, ինչպե՞ս ժողովուրդն արձագանքեց Աստծո ցուցմանը Նրան վստահելու և իրենց ուժերով փրկության չձգտելու մասին: Ի՞նչ կարող է սովորել եկեղեցին նրանց արձագանքից:

ՆՇՈՒՄՆԵՐ. Ճշմարտությունը, որը պետք է սովորենք այս հատվածից, ***այն չէ***, որ չպետք է ոչինչ անենք խնդիրների բախվելիս: Մենք պետք է հիշենք, որ Աստված տվել է մեզ միջոցներ՝ Իր նպատակներն իրագործելու համար: Ճշմարտությունը, որը պետք է սովորենք, այն է, որ մենք պետք է վստահենք Աստծուն և հնազանդությամբ վարվենք Նրա առջև: Մենք չպետք է հենվենք մեր հասկացողության վրա կամ վստահ լինենք, որ մեր ուժը և իմաստությունը կփրկեն մեզ: Մենք պետք է վստահ լինենք, որ Սուրբ գիրքը կարող է լիարժեք կերպով առաջնորդել մեզ, և պետք է համապատասխանեցնենք մեր բոլոր քայլերը դրա խրատներին և պատվիրաններին: Մենք չպետք է փրկության ձգտենք փոխզիջման կամ խորամանկ հնարների միջոցով:

6. Համաձայն Բ Մնացորդաց 20.22-25-ի, ի՞նչ կատարվեց Հուդայի հետ՝ Աստծուն վստահելու արդյունքում: Արդյո՞ք Աստված փրկեց Իր ժողովրդին: Ինչպե՞ս կարելի է կիրառել այս ճշմարտությունը եկեղեցու վերաբերյալ:

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում նկարագրված փրկությունն ամենատպավորիչն է ամբողջ Սուրբ գրքում: Այնուամենայնիվ, եկեղեցու գոյության դարերի ընթացքում եղել են Աստծո հավատարմության և զորության անթիվ նմանատիպ դրսևորումներ, երբ Աստծո ժողովուրդը, որն անկարող է եղել փրկել ինքն իրեն, փրկություն է ստացել: Սուրբ գրքում և Եկեղեցու պատմության ընթացքում տեղի ունեցած Աստծո հավատարմության վկայությունները մեծապես խրախուսում են մեզ հավատալ Տիրոջը և չապավինել մեր հասկացողությանը (Առակաց 3.5,6): Այդ պատմությունները ոգևորում են մեզ, որ կանչենք Նրան և տեսնենք այն փրկությունը, որը տրվում է Նրա բազկի զորությամբ:

7. Երկրորդ Մնացորդաց 20.26-ում տեսնում ենք, որ այն բանից հետո, երբ Աստված զորավոր կերպով փրկեց իր ժողովրդին, հրավիրվեց ևս մեկ հանդիսավոր ժողով: Ո՞րն էր այդ ժողովի նպատակը, և ի՞նչ է դա սովորեցնում մեզ:

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո ժողովուրդը պետք է գնահատի Աստծո փրկությունը և ցնծա դրանով: Այն եկեղեցին, որը հանդիսավոր ժողով է հրավիրում՝ Աստծո օգնությունը խնդրելու համար, պետք է հանդիսավոր ժողով հրավիրի նաև Աստծո պատասխանը ստանալուց հետո՝ Նրան փառաբանելու համար:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Հովելի գրքում ներկայացված է աստվածաշնչյան հանդիսավոր ժողովի ամենից տպավորիչ և օգտակար նկարագրությունը: Ծանոթացե՛ք Հովել 1.14,15 և 2.12-17 հատվածների բովանդակությանը, այնուհետև կատարե՛ք հետևյալ վարժությունները:

1. Հանդիսավոր ժողով հրավիրելու պատճառ դարձան մի շարք իրադարձություններ. մորեխների աղետը (1.4-7), երաշտը (1.9-12,15-20) և զգուշացումն ավելի սաստիկ դատաստանների մասին (2.1-11): Այս

ամենը տեղի էր ունեցել ժողովրդի մեղքերի պատճառով: Հրավիրվեց հանդիսավոր ժողով ապաշխարության և խոստովանության համար: Ինչպե՞ս կարելի է կիրառել սա եկեղեցու վերաբերյալ այսօր:

ՆՇՈՒՄՆԵՐ. Կան մի շարք պատճառներ, թե ինչու որևէ եկեղեցի կարող է հավաքական ապաշխարության կարիք ունենալ. ակնհայտ և համատարած մեղքը, անհնազանդությունն Աստծուն եկեղեցական կարգապահության հարցերում, Աստծո հանդեպ ածող անտարբերությունը և այլն:

2. Համաձայն Հովել 1.14-ի և 2.16,17ա-ի, Աստծո ժողովրդից ովքե՞ր էին կանչված մասնակցելու հանդիսավոր ժողովին: Ինչպե՞ս կարելի է կիրառել սա եկեղեցու և իր հանդիսավոր ժողովների վերաբերյալ:

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն փաստը, որ յուրաքանչյուրը պետք է դադարեցներ իր բոլոր գործերը, ցույց է տալիս այս իրադարձության կարևորությունը: Հանդիսավոր ժողովին մասնակցած երեխաները կստանային առարկայական դաս, որը երբեք չէին մոռանա:

3. Համաձայն Հովել 2.12,13ա-ի, ինչպե՞ս էր դրսևորվում ճշմարիտ ապաշխարությունը: Ինչպե՞ս է անկեղծ լինելու անհրաժեշտությունն արտահայտվում 13ա խոսքում: Ինչպե՞ս կարելի է կիրառել սա եկեղեցու և իր հանդիսավոր ժողովների վերաբերյալ:

4. Համաձայն Հովել 2.17-ի, ո՞րն էր հանդիսավոր ժողովի գլխավոր նպատակը և աղաչանքը: Ինչպե՞ս կարելի է կիրառել սա եկեղեցու և իր հանդիսավոր ժողովների վերաբերյալ:

ՆՇՈՒՄՆԵՐ. Նրանց փրկության աղաչանքը մտահոգություն է արտահայտում ոչ միայն Աստծո ժողովրդի մասին, այլև Աստծո համբավի մասին այլ ազգերի մեջ: Աստծո ժողովրդի մեղքը հաճախ անարգանք է բերում Աստծո անվանը (Հռոմեացիների 2.24):

5. Ի՞նչ է հայտնում մեզ Հովել 2.13-ը Աստծո բնավորության մասին: Ինչպե՞ս է այս խոսքը խրախուսում նրանց, ովքեր ճշմարիտ ապաշխարությամբ փնտրում են Նրան հանդիսավոր ժողովում:

ՆՇՈՒՄՆԵՐ. Մեր ներման և վերականգնման հույսը հիմնված չէ մեր առաքինության և արժանիքների վրա, այլ՝ Աստծո և Նրա խոստումների:

Գլուխ 12. Հանդիսավոր ժողով

Մաս Երեք. Գործնական առաջարկներ

Մեր ուսումնասիրության այս գլուխն ամբողջովին մեջբերված է Ռիչարդ Օուեն Ռոբերտսի *«Հանդիսավոր ժողով»* գրքույկից[1]:

1. **Հանդիսավոր ժողովի ժամանակ սովորական առօրյա գործունեությունը ամբողջությամբ պետք է դադարեցվի**: Այս մասին պարզորեն կարգադրվում է Ղևտացիների 23.34-36, Թվոց 29.35 և Երկրորդ Օրինաց 16.8 հատվածներում: Թեև Սուրբ գիրքն ընդհանուր առմամբ սովորեցնում է ջանասիրաբար աշխատել, ակնհայտ է, որ ցանկացած գործունեություն պետք է ենթակա լինի հոգևոր նպատակներին: Ինչպես որ մարդը պետք է աշխատի վեց օր և միայն վեց օր, իսկ յոթերորդ օրը հանգստանա, այնպես էլ մարդը պետք է աշխատի հոգևոր և բարոյական առաջընթացի ժամանակներում, սակայն մի կողմ դնի իր սովորական առօրյա գործերը և փնտրի Աստծո երեսը արդար դատաստանի ժամանակներում:

2. **Հանդիսավոր ժողովի ժամանակ Աստծո արդար դատաստանի ազդեցությունը կրող բոլոր մարդիկ հավաքականորեն պետք է ներկա լինեն**: Այս ճշմարտությունը հստակ երևում է հինկտակարանյան արթնությունների մասին մի քանի սուրբգրային հատվածներից, բայց ամենից պարզ ներկայացված է Հովելի գրքում, որտեղ նույնիսկ նորապսակ զույգերը չեղարկում էին իրենց մեղրամիսը, և նույնիսկ կրծքի երեխաներ ունեցող մայրերը պետք է ներկա լինեին (Հովել 2.16): Հավաքական մեղքի մի տեսակը, որից պետք է հրաժարվել, ապստամբության հոգին է, որը ներկա է բազմաթիվ դավանող քրիստոնյաների կյանքում և դրդում է նրանց հավատալ, որ ոչ մի հոգևոր առաջնորդ չի կարող ցուցումներ տալ իրենց: Նման չար մեղավորները ճիշտ կանեն, եթե ուշադրություն դարձնեն, թե ինչպիսի խստությամբ են դատապարտվում ապստամբությունը և անհնազանդությունը Ա Թագավորաց 15.23-ում:

3. **Հանդիսավոր ժողովը ծոմապահության ժամանակ է**: Փոխարենը ծոմապահության ֆիզիկական նշանակության մասին մտածելը, դավանող քրիստոնյաները ճիշտ կանեն, եթե հաշվի առնեն դրա հոգևոր կարևորությունը: Որպես կանոն, մենք հասկանում ենք, որ մեր մարմնի խնամքը պատշաճ պարտավորություն է, որը ստանձնում ենք Աստծո առջև: Մեր մարմնի խնամքն Աստծուն մատուցվող մեր ծառայության մի մասն է: Այնուամենայնիվ, կան հարցեր, որոնք շատ ավելի կարևոր են, քան մեր մարմնի խնամքը: Ծոմապահության ժամանակ հավատացյալ ժողովուրդը ցույց է տալիս Աստծուն, որ հոգևոր հարցերը նախապատվություն ունեն նյութական հարցերի համեմատ: Կարճ ասած, ծոմապահությունն Աստծո առջև խոնարհություն ցուցաբերելու արտաքին միջոց է: Այս խոնարհությունը գիտակցում է, որ Աստծո դատաստանն առաջացրած բոլոր մեղքերը բացահայտելը և դրանցից հավաքականորեն և պատշաճ կերպով ազատվելը անհամեմատ ավելի մեծ արդյունք կունենա, քան մարմինը կերակրելը: Երբեմն հավատացյալների մարմինները պետք է հնազանդության բերվեն, որպեսզի ճնշող հոգևոր կարիքները պատշաճ ուշադրության արժանանան:

[1] Մեջբերված է հեղինակի կողմից տրված հատուկ թույլտվությամբ և խմբագրված է միայն քերականական համապատասխանության համար: Հեղինակային իրավունքները՝ 1989թ., Ռիչարդ Օուեն Ռոբերտս, ISBN 0-926474-03-0, հրատարակված «International Awakening Press» հրատարակչության կողմից, Փ.Ա. 232, Ուիտոն, Իլինոյս, 60189, ԱՄՆ: Այս նյութը նաև ընդգրկված է որպես առանձին գլուխ Պրն. Ռոբերտսի կողմից խմբագրված «Սրբացնել եկեղեցին. Հանդիսավոր ժողով և հավաքական ապաշխարության կանչ» գրքում, հրատարակված «International Awakening Press» հրատարակչության կողմից: Այս գրքի անգլերեն տարբերակը կարելի է ձեռք բերել «Reformation Heritage Books» հրատարակչության կայքից:

4. **Հանդիսավոր ժողովը զոհաբերության ժամանակ է**: Անթիվ հինկտակարանյան հատվածներ, որոնցում գրված է հանդիսավոր ժողովների մասին, պարզորեն նշում են սա (ներառյալ՝ Թվոց 10.10 և 15.3 խոսքերը): Մեծագույն օրհնություններից մեկը, որն Աստված տվել է մարդկությանը, ժամանակի պարգևն է: Կարո՞ղ է արդյոք լինել ավելի նշանակալի զոհ, քան երբ մարդիկ զոհաբերում են իրենց ժամանակը, որպեսզի լիարժեք կերպով մասնակցեն որևէ եկեղեցու կամ ազգի դեմ ուղղված արդար դատաստանը ետ դարձնելուն՝ այն կերպով, որը պատվիրել է Աստված:

5. **Հանդիսավոր ժողովը տևական է**: Թեև դավանող քրիստոնյաների մեծ մասը կարող է բավարարվել մեկժամյա «երկրպագության» ծառայություններով, հանդիսավոր ժողով հրավիրելը ենթադրում է խիստ երկարաձգված հավաքույթ: Բազմաթիվ սուրբգրային հատվածներում, որոնցում նկարագրվում են հանդիսավոր ժողովները, ժողովուրդը հավաքվում էր օրերով, մինչև իսկ յոթ կամ տասնչորս օրով: Այնուամենայնիվ, այլ դեպքերում մեկ ամբողջ օրը բավական էր լինում: Երկրորդ Մնացորդաց 7.8,9-ում նշված է, որ ժողովուրդը յոթ օր տոն կատարեց, իսկ ութերորդ օրը՝ հանդիսավոր ժողով: Հենց այդ հանդիսավոր ժողովի օրը Աստված ասաց. «Եվ Իմ ժողովուրդը, որի վրա կոչված է Իմ անունը, խոնարհվեն և աղոթք անեն և Իմ երեսը խնդրեն և իրենց չար ճանապարհներից ետ դառնան, այն ժամանակ Ես կլսեմ Երկնքից և կներեմ նրանց մեղքը և կբժշկեմ նրանց երկիրը» (խս. 14): Ոչ մի հանդիսավոր ժողով արժանի չէ կրել այդ անունը, եթե մասնակիցները չեն հատկացրել նույնիսկ մեկ ամբողջ օր խոնարհության, աղոթքի, ապաշխարության և Աստծո երեսը փնտրելու վեհ առաջադրանքների համար:

6. **Հանդիսավոր ժողովը եռանդուն աղոթքի ժամանակահատված է**: Ընդհանուր առմամբ, եկեղեցիները շատ քիչ ժամանակ են տրամադրում աղոթքին: Միգուցե տրամադրվում է բավականաչափ ժամանակ՝ խնդրանքներն Աստծուն ներկայացնելու համար, սակայն տրամադրվում է շատ քիչ արժեքավոր ժամանակ, որպեսզի Աստված ներկայացնի Իր պահանջներն Իր ժողովրդին՝ որպես հավաքական մարմնի: Սակայն մենք պետք է ոչ միայն շատ ժամանակ տրամադրենք աղոթքին հանդիսավոր ժողովի ընթացքում, այլև պետք է շատ ժամանակ անցկացնենք աղոթքի մեջ՝ պատրաստվելով հանդիսավոր ժողովին: Եթե հանդիսավոր ժողովն անցկացվելու է ամբողջ շաբաթ օրվա ընթացքում, եկեղեցու անդամները պետք է տևական ժամանակ տրամադրեն աղոթքին ամեն օր՝ սկսած շաբաթվա սկզբից, որպեսզի պատրաստվեն այդ օրվան:

7. **Հանդիսավոր ժողովը պարտադիր իրադարձություն է հավաքական ապաշխարության համար**: Պատրաստվելով այս իրադարձությանը, անհրաժեշտ է նախապես պատրաստել այն մեղքերի մատյանը, որոնցից պետք է ապաշխարել և հրաժարվել: Որոշ եկեղեցիներ խնդրում են ամբողջ համայնքին մասնակցել այս մատյանը պատրաստելուն: Եկեղեցու կազմում գտնվող բոլոր ծառայողական խմբերին խնդրում են պատրաստել Աստծո և մարդկանց դեմ գործած հանցանքների ցուցակ, որոնցից, ինչպես իրենք գիտեն, եկեղեցին երբեք հավաքականորեն չի հրաժարվել: Դրանից հետո առաջնորդներն ուսումնասիրում են այդ ցուցակները և համախմբում են դրանք՝ մատյան կազմելով: Նպատակը ոչ թե սխալներ հորինելն է, այլ լրջորեն քննելը ցանկացած իրադարձություն, որը կարող է օգտակար լինել արդար վճիռ կայացնելու համար:

8. **Հանդիսավոր ժողովը հնարավորություն է Հոգով օծված քարոզի համար, որի նպատակն է ազդարարել Սուրբ գրքի սրտեր քննող ճշմարտությունները՝ Աստծո ժողովրդի կյանքին խորապես և նորովի հպվելու համար**: Այն հանդիսավոր ժողովներին, որոնց հատկացվում է միայն մեկ օր, անսովոր բան չէ առնվազն մեկ կամ, եթե հնարավոր է, երկու նման ուղերձ քարոզելը: Այդ քարոզները հատկապես վերաբերում են այդ օրվա խնդիրներին և օգնում են մարդկանց կատարել այն պարտավորությունները և օգտվել այն հնարավորություններից, որոնք ներկայացվում են այդ օրվա ընթացքում:

9. **Հանդիսավոր ժողովն ամենահրաշալի հնարավորությունն է երեխաների համար՝ տեսնելու, թե ինչպես են իրենց ծնողները և եկեղեցու երեցները ցուցադրում քրիստոնեությունը խորը հավաքական մակարդակի վրա**: Քանի որ հավաքված է ամբողջ ընտանիքը, երիտասարդները և ավելի մեծ երեխաները օրվա հանդիսավոր իրադարձությունները խորապես վերապրելու արտոնություն են ունենում: Որոշ եկեղեցիներ վարձում են եկեղեցու անդամ չհանդիսացող դայակների՝ մանուկներին և փոքր երեխաներին խնամելու համար, որպեսզի ծնողները կարողանան իրենց ուշադրությունն ամբողջությամբ կենտրոնացնել այդ օրվա գործունեության վրա:

10. **Հանդիսավոր ժողովը հնարավորություն է տալիս Աստծուն արձագանքել Իր ժողովրդին այնպիսի մակարդակով, որով Նա չէր կարողանա արձագանքել, եթե նրանք ապրեին՝ անարգելով Նրա խոսքը կամ բացահայտ կերպով խախտելով Նրա պատվիրանները**: Պատմության ընթացքում Աստված արձագանքել է հանդիսավոր ժողովներին՝ ուղարկելով օրհնությունների թարմ ալիքներ, որոնք հպվել են հավատացյալներին թե՛ անհատապես, թե՛ հավաքականորեն, իսկ որոշ դեպքերում դրանց արդյունքում սկսվել են փառավոր արթնություններ: Ամենազարմանալի օրինակներից մեկը 1956 թվականի Շոտլանդիայի եկեղեցու Գլխավոր ժողովի արթնությունն է:

Գլուխ 13. Զգուշացումներ և խոստումներ

Ուսումնասիրելով ծոմապահությունը՝ անպայման պետք է դիտարկենք երկու կարևոր իրողություն՝ դրա հետ առնչվող վարձատրությունները և զգուշացումները: Աստվածաշնչում գտնում ենք ծոմապահություն կատարող մարդկանց վարձատրության խոստումներ և օրինակներ: Այնուամենայնիվ, պետք է զգույշ լինենք, որպեսզի ***չհամարենք*** ծոմապահությունը Աստծուն ***շահարկելու*** կամ Նրա բարեհաճությունը և օրհնությունը ***վաստակելու*** միջոց: Սուրբ գրքում նույնպես գտնում ենք խիստ հանդիմանություններ և նույնիսկ դատաստաններ՝ ուղղված այն մարդկանց, որոնց ծոմապահությունը եսակենտրոն, կեղծավոր և ապստամբ բնույթ էր կրում: Այս ճշմարտությունների լույսի ներքո մենք պետք է ունենանք աստվածաշնչյան պատկերացում ծոմապահության հետ առնչվող թե՛ վարձատրությունների, թե՛ զգուշացումների մասին:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻՑ

Մատթեոս 6.16-18-ը Սուրբ գրքի ամենից ամբողջական քննարկումն է ծոմապահության մասին: Այս հատվածում Հիսուսը և՛ խիստ զգուշացումներ է անում, և՛ խոստումներ է տալիս վարձատրության մասին: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

1. Համաձայն Մատթեոս 6.16-ի, ինչպե՞ս է Հիսուսն անվանում այն մարդկանց, որոնք ծոմապահություն էին կատարում անմաքուր և եսակենտրոն դրդապատճառներով:

   ա. Կ_____: Այս բառը թարգմանված է հունարեն ***«հուպոկրի՛տես»*** բառից և բառացիորեն նշանակում է «դերասան»: Փոխաբերական իմաստով այն մատնանշում է այնպիսի մարդու, ով ձևանում է, թե այնպիսին է, ինչպիսին իրականում չէ, կամ ով քողարկում կամ թաքցնում է իր իրական «ես»-ը: Քրիստոսի ամենածանր քննադատություններն ուղղված էին կրոնական կեղծավորությամբ վարվողներին (Մատթեոս 15.7-9, 23.13-15,23,25,27,29, 24.51):

2. Համաձայն Մատթեոս 6.16-ի, ինչպե՞ս են կեղծավորները ծոմ պահում, և ո՞րն է նրանց դրդապատճառը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Տրտում» բառը թարգմանված է հունարեն ***«սկութրոպո՛ս»*** բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «տխուր կամ մռայլ»: Կեղծավորի տրտմությունը չէր բխում նրա սրտից, այլ նման էր դիմակի: «Տխրեցնել» բառը թարգմանված է հունարեն ***«աֆանի՛զո»*** բառից, որը նշանակում է «աղավաղել կամ փչացնել»: Կեղծավորը միտումնավոր «տխրեցնում» կամ անտեսում էր իր արտաքինը: Ծոմապահության

արտաքին դրսևորումները՝ այն, որ մարդիկ քուրձ էին հագնում կամ մոխիր էին շաղ տալիս իրենց վրա, կարելի է գտնել ամբողջ Սուրբ գրքում (Եսթեր 4.1,3, Եսայի 58.5, Երեմիա 6.26, Դանիել 9.3, Հովնան 3.6, Մատթեոս 11.21, Ղուկաս 10.13)։ Այդպես վարվելը դատապարտելի չէ, եթե արվում է ճշմարիտ խոնարհությամբ և անկեղծությամբ, բայց կեղծավորներն այդպես էին վարվում, որպեսզի տեսնվեին և գովեստի արժանանային մարդկանցից։

3. Մատթեոս 6.16-ում Հիսուսը հայտարարում է, որ կեղծավորները, որոնք ցանկանում էին գովեստ ստանալ մարդկանցից, ամբողջությամբ ստացել են իրենց վարձատրությունը։ Ի՞նչ նկատի ունի Հիսուսը։ Ինչո՞ւ դա լավ լուր չէ։

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կրոնական և կեղծավոր մարդը ծոմ է պահում, որպեսզի արժանանա մարդկանց գովեստին, սակայն անկեղծորեն չի ձգտում ճիշտ հարաբերություններ ունենալ Աստծո հետ։ Եվ Աստված տալիս է կեղծավորին ճիշտ այն, ինչ նա ցանկանում է։ Նա գովեստ է ստանում մարդկանցից, բայց մնում է օտարացած Աստծուց։ Նա ամբողջությամբ ստանում է իր վարձատրությունը՝ մարդու գովեստի և Աստծո դատապարտության տեսքով։

4. Համաձայն Մատթեոս 6.17,18-ի, ի՞նչ կերպով Քրիստոսի աշակերտների ծոմապահությունը պետք է տարբերվի կեղծավորների ծոմապահությունից։ Ինչպե՞ս է մեր հնազանդությունը Քրիստոսի պատվերին ցուցաբերում մեր անկեղծությունը։

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Գլուխն օծելը ամենօրյա սովորույթ չէր. դա արվում էր միայն ուրախալի իրադարձությունների կամ տոնական միջոցառումների ժամանակ: Ինչպես որ կեղծավորը ջանք է անում, որպեսզի ծոմ պահող երևա, այնպես էլ անկեղծ հավատացյալը պետք է ջանք անի, որպեսզի ծոմ պահող չերևա: Կարևոր է հասկանալ, որ այս ուսմունքն անվավեր չի դարձնում Սուրբ գրքի կողմից հաստատված խմբային կամ հավաքական ծոմապահությունը: Քրիստոսի խոսքը սրտի մտադրությունների կամ դրդապատճառների մասին է: Կարող ենք հարցնել ինքներս մեզ. «Ո՞ւմ համար ենք մենք ծոմ պահում» և «Ո՞ւմ կողմից ենք մենք փափագում տեսնվել և վարձատրություն ստանալ»:

5. Համաձայն Մատթեոս 6.18-ի, ի՞նչ խոստում է տրվում նրանց, ովքեր փնտրում են Աստծուն անկեղծ ծոմապահությամբ: Ի՞նչ է այն նշանակում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Գաղափարն այն մասին, որ կարելի է ծոմ պահել վարձատրության համար, կարող է ծեծված և նույնիսկ եսակենտրոն թվալ: Այնուամենայնիվ, նույն խոստումը տրվում է ողորմություն անելու և աղոթքի դեպքում (6.3,4,6): Հիսուսը ոչ մի դեպքում նկատի չունի, որ Աստծուն կարելի է շահարկել՝ դրդելով վարձատրություններ տալ աղոթքի, ծոմապահության կամ այլ բարեպաշտ գործերի համար: Այնուամենայնիվ, մենք չպետք է ժխտենք այն ճշմարտությունը, որ Աստված խոստացել է մատակարարել Իր ժողովրդին և օրհնել նրանց, ովքեր հավատքով փնտրում են Իրեն: Մենք կարող ենք քաղել երկու ակնառու ճշմարտություն այս հատվածից: Առաջինը՝ անկեղծ, աստվածակենտրոն դրդապատճառներից բխող բարեպաշտ գործերը ցույց են տալիս մեր ճիշտ հարաբերությունն Աստծո հետ՝ այն, որ Նա մեր Հայրն է: Երկրորդը՝ Աստծուն հաճելի է, երբ Իր ժողովուրդը մոտենում է Իրեն՝ հավատալով, որ Ինքը կա և վարձատրում է Իրեն խնդրողներին (Եբրայեցիների 11.6):

ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ԵՍԱՅՈՒՑ

Եսայի 58.1-12-ում գտնվում է ծոմապահության ամենից ազդեցիկ նկարագրությունը Հին կտակարանում: Այս հատվածի խիստ զգուշացումները և փայլուն խոստումները իմաստուն ցուցումներ և հույս են փոխանցում Տիրոջը փնտրողներին: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ՀԱՍԿԱՆԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

1. Եսայի 58.1-ում Աստված պատվիրում է Եսայի մարգարեին իմացնել Իր ժողովրդին նրանց հանցանքները: Ստորև այդ հանցանքների ամփոփումն է այն հատվածների հետ, որոնցում դրանք գտնվում են: Նկարագրե՛ք այդ հանցանքները՝ համաձայն յուրաքանչյուր հատվածի: Բացատրե՛ք, թե ինչ կերպով դրանք կարող են բացասաբար ազդել հավատացյալի և Աստծո հետ հաղորդակցության վրա:

ա. ***ՀՈԳԵՎՈՐ ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՂԾԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ*** (խս. 2). «Բայց նրանք Ինձ խնդրում են օրըստօրե և ուզում են գիտենալ Իմ ճանապարհները՝ իբրև մի ազգ, որ արդարություն է գործում, և իր Աստծո իրավունքը զանց չի անում, և Ինձնից հարցնում են արդարության իրավունքը, և փափագում են Աստծուն մոտենալ»:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Համաձայն ***«Իբրև*** մի ազգ, որ արդարություն է գործում» պնդմանը՝ Իսրայելի ժողովուրդը չէր տեսնում սեփական մեղքը: Նրանք փնտրում էին Աստծուն ***իբրև*** մի ազգ, որը հնազանդությամբ էր վարվում Նրա հետ:

բ. ***ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ*** (խոսքեր 3բ-4ա). «Ահա ձեր ծոմ օրը բաղձանք եք կատարում և ձեր բոլոր աշխատավորներին նեղում եք: Ահա կռվի և հակառակության համար եք ծոմ պահում և անզգամության բռունցքով զարկելու համար»:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս կարճ պնդումներում ի հայտ են գալիս ամեն տեսակի մեղքեր: Կարևոր է նշել, որ մեղանչելը մարդկանց դեմ, հատկապես Աստծո ժողովրդի դեմ, հավասար է անձամբ Աստծո դեմ մեղանչելուն: Այսպիսի մեղքի պատճառով Աստված ետ է պահում Իր շփումը և օրհնությունը: Ծոմապահությունը քիչ արդյունք է տալիս, եթե այն կատարողները շարունակում են անարդար վարվել:

2. Եսայի 58.3-ում Իսրայելը հարցնում է. «Ինչո՞ւ մենք ծոմ ենք պահում, և Դու չես տեսնում. մենք ճգնեցնում ենք մեր անձերը, և Դու չգիտես»: Համաձայն 4,5-րդ խոսքերի, ինչպե՞ս է Աստված պատասխանում նրանց հարցերին: Ինչպե՞ս կարելի է կիրառել այս հորդորը հավատացյալների և Եկեղեցու վերաբերյալ այսօր:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Արտաքին ընծայումը՝ առանց ներքին նվիրման և գործնական հնազանդության, խստորեն դատապարտվում է ամբողջ Աստվածաշնչում: Այդ մարդիկ նման էին փարիսեցիներին, որոնց նվիրումը մակերեսային էր (Մատթեոս 23.27), որոնք ձևականորեն երկար աղոթքներ էին անում (Մատթեոս 23.14), և որոնք ծոմ էին պահում, որպեսզի տեսնվեին մարդկանցից, ոչ թե Աստծուց (Մատթեոս 6.16):

3. Համաձայն 6,7 և 9բ,10 խոսքերի, ի՞նչը պետք է ուղեկցեր Իսրայելի ծոմապահությունը, որպեսզի այն հաճելի լիներ Աստծուն: Ինչպե՞ս կարելի է կիրառել այս ճշմարտությունները հավատացյալների և Եկեղեցու վերաբերյալ այսօր:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս աստվածային պահանջների ավելի լայն կիրառումը հետևյալն է. այն մարդիկ, ովքեր աղոթքով աղաղակում են Տիրոջը, որ Նա արդարություն գործի իրենց համար, պետք է իրենք էլ արդարություն գործեն այլ մարդկանց համար, հատկապես՝ Աստծո ընտանիքի անդամների (Գաղատացիների 6.10):

4. Համաձայն Եսայի 58.8-12-ի, ի՞նչ է Աստված խոստանում Իր ժողովրդին՝ նրանց, ովքեր անկեղծ սրտերով կանչում են Իրեն և ձգտում են ապրել ըստ Իր արդար պատվերների:

ՆՇՈՒՄՆԵՐ. Անկախ Իսրայելի անցյալի մեղքերից, Աստված խոստանում է նրանց ներում, փրկություն և վերականգնում:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԶԱՔԱՐԻԱՅԻՑ

Զաքարիա 7.1-14-ում գտնվում է ազդեցիկ հորդոր ծոմապահության վերաբերյալ, որը նման է Եսայի 58.1-12-ում գրված խոսքերին: Այս հատվածում կբացահայտենք մի քանի ճշմարտություն (զգուշացում), որոնք կարող են կիրառել Տիրոջը փնտրողները: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

1. Համաձայն Զաքարիա 7.5,6-ի, ո՞րն էր Աստծո գլխավոր գանգատն Իսրայելի ծոմապահության և, ընդհանուր առմամբ, կենսաոճի դեմ: Ինչպե՞ս կարելի է կիրառել այս ճշմարտությունը հավատացյալների և Եկեղեցու վերաբերյալ այսօր:

ՆՇՈՒՄՆԵՐ. Իսրայելի կրոնական ընծայումը և կենսառձը բխում էին եսակենտրոնությունից. նրանց շարժառիթը՝ Աստծո պատիվը և մարդկանց բարեկեցությունը չէր (Զաքարիա 7.9,10)։ Նրանց եսակենտրոնությունն արտացոլվում էր ծոմապահության մեջ։ Նրանց ուտելը և խմելն Աստծո փառքի համար չէր (Ա Կորնթացիների 10.31), նրանց ծոմապահությունը՝ նույնպես։

2. Համաձայն Զաքարիա 7.8-12ա-ի, Իսրայելի ո՞ր մեղքերի պատճառով էր նրանց ծոմապահությունն անընդունելի դարձել Աստծո համար։ Ինչպե՞ս կարելի է կիրառել այս հորդորը հավատացյալների և Եկեղեցու վերաբերյալ այսօր։

ՆՇՈՒՄՆԵՐ. Իսրայելի երկու մեծագույն մեղքերն էին՝ հասարակական անարդարությունը և այն, որ նրանք հրաժարվում էին լսել Աստծո Խոսքը, որն ազդարարում էին Նրա մարգարեները։

3. Համաձայն Զաքարիա 7.12բ-14-ի, ո՞րն էր Իսրայելի ապստամբության արդյունքը։ Ինչպե՞ս կարելի է կիրառել այս ճշմարտությունը հավատացյալների և Եկեղեցու վերաբերյալ այսօր։

ՆՇՈՒՄՆԵՐ. Նույնիսկ ամենաջանասեր կրոնական գործունեությունը չի կարող փրկել դատաստանից այն անհատին կամ ազգին, որը հրաժարվում է թողնել իր ապստամբությունն Աստծո դեմ։

Գլուխ 14. Դիտարկումներ և նախազգուշացումներ

Ծոմապահությունը աստվածաշնչյան սովորույթ է, որը կիրառելի է Նոր կտակարանի հավատացյալների և եկեղեցիների համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Եկեղեցու պատմության ընթացքում ծոմապահության հետ կապված ծայրահեղ համոզմունքները և սովորույթները, անհրաժեշտ է, որ մենք խստորեն հետևենք Սուրբ գրքի ուսմունքին այս մասին: Մենք չպետք է անենք այնպիսի բաներ, որոնց մասին գրված չէ, և չպետք է հիմնենք մեր վարդապետությունը և գործունեությունը սոսկ ենթադրությունների վրա: Ստորև կան մի շարք աստվածաշնչյան դիտարկումներ ծոմապահության մասին, ինչպես նաև անհրաժեշտ նախազգուշացումներ:

1. **Ծոմապահությունը սուրբգրային սովորույթ է, որը կիրառվել է և՛ Հին, և՛ Նոր կտակարաններում**: Թեև ոչ մաքուր դրդապատճառներով կատարվող ծոմապահությունը խստորեն դատապարտվում էր[2], անկեղծ ծոմապահությունն արժանանում էր գովեստի և հաճախ վարձատրվում էր[3]:

2. **Սուրբ գրքում ծոմապահությունն ունի բազմաթիվ պատճառներ**:

   ա. ***ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՉԱՓ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՄ ԴՐԱՆԻՑ ԱՌԱՋ.*** Մովսեսը ծոմ պահեց Օրենքը ստանալու ժամանակ (Ելից 24.12-18): Քրիստոսը ծոմ պահեց Իր փորձությունից և հրապարակային ծառայությունից առաջ (Մատթեոս 4.1-3): Աշակերտները ծոմ պահեցին Անտիոքից մեծ միսիոներական շարժ սկսելուց առաջ (Գործք 13.1,2):

   բ. ***ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅՈՒՆ՝ ԱՍՏԾՈ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.*** Մովսեսը բարեխոսեց ապստամբ Իսրայելի համար (Ելից 34.27,28): Դավիթը խնդրեց Աստծուն խնայել իր որդուն, որին Նա զարկել էր մահացու հիվանդությամբ (Բ Թագավորաց 12.15-23): Աստված պատվիրեց Իսրայելին ծոմով ապաշխարել՝ գալիք դատաստանը ետ դարձնելու համար (Հովել 1.14,15, 2.12-17): Նինվեացիներն ապաշխարեցին իրենց չարությունից և ծոմ պահեցին, որպեսզի Տերը ետ դարձներ այն աղետը, որն ազդարարել էր իրենց դեմ (Հովնան 3.4-10):

   գ. ***ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ.*** Իսրայելը ծոմ պահեց և ապաշխարեց Մասփայում (Ա Թագավորաց 7.6-8): Չար Աքաաբ թագավորը խոնարհվեց ծոմով և ներում ստացավ (Գ Թագավորաց 21.20-29): Նեեմիան ծոմ պահեց՝ խոստովանելով Իսրայելի մեղքերը, և աղաչեց Աստծո ողորմության համար (Նեեմիա 1.3-10): Իսրայելը ծոմ պահեց հանդիսավոր ժողովի ժամանակ՝ Աստծո օրենքը լսելու և իրենց մեղքերը խոստովանելու համար (Նեեմիա 9.1-3): Դանիելը ծոմ պահեց՝ խոստովանելով իր մեղքը և իր ժողովրդի մեղքը (Դանիել 9.3-20): Աստված պատվիրեց Իսրայելին ծոմով ապաշխարել՝ գալիք դատաստանը ետ դարձնելու համար (Հովել 1.14,15, 2.12-17): Նինվեացիներն ապաշխարեցին իրենց չարությունից և ծոմ պահեցին, որպեսզի Տերը ետ դարձներ իրենց կործանումը, որի մասին ասել էր (Հովնան 3.4-10):

   դ. ***ՓՐԿՈՒԹՅՈՒՆ.*** Իսրայելը ծոմ պահեց Մասփայում՝ փղշտացիներից ազատվելու համար (Ա Թագավորաց 7.6-8): Հովսափատ թագավորը և Հուդան ծոմ պահեցին՝ մովաբացիներից, ամմոնացիներից և մաոնացիներից ազատվելու համար (Բ Մնացորդաց 20.1-4): Եզրասը և գերության մեջ գտնվող-

[2] Գ Թագավորաց 21.9-13, Եսայի 58.3-5, Մատթեոս 6.16, Ղուկաս 18.9-14

[3] Ելից 34.27,28, Դատավորաց 20.26-28, Ա Թագավորաց 1.6-11, 7.6-8, Գ Թագավորաց 21.20-29, Բ Մնացորդաց 20.1-4, Եզրաս 8.21-23, Նեեմիա 1.3,4, 9.1,2, Եսթեր 4.16, Դանիել 6.16-19, 9.3-20, Հովնան 3.4-10, Մատթեոս 6.17,18

ները ծոմ պահեցին, որպեսզի Աստված պաշտպաներ իրենց ճանապարհը դեպի Երուսաղեմ (Եզրաս 8.21-23)։ Նեեմիան ծոմ պահեց Երուսաղեմի մնացորդի փրկության համար, որոնք նեղություն և անարգանք էին կրում (Նեեմիա 1.3,4)։ Եսթեր թագուհին և Շուշան քաղաքի հրեաները ծոմ պահեցին, որպեսզի ազատվեին հրեաներին ոչնչացնելու Համանի դավադրությունից (Եսթեր 4.16)։ Դարեհ թագավորը ծոմ պահեց, որպեսզի Դանիելը փրկվեր առյուծների գուբից (Դանիել 6.16-19)։

ե. ***ՀԱՐՑՆԵԼ ԱՍՏԾՈ ԿԱՄՔԸ.*** Իսրայելը ծոմ պահեց՝ խնդրելով Աստծուց առաջնորդություն պատերազմի ժամանակ (Դատավորաց 20.26-28)։ Դանիելը ծոմ պահեց՝ խնդրելով իմաստություն, որպեսզի հասկանար մարգարեությունները Իսրայելի ապագայի վերաբերյալ (Դանիել 9.2,3,20-23)։

զ. ***ՓՆՏՐԵԼ ԱՍՏԾՈՒՆ՝ ԱՂՈԹՔԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ.*** Աննան ծոմ պահեց՝ որդի խնդրելով (Ա Թագավորաց 1.6-11)։ Դավիթը ծոմ պահեց՝ խնդրելով Աստծուն խնայել իր որդուն, որին Նա զարկել էր մահացու հիվանդությամբ (Բ Թագավորաց 12.15-23)։ Եզրասը և գերության մեջ գտնվողները ծոմ պահեցին, որպեսզի Աստված պաշտպաներ իրենց ճանապարհը դեպի Երուսաղեմ (Եզրաս 8.21-23)։ Նեեմիան ծոմ պահեց՝ խնդրելով Աստծուն բարեհաճություն տալ իրեն Արտաշես թագավորի առջև (Նեեմիա 1.3,4,11, 2.1-8)։ Դավիթը ծոմ էր պահում հիվանդ և կարիքավոր մարդկանց համար (Սաղմոս 35.13,14)։

է. ***ՍՈՒԳ.*** Գաղաադի Հաբիսի մարդիկ ծոմ պահեցին՝ սգալով Սավուղ թագավորի և նրա որդիների մահը (Ա Թագավորաց 31.11-13)։ Դավիթը և իր զինվորները ծոմ պահեցին՝ սգալով Սավուղի, Հովնաթանի և պատերազմի ժամանակ սրից ընկած մյուս իսրայելցիների մահը (Բ Թագավորաց 1.11,12)։

ը. ***ՆԱԽԱՆՁԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈ ՀԱՄԱՐ.*** Դավիթը լաց էր լինում և ծոմ էր պահում աստվածային իրողությունների հանդեպ ունեցած իր նախանձավորության պատճառով, որովհետև անաստված մարդիկ նախատում էին Աստծո անունը (Սաղմոս 69.9,10)։

թ. ***ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈՒՆ.*** Աննա մարգարեուհին օր ու գիշեր ծառայություն էր մատուցում Աստծուն տաճարում՝ ծոմով և աղոթքով (Ղուկաս 2.36-38)։ Աշակերտները ծոմով ծառայություն էին մատուցում Տիրոջը Անտիոքում (Գործք 13.1-3)։

ժ. ***ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ.*** Թեև այդ մասին պատվիրված չէ, Սուրբ գիրքը հիշատակում է ծոմապահությունը, երբ նշանակում է ծառայողներ (Գործք 13.2,3) և երեցներ (Գործք 14.22)։

3. **Ծոմապահությունն այնպիսի ներքին իրողությունների արտաքին դրսևորում է, ինչպիսիք են խոնարհությունը, կոտրվածությունը, վախը, փափագը, սուգը և անկարողությունը**։ Այն արտասովոր ճգնաժամի, կարիքի կամ ցանկության հանպատրաստի և սրտանց արձագանք է։ Այն տեղի է ունենում, երբ հավատացյալը կարիք ունի ստանալու Աստծո ներումը, փրկությունը, օգնությունը, մխիթարությունը, իմաստությունը և ներկայությունը ցանկացած գնով։ Հավատացյալը բառացիորեն «մոռանում» է իր կերակուրը կամ «զզվում» է դրանից, քանի որ իր անձը նեղության մեջ է՝ մեղքի, փափագի կամ կարիքի պատճառով (Սաղմոս 102.4, 107.17,18)։ Հավատացյալը ծոմ է պահում Աստծո մեջ ունեցած գերագույն բերկրանքի պատճառով, որը մթագնեցնում է բոլոր ժամանակավոր ցանկությունները (Սաղմոս 4.7, 27.4, 34.8, 42.1,2, 63.1, 73.25,26)։ Չկա ոչ մի աստվածաշնչյան հանձնարարական կամ հաստատում այն մասին, որ ծոմապահությունը պետք է կատարվի ընդամենը որպես ընթացակարգ, օրակարգի մաս, ծրագրված գործողություն, բանաձև կամ մեթոդ։

4. **Ծոմապահությունը երբեք նախատեսված չի եղել որպես պարբերաբար կատարվող կրոնական ծես, աստվածապաշտության նշան կամ հոգևոր գործողություն**։ Հին կտակարանում կար միայն մեկ օր, որը հստակորեն առանձնացված էր ծոմապահության համար՝ Քավության օրը (Ղևտացիների 16.29-31. «ձեր անձերը պիտի խոնարհեցնեք»)։ Չորրորդ, հինգերորդ, յոթերորդ և տասներորդ ամիսների ծոմա-

պահությունները հաստատվել էին հրեաների կողմից Բաբելոնի գերության ժամանակ (Զաքարիա 7.1-7, 8.19)։ Արդեն Քրիստոսի ժամանակ փարիսեցիներն ունեին ծոմապահության հստակ օրեր, ինչը նրանք համարում էին պահանջ ճշմարիտ աստվածապաշտության համար (Ղուկաս 18.11,12, Մատթեոս 9.14), սակայն Քրիստոսը դատապարտեց նրանց՝ կեղծավոր անվանելով (Մատթեոս 6.16)։ Ցավալի է, որ վաղ և միջնադարյան եկեղեցիները վերադարձան փարիսեցիների սխալմունքին՝ դարձնելով ծոմապահությունը կանոնակարգված ծես և ճշմարիտ քրիստոնեական աստվածապաշտության նշան։

5. **Հիսուսը տարանջատեց ծոմապահության հին կարգը (որը կատարում էին փարիսեցիները և Հովհաննես Մկրտչի աշակերտները) նոր կարգից (որը կատարելու էին Իր աշակերտները)**[4]։ Ի տարբերություն փարիսեցիների դատարկ ծեսի, Քրիստոսի աշակերտների ծոմապահությունը պետք է ծնվեր Աստծո հանդեպ ի սրտե փափագից և ձգտումից։ Ի տարբերություն Հովհաննեսի աշակերտների, Քրիստոսի աշակերտները չպետք է ծոմ պահեին որպես փրկությանը սպասող մարդիկ, այլ՝ որպես մարդիկ, որոնք արդեն ընդունել էին այն։

6. **Թեև Հիսուսն ասաց, որ Իր աշակերտները ծոմ էին պահելու, Նոր կտակարանում չկա ծոմապահություն կատարելու ոչ մի անմիջական պատվիրան կամ հորդոր**[5]։ Թեև ծոմապահության մասին պետք է սովորեցնել և երբեմն էլ խրախուսել այն, այնուամենայնիվ, ծոմապահությունը չպետք է պահանջել, պատվիրել, պարտադիր դարձնել կամ վերածել հոգևոր լինելու նշանի։ Նման քայլը վերադարձ է փարիսեցիների և միջնադարյան եկեղեցու սխալմունքին։

7. **Հերձվածություն է դրդել մարդկանց հրաժարվել «կերակուրներից, որ Աստված ստեղծեց հավատացյալների և ճշմարտությունը ճանաչողների համար, որ գոհությամբ վայելեն»**[6]։ Ավելին, Աստվածաշունչը սովորեցնում է, որ հավատացյալներն ազատ են տոնական օրերին հետևելու և կերակուրի հարցերում. «Օրին մտիկ անողը՝ Տիրոջ համար է մտիկ անում, և օրին մտիկ չանողը՝ Տիրոջ համար մտիկ չի անում։ Եվ ուտողը՝ Տիրոջ համար է ուտում, որովհետև Աստծուց գոհանում է, և չուտողը՝ Տիրոջ համար չի ուտում, և Աստծուց գոհանում է» (Հռոմեացիների 14.6)։

8. **Առաջին եկեղեցին ծոմապահություն էր կատարում Գործք առաքելոց գրքում**[7]։ Այնուամենայնիվ, սա հաճախակի երևույթ չէ Գործք առաքելոց գրքում, և հատուկ ցուցումների բացակայությունը Նոր կտակարանում ցույց է տալիս, որ ծոմապահությունը հաճախակի տեղի չէր ունենում։ Ինչպես նշում են բազմաթիվ աստվածաբաններ, Առաջին եկեղեցու շատ ավելի ճշգրիտ նկարագրությունը գտնվում է Գործք 2.42-47-ում։ Ավելին, պետք է հաշվի առնել, որ Գործք առաքելոց գրքում ներկայացված երկու խոշորագույն աղոթքի հավաքույթներում ծոմապահությունը չի հիշատակվում (Գործք 1.12-2.4, 4.23-31)։

9. **Թեև եկեղեցին ծոմ պահեց մինչև Պողոսին և Բառնաբասին հանձնարարական տալը և մինչև Փոքր Ասիայում առաջնորդներ նշանակելը, ծոմապահությունը հստակորեն չի պատվիրվում և չի ենթադրվում որպես պահանջ**[8]։ Հիսուսն անցկացրեց ամբողջ գիշերն աղոթքի մեջ, մինչև տասներկու առաքյալներին ընտրելը, բայց այս դեպքում չկա ոչ մի նշում ծոմապահության մասին (Ղուկաս 6.12)։ Չկա ոչ մի նշում ծոմապահության մասին, երբ առաքյալներն ընտրում էին Մատաթիային (Գործք 1.23-26) կամ յոթ սարկավագներին (Գործք 6.1-6)։ Պողոսը չի տալիս որևէ հրահանգ Տիմոթեոսին և Տիտոսին ծոմապահության վերաբերյալ՝ երեցներ կամ սարկավագներ ընտրելու և նշանակելու հարցում (Ա Տիմոթեոս 3.1-15, Տիտոս 1.5-9)։

---

[4] Մատթեոս 9.16,17
[5] Մատթեոս 6.16, 9.14,15
[6] Ա Տիմոթեոս 4.3
[7] Գործք 13.2, 14.23
[8] Գործք 13.1,2, 14.23

10. **Բացի Մատթեոս 6.16-18-ում գտնվող Քրիստոսի հպանցիկ ցուցումից ծոմապահության մասին, Սուրբ գիրքը չի տալիս մեզ հստակ կամ մանրամասն ցուցումներ այն մասին, թե երբ և ինչպես ծոմապահություն կատարել**: Ծոմապահության մասին մեր գիտելիքի մեծ մասը ստացվում է պատմություններից, օրինակներից, նաև մարգարեական հանդիմանություններից և խոստումներից: Հաշվի առնելով ծոմապահության վերաբերյալ ցուցումների սակավությունը, աստվածաշնչյան ծոմապահությունը մեծապես կախված է Աստծո ամբողջական խորհրդի հասուն ընկալումից՝ այն կերպով, որով այն հայտնված է Սուրբ գրքում (Հռոմեացիների 12.2) և Սուրբ Հոգու առաջնորդության պատշաճ ընկալումից (Սաղմոս 32.8, Հռոմեացիների 8.14):

11. **Մեկնողական առումով, սխալ է բարձրացնել ծոմապահությունը նույն աստիճանի, ինչ աղոթքը**: Ամբողջ Նոր կտակարանում կան բազմաթիվ պատվերներ և հրահանգներ աղոթքի մասին: Հավատացյալներին պատվիրվում է աղոթել, և նրանք ստանում են ծավալուն ցուցումներ աղոթքի վերաբերյալ: Նմանատիպ պատվերներ և ցուցումներ ծոմապահության մասին գրեթե բոլորովին բացակայում են Ավետարաններում և Առաքելական թղթերում:

12. **Աստվածաշնչում աղոթքը և ծոմապահությունը երբեմն միասին են կատարվում**[9]: Այնուամենայնիվ, չկա որևէ վավերական աստվածաշնչյան փաստարկ՝ հավատալու կամ սովորեցնելու համար, որ ծոմապահությունն ավելի արդյունավետ է դարձնում աղոթքը: Թեև կան շատ դեպքեր, որոնցում Աստված պատասխանում է ծոմապահություն կատարողների խնդրանքներին (Մատթեոս 6.17,18), ծոմապահությունը չի երաշխավորում աղոթքի պատասխան ստանալը (օրինակ՝ Աստված չբժշկեց Դավթի որդուն, Բ Թագավորաց 12.15-23):

13. **Ծոմապահությունը կարելի է համարել օգնություն հոգևոր պատերազմում**: Այնուամենայնիվ, այս եզրակացությունը պետք է անել՝ ելնելով Սուրբ գրքի ընդհանուր ուսուցումից, ոչ թե որևէ առանձին հատվածից (օրինակ՝ Մարկոս 9.28. «Եվ Նա ասաց նրանց. «Այդ ցեղը ուրիշ բանով անկարելի է դուրս գա, եթե ոչ աղոթքով և ծոմով»»):

14. **Ծոմապահությունը կարող է օգտակար լինել մարմինը հնազանդեցնելու և Աստծո կամքին ենթարկելու համար**[10]: Այնուամենայնիվ, ցանկացած հակվածություն դեպի ճգնավորական սովորույթները և մարմնի հանդեպ դաժան վերաբերմունքը՝ պետք է մերժվի անմիջապես և հիմնավոր կերպով (Կողոսացիների 2.23):

15. **Ծոմապահությունից ստացվող ցանկացած հոգևոր օգուտ կարող է արժեզրկվել մեղքի պատճառով**: Աստված մերժեց Իսրայելի ծոմապահությունը, քանի որ այն զուրկ էր ապաշխարությունից, որը դրդում է բարի գործերի (Եսայի 58.1-14): Երուսաղեմի և Հուդայի քաղաքների բոլոր մարդիկ ծոմապահություն հայտարարեցին և լսեցին Երեմիայի գրված խոսքերը: Այնուամենայնիվ, նրանք ուշադրություն չդարձրին Երեմիայի զգուշացմանը (Երեմիա 36.20-26): Փարիսեցիները ծոմ էին պահում շաբաթը երկու անգամ, սակայն նրանց ծոմապահությունը չէր վարձատրվում՝ իրենց կեղծավորության և սեփական անձը փառավորելու ցանկության պատճառով (Մատթեոս 6.16, Ղուկաս 18.9-14):

16. **Ծոմապահության հարցում մեծապես անհրաժեշտ է ունենալ աստվածաշնչյան և գործնական իմաստություն**: Սա հատկապես ճշմարիտ է ծոմապահության տևողությունը և ձևը որոշելու համար: Երկարաձգված ծոմապահությունը կարող է թուլացնել մարմինը (Սաղմոս 109.24): Այն ծոմապահությունները, որոնք կատարեցին Մովսեսը և Եղիան՝ քառասուն օր ու գիշեր առանց կերակուրի և ջրի (Ելից 34.28, Երկրորդ Օրինաց 9.9,18, Գ Թագավորաց 19.8), գերբնական էին, և չպետք է փորձել կրկնել դրանք: Առողջ մարդը կարող է գոյատևել քառասուն օր՝ առանց կերակուրի, բայց չի կարող գոյատևել երեք օրից ավելի՝ առանց ջրի: Հատուկ առողջական խնդիրներ (օրինակ՝ սրտի հետ կապված, շաքարախտ, հղիություն և այլն) ունեցող մարդիկ պետք է խորհրդակցեն բժշկի հետ:

---

[9] Ա Թագավորաց 7.5,6, Բ Թագավորաց 12.16,21-23, Բ Մնացորդաց 20.3,5, Եզրաս 8.21-23, Նեեմիա 1.4, 9.1, Եսայի 58.6,9, Երեմիա 14.12, Դանիել 9.3, Ղուկաս 2.37, Գործք 13.2,3, 14.23

[10] Ա Կորնթացիների 9.24-27

ՀԱՍԿԱՆԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Հավելված. Գործնական ցուցումներ ծոմապահության վերաբերյալ

Ավարտելով մեր ուսումնասիրությունը՝ կդիտարկենք մի շարք համառոտ, բայց կարևոր գործնական խորհուրդներ ծոմապահության վերաբերյալ:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԺՇԿԻ ՀԵՏ

Կարճատև ծոմապահությունը վտանգավոր չէ սովորական առողջ մարդու համար: Այնուամենայնիվ, հղի կանայք և առողջական խնդիրներ ունեցող մարդիկ պետք է խորհրդակցեն բժշկի հետ մինչև ծոմապահություն սկսելը: Ձեր Տեր Աստծուն փորձելը հոգևոր լինելու դրսևորում չէ (Մատթեոս 4.7):

ՄԱՐՄՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. **Ծոմապահությունը կարող է թուլացնել ձեր մարմինը**: Դավիթը գրում է. «Իմ ծնկները տկարացան ծոմից, և մարմինս մաշվեց իր պարարտությունից» (Սաղմոս 109.24):

2. **Թթվածնից հետո, ջուրը մարդու կյանքի ամենակարևոր բաղադրիչն է**: Մարդու մարմնի ընդհանուր քաշի 70-75%-ը և արյան մոտավորապես 90%-ը կազմված են ջրից: Այս պատճառով, մարմինը պետք է ընդունի օրական մոտավորապես 2 լիտր ջուր: Ծայրահեղ դեպքերում մարդիկ գոյատևել են մեկ շաբաթ՝ առանց ջրի, բայց օրգանիզմը դադարում է գործել կանոնավոր ընդամենը մի քանի օր անց: Աստվածաշնչում նկարագրվում է մի քանի գերբնական ծոմապահություն (Ելից 34.28, Երկրորդ Օրինաց 9.9,18, Գ Թագավորաց 19.8), որոնց ընթացքում մարդը ջուր չէր օգտագործում քառասուն օր շարունակ: Այդպիսի ծոմապահություններ խորհուրդ *չի* տրվում կատարել:

3. **Թթվածնից և ջրից հետո, առողջ կերակուրը մարդու կյանքի երրորդ ամենակարևոր բաղադրիչն է**: Թեև հիմնականում ծոմապահության ժամանակ կերակուր չի օգտագործվում, պատճառն այն չէ, որ կերակուրը ոչ հոգևոր չարիք է: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ Աստված ստեղծեց կերակուրը հավատացյալների և ճշմարտությունը ճանաչողների համար, որ գոհությամբ վայելեն (Ա Տիմոթեոս 4.3):

4. **Թեև ծոմապահությունը կարող է անհարմարավետություն առաջացնել մարմնում, դա չէ ծոմապահության նպատակը**: Ինչպես և կերակուրը, մարմինը ստեղծվել է Աստծո կողմից և բարի է: Ճգնավորական սովորույթները տեղ չունեն աստվածաշնչյան ծոմապահության մեջ: Սուրբ գիրքը զգուշացնում է, որ մարմնին խստորեն վերաբերվելը անօգուտ է մարմնավոր ցանկությունների դեմ պայքարելու հարցում (Կողոսացիների 2.23):

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ, ԴՐԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ

1. **Առողջ սննդակարգ պահպանող և առողջ կենսակերպ ունեցող մարդու համար ծոմապահությունը շատ ավելի հեշտ և հաճելի կլինի**:

2. **Կերակուրի չարաշահումը կամ առատ սննդի ընդունումը ծոմապահությունից առաջ կամ հետո կոպիտ սխալ է՝ թե՛ հոգևորապես, թե՛ ֆիզիկապես**: Նման կերպով սնվելը ոչ միայն զրոյացնում է ծոմապահության նպատակը, այլև անհարմարավետություն է պատճառում ծոմապահության ընթացքում կամ դրանից հետո:

3. **Ծոմապահության ընթացքում անչափ կարևոր է բավարար քանակությամբ ջուր խմել՝ առնվազն օրական երկու լիտր**:

4. **Ծոմապահության առաջին մի քանի օրերի ընթացքում գլխապտույտը և նույնիսկ թեթև սրտխառնոցը սովորական են: Դրանք առաջանում են, քանի որ մարմնում գտնվող թունավոր նյութերը դուրս են գալիս**: Թունավոր նյութերը կուտակվում են մարմնում անառողջ սնվելու պատճառով: Այնուամենայնիվ, եթե այս ախտանշանները չեն դադարում, խելամիտ կլինի դադարեցնել ծոմապահությունը և խորհրդակցել բժշկի հետ:

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. **Աստվածաշնչում գտնում ենք ծոմապահության տարբեր տեսակներ**: Դրանց թվում են. քառասուն օր տևող գերբնական ծոմապահություններ՝ առանց կերակուրի և ջրի (Ելից 34.28, Երկրորդ Օրինաց 9.9,18, Գ Թագավորաց 19.8), լիակատար հրաժարում կերակուրից և ջրից երեք օրով (Եսթեր 4.16), հրաժարում կերակուրից քառասուն օրով (Մատթեոս 4.1,2), հրաժարում անուշահամ կերակուրներից՝ հիմնական սննդակարգի պահպանմամբ (Դանիել 10.3) և ծոմապահություն քուրձով և մոխրով (Գ Թագավորաց 21.27, Նեեմիա 9.1, Սաղմոս 35.13):

2. **Աստվածաշնչում գտնում ենք ծոմապահության տարբեր տևողություններ**: Դրանց թվում են. արևածագից մինչև արևամուտ (Դատավորաց 20.26, Ա Թագավորաց 14.24, Բ Թագավորաց 1.12, 3.35), երեք օր (Եսթեր 4.16), յոթ օր (Ա Թագավորաց 31.13), երեք շաբաթ (Դանիել 10.3) և քառասուն օր (Ելից 34.2,28, Երկրորդ Օրինաց 9.9,18, Գ Թագավորաց 19.8, Մատթեոս 4.1,2):

3. **Աստվածաշունչը չի կարգադրում հստակ տևողություն ծոմապահության համար**: Նրանց համար, ովքեր նոր են սկսում ծոմ պահել, խելամիտ կլինի սկսել քչից և աստիճանաբար ավելացնել ծոմապահության տևողությունը՝ հետևելով ծոմապահություն կատարելու ցանկության և իմաստության թելադրանքին: Որպես սկիզբ, հավատացյալը կարող է հրաժարվել մեկանգամյա կերակուրից և օգտագործել այդ ժամանակը աղոթքով Տիրոջը փնտրելու համար: Դրանից հետո նա կարող է առաջ գնալ՝ ծոմ պահելով օրվա կեսը կամ առավոտից երեկո, իսկ հետո ավելացնել ծոմապահության տևողությունը՝ հետևելով ծոմապահություն կատարելու ցանկության, աստվածաշնչյան իմաստության և Սուրբ Հոգու թելադրանքին: Նույնիսկ ժամանակակից քրիստոնեության մեջ կան մարդիկ, ովքեր դեռևս ծոմ են պահում մեկ կամ երկու շաբաթ:

ԱՆՁՆԱԿԱՆ

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

ԹՈՄԱՍ ԲՈՍՏՈՆ

ԱՆՁՆԱԿԱՆ **ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ** ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

Հեղինակ՝ Թոմաս Բոստոն (1676-1732)

Հանրության սեփականություն: Սկզբնապես հրատարակվել է *«Հուշամատյան՝ անձնական և ընտանեկան ծոմապահության և խոնարհության»* վերնագրով *«Բոստոնի աշխատությունների լիակատար ժողովածուի»* մեջ *(11-րդ հատոր):* Խմբագիր Ֆորեսթ Հայթը ներկայացնում է ավելի մանրամասն տեղեկություն այս աշխատության կրճատման և արդիականացման գործընթացի մասին այս գրքի ներածության «Խմբագրի խոսք» բաժնում:

Հրատարակված է.

«Հարթ Քրայ» Միսիոներական ընկերություն
Փ/Ա 3506
Ռեդֆորդ, Վիրջինիա 24143

www.heartcrymissionary.com

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, 2020թ.

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, կամ, հատուկ նշումների դեպքում, «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչից» (NASB):

Կրճատված, արդիականացված և խմբագրված Ֆորեսթ Հայթի կողմից

ՀԱՍԿԱՆԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 1. Ընդհանուր ակնարկ անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու մասին

Այս հիշեցումը[11] ներկայացվում է և՛ սրբերին, և՛ մեղավորներին կրոնական ծոմապահությունների վերաբերյալ, որոնք անհատը կատարում է ծածուկում: Նման ծոմապահություններն իրոք որ ամեն ժամանակ կատարվող սովորական պարտականություններ չեն. չի պահանջվում դրանք կատարել ամեն օր կամ պարբերաբար, ինչպես աղոթքի, փառաբանության և Խոսքի ընթերցման պարտականությունները: Փոխարենը, դրանք արտասովոր պարտականություններ են որոշակի ժամանակների համար, և պետք է կատարվեն հազվադեպ, և դրանց անհրաժեշտությունը լիովին կախված է նախախնամության կանչից (որը փոփոխական է):

Այս պարտականությունները և՛ նկարագրված են, և՛ պատվիրված են մեզ Աստծո Խոսքում: Այդ իսկ պատճառով, երբ կատարում ենք դրանք, մենք պետք է ասենք. «Այնպես էլ դուք, երբ որ բոլոր ձեզ հրամայված բաներն անեք, ասեք թե՝ մենք անպիտան ծառաներ ենք, որովհետև այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու» (Ղուկաս 17.10): Մենք պետք է անարգենք նույնիսկ փոքրագույն միտքն այն մասին, որ կարելի է փորձել շահել Աստծո բարեհաճությունը կամ արժանանալ դրան ծոմապահության միջոցով:

Ծոմապահության մասնավոր ժամանակահատվածները որոշված են նախախնամության կողմից. այդ իսկ պատճառով, ծոմապահություն կատարողները պետք է շատ զգայուն լինեն Աստծո կանչի հանդեպ[12]: Այլապես հնարավոր է, որ Աստված կանչի լացելու և սգալու, իսկ մարդիկ անմտորեն տրվեն ցնծության և ուրախության (Եսայի 22.12,13): Նման արձագանքը վտանգավոր է: «Անշուշտ չպիտի քավվի ձեր այս անօրինությունը, մինչև որ մեռնեք,- ասում է Զորաց Տեր Աստված» (խս. 14): Սա է պատճառը, որ ամենալուրջ և զգայուն քրիստոնյաներն են, որ առավել պատրաստակամորեն և հաճախակի են կատարում այս վարժանքները:

Ծոմապահությունը բաղկացած է թե՛ (1) արտաքին կամ օժանդակ մասից, թե՛ (2) ներքին կամ էական մասից:

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՄ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍԸ

Ինչ վերաբերում է արտաքին կամ օժանդակ մասին, մենք կդիտարկենք հետևյալը. ***ժամանակը***, ***վայրը*** և ***ժուժկալությունը***:

ԺԱՄԱՆԱԿԸ

Նախ և առաջ, անհրաժեշտ է պատշաճ ժամանակ առանձնացնել այս պարտականությունների համար: Ժամանակը պետք է հարմարեցվի քրիստոնեական խոհեմությամբ, համաձայն մարդու իրավիճակի:

Ինչ վերաբերում է ***օրվա ժամանակին***, մենք տեսնում ենք, որ սրբերն Աստվածաշնչում ծոմ էին պահում ցերեկվա ընթացքում: Այնուամենայնիվ, կա նաև դեպք, երբ անձնական ծոմապահությունը կատարվում

[11] Բնօրինակում՝ «հուշամատյան»:
[12] Բնօրինակում՝ նրանք պետք է լինեն «նախախնամության կրոնական դիտորդներ»:

էր գիշերվա ընթացքում՝ Բ Թագավորաց 12.16. «Դավիթը ծոմ պահեց և գնաց գիշերն անցկացրեց գետնի վրա պառկած»: Ես նշում եմ սա, միայն որպեսզի շրջանցեմ այն մարդկանց արդարացումը, որոնք անտեսում են իրենց պարտականությունը՝ ձևացնելով, թե չեն վերահսկում իրենց ժամանակը: Եթե սիրտը մղվի ծոմապահության, մարդը պատրաստակամորեն ինչ-որ ժամանակ կգտնի դրա համար՝ թե՛ ցերեկվա, թե՛ գիշերվա ընթացքում: Գրված է ի պատիվ Աննա անունով մի կնոջ, որ ծառայում էր Աստծուն «ծոմերով և աղոթքներով գիշեր ու ցերեկ» (Ղուկաս 2.36,37):

Ինչ վերաբերում է ***տևողությանը***, կարծում եմ՝ մարդու կարիքը կամ իրավիճակը չպետք է հարմարեցվեն ծոմապահության տևողությանը. փոխարենը, ծոմապահության տևողությունը պետք է հարմարեցվի մարդու կարիքին կամ իրավիճակին[13]: Եսթերի ծոմապահությունն իր աղախինների հետ, որը կատարում էին նաև Շուշան քաղաքում ապրող բոլոր հրեաները, տևեց երեք օր (Եսթեր 4.16): Մենք կարդում ենք «ծոմապահության օրվա» մասին Երեմիա 36.6-ում: Երբեմն թվում է՝ ծոմապահությունը տևում էր ընդամենը օրվա մի մասը, ինչպես Կոռնելիոսի անձնական ծոմապահության դեպքում, որը կարծես տևեց մինչև իններորդ ժամը (այսինքն՝ մինչև ցերեկվա ժամը երեքը). «Չորս օրից առաջ մինչև այս ժամը ծոմ էի պահում և իններորդ ժամին իմ տան մեջ աղոթք էի անում» (Գործք 10.30): Դանիելը ծոմ պահեց և աղոթեց մինչև պատասխան ստանալը «երեկոյան զոհի ժամանակ» (Դանիել 9.21), որը երեկոյան ժամը ինն էր:

Այս պատճառով, ես համոզված եմ, որ մարդիկ չպետք է մտահոգված լինեն[14] այս վարժանքներին տրամադրված ժամանակի տևողությամբ. փոխարենը, նրանք պետք է մտահոգված լինեն ծոմի նպատակով: Ես իսկապես կարող եմ պնդել, որ հաճախ մարդիկ ծուղակ են պատրաստում իրենց համար նման դեպքերում՝ պարտավորվելով որոշակի տևողության: Բավական է ասել, որ, համաձայն մեր կարողության, մենք կտրամադրենք այնքան ժամանակ, որքան այդ աշխատանքը կպահանջի մեզնից:

ՎԱՅՐԸ

Անհրաժեշտ է նույնպես ընտրել պատշաճ վայր, որտեղ մարդը կարող է կատարել այս պարտականությունն այնպես, որ այլ մարդիկ չխանգարեն նրան: Ե՛վ ժամանակը, և՛ վայրը ծոմապահության բնական (ոչ գերբնական) հանգամանքներ են: Այժմ՝ Ավետարանի ներքո, բոլոր վայրերը նույնն են, և մեկն ավելի սուրբ չէ, քան մյուսը: Մարդիկ կարող են աղոթել ցանկացած վայրում՝ թե՛ տանը, թե՛ դաշտում՝ սուրբ ձեռքերը վեր բարձրացնելով (Ա Տիմոթեոս 2.8): Բայց և այնպես, հաշվի առնելով, որ անձնական ծոմապահությունը ծածուկ պարտականություն է, այն պահանջում է ծածուկ վայր, ինչպես որ նշված է մեր Փրկչի զգուշացման մեջ. «Որ մարդկանց ծոմ պահող չերևաս, այլ քո Հորը, որ ծածուկում է» (Մատթեոս 6.18):

ԺՈՒԺԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Ժուժկալությունը ծոմի էական մասն է՝ ժուժկալություն ուտելիքից և ըմպելիքից, ժուժկալություն մարմնի հաճույքներից և ժուժկալություն այս աշխարհի գործերից: Հրեաներն անուշադրության էին մատնվում Աստծո կողմից իրենց ծոմապահության ժամանակ, քանի որ նրանք կատարում էին իրենց ցանկությունները և նեղում էին իրենց աշխատողներին (Եսայի 58.3): Կրոնական ծոմապահությունն այնպիսի ժամանակ է, երբ մարդը «ճգնում է իր հոգով» (կամ՝ «խոնարհեցնում է իրեն», խս. 5)՝ զրկելով այն օրինավոր հարմարավետություններից և հաճույքներից, որոնք նա կարող է ազատորեն գործածել այլ ժամանակ: «Եվ ժողովուրդը... սուգ արեց, և ոչ մեկն իր զարդն իր վրա չդրեց» (Ելից 33.4): «Եվ ես դարձրի իմ երեսը դեպի Տեր Աստված, որ աղոթք և աղաչանք մատուցեմ ծոմով և քուրձով ու մոխրով» (Դանիել 9.3): «Իրար մի՛ զրկեք, բայց միայն իրար հետ միաբանվելով մի քիչ ժամանակի համար, որ ծոմապահության և աղոթքի պարապեք» (Ա Կորնթացիների 7.5):

[13] Բնօրինակում՝ «Ինչ վերաբերում է տևողությանը... ես համարում եմ, որ այս (ծոմապահության) պարտականությունը պետք է կարգավորի այն, ոչ թե այն կարգավորի այս պարտականությունը»:

[14] Բնօրինակում՝ «անհանգստանան»:

Ուտելիքից և ըմպելիքից ժուժկալ լինելու կանոնները չեն կարող նույնը լինել բոլորի համար: Ծոմապահությունն ինքնին երկրպագության մաս չէ. այն միջոց է, որը պատրաստում և սպառազինում է մեզ արտասովոր երկրպագության համար: Այնպես որ, այն պետք է օգտագործվի միայն որպես ***օգնություն*** կամ ***օժանդակություն*** երկրպագության մեջ: Ավելին, կարելի է վստահաբար ասել, որ դրա որոշակի ձևը, որն օգտակար կլինի ոմանց համար, մյուսների համար կվերածվի մեծ խոչընդոտի: Այդ իսկ պատճառով, ավելի թույլ առողջություն ունեցող մարդիկ, որոնք լիակատար ժուժկալության դեպքում սահմանափակ կդառնան և չեն կարողանա երկրպագել (ինչը ծոմապահության նպատակի ճիշտ հակառակն է), կանչված չեն ծոմապահության այդ կերպով. նրանց դեպքում առաջնահերթ է Աստծո հետևյալ խոսքը. «Որովհետև ողորմություն եմ ուզում, և ոչ թե զոհ» (Ովսե 6.6): Բայց և այնպես, նման մարդիկ, միևնույն է, կարող են դիմել մասնակի ժուժկալության և հրաժարվել անձնատուր լինել ուտելիքին և ըմպելիքին նույն ազատությամբ, որով վարվում են այլ դեպքերում՝ փոխելով դրանց քանակը կամ որակը (կամ երկուսն էլ): Այսպես վարվելով՝ նրանք նույնպես կարող են «խոնարհվել» (Ղևտացիների 23.29)՝ ինչպես Դանիելը, ով իր սգի մեջ «ախորժելի հաց (չկերավ) և միս ու գինի չմտավ (նրա բերանը)» (Դանիել 10.3):

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՄ ԷԱԿԱՆ ՄԱՍԸ

Այն, ինչ հիշատակված է վերևում, ընդամենը ծոմապահության արտաքին պատյանն է. դրա ներքին կամ էական մասը հետևյալ հոգևոր վարժանքներն են:

1. ԼՈՒՐՋ ՄՏՈՐՈՒՄ ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՔՆՆՈՒՄ. «Եվ հիմա այսպես է ասում Զորաց Տերը. «Ձեր ուշը դարձրե՛ք ձեր ճանապարհներին»» (Անգե 1.5): Մենք պետք է ջանասիրաբար վերանայենք մեր անցած կյանքը: Ամեն անգամ, երբ ծոմապահություն ենք կատարում, պետք է դադարենք հաղորդակցվել այս աշխարհի հետ, որպեսզի կարողանանք ավելի լուրջ քննել մեր սրտերը՝ հասկանալու համար Աստծո և մեր հարաբերությունների վիճակը: «Քննենք մեր ճանապարհները և փորձենք» (Ողբ Երեմիայի 3.40): Մենք պետք է ***որոնելով գտնենք*** մեր մեղքերը՝ զղջումով վերհիշելով մեր սրտում և կյանքում գործած մեղքերը, լինելով այնքան ճշգրիտ այս հարցում, որքան կարող ենք: Եվ մենք պետք է ***քննենք*** դրանք՝ խորապես դիտարկելով դրանցում եղած չարիքը. (1) մենք պետք է մտորենք այն լույսի, սիրո, ողորմությունների և զգուշացումների շուրջ, որոնց դեմ մեղանչել ենք, և (2) մենք պետք է գնանք Աստծո դեմ գործած այդ ծանրացուցիչ հանգամանքների հետքերով, մինչև որ հասնենք մեր մեղավոր բնությանը՝ այն թունավորված աղբյուրին, որից այդ ամենը բխել է: Որքան ավելի ամբողջական և լիարժեք խոսենք մեր մեղքերի մասին ինքներս մեզ հետ, այնքան ավելի պատշաճ վիճակում կլինենք, որպեսզի խոսենք դրանց մասին Աստծո հետ՝ խոստովանելու և ներում խնդրելու ժամանակ:

2. ԱՆՁԻ ԽՈՐԻՆ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՋ ԱՌՋԵՎ. Հին կտակարանի օրենքի ներքո սա արտահայտվում էր քուրձ և մոխիր հագնելով: Մենք պետք է քննենք մեր ճանապարհները, մինչև որ մեր անձը խոնարհվի մեր ներսում, մինչև որ մեր սիրտը պատռվի զղջումից, ափսոսանքից և ծանոթ[15] տրտմությունից մեղքի պատճառով, որը հանցանք է ողորմած և գթած Աստծո առջև (Հովել 2.12,13): Մենք պետք է քննենք մեր ճանապարհները, մինչև որ մեր երեսը ծածկվի ամոթով և շփոթությամբ Նրա առջև՝ մեր հոգևոր մերկության, անօրինության և պղծության պատճառով (Եզրաս 9.6), և մեր անձն իսկ զզվանք առաջացնի մեզ մոտ և անկարևոր ու չնչին համարվի մեր կողմից (Եզեկիել 36.31, Հոբ 40.4):

[15] Բնօրինակում՝ «բնական» (այսինքն՝ «ակամա» կամ «ինքնաբերական»):

3. ՄԵՂՔԻ ԱՋԱՏ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈ ԱՌՋԵՎ՝ ԱՌԱՆՑ ՎԵՐԱՊԱՀՄԱՆ. Մեզնից պահանջվող կրոնական ծոմապահության պարտականության մեջ խոստովանությունը շատ կարևոր մաս է: Մեր ճանապարհները քննելը և մեր անձերը խոնարհեցնելը՝ այն քայլերը, որոնք բերված են վերևում, բնականորեն առաջացնում են մեղքի արտասովոր խոստովանություն՝ մի վարժանք, որն ամենից համապատասխանն է նման դեպքում: Հրեաներն անցկացրին օրվա մեկ չորրորդ մասը՝ խոստովանելով և երկրպագելով (Նեեմիա 9.3), և այն հրեշտակը, որը բերեց Դանիելի խնդրանքների պատասխանը, գտավ նրան աղոթելիս և իր մեղքը խոստովանելիս (Դանիել 9.20,21): Խոնարհված մեղավորն իրապես որ մեծ գործ ունի այս դեպքում[16]. (1) նա կատարում է մեղադրողի դերն իր դեմ՝ ներկայացնելով սուրբ օրենքի իր զանցանքները Տիրոջ առջև, որքան որ կարող է հիշել, (2) օրենսգետի դերը՝ մտաբերելով այդ հանցանքների մանրամասները և ծանրացուցիչ հանգամանքները, և (3) դատավորի դերը՝ և՛ արդարացնելով Աստծուն ամբողջ դատաստանով, որը Նա բերել է իր վրա, և՛ դատապարտելով իրեն՝ որպես անարժան նույնիսկ Նրա փոքրագույն ողորմություններին և արժանի կործանվելու հավիտենական զայրույթի ներքո:

4. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՐՏՈՒՄ ԵՎ ԿՅԱՆՔՈՒՄ. Ապաշխարությունը՝ մեղքը թողնելու և Աստծուն դառնալու վարժանք է. այն խորին խոնարհության և անկեղծ խոստովանության բնական արդյունքն է: «Դեպի Ինձ դարձե՛ք ձեր ամբողջ սրտով և ծոմով ու լացով և սուգով» (Հովել 2.12): Մենք զուր ենք ծոմ պահում, եթե մեր սերը մեղքի հանդեպ չի վերածվում ատելության, եթե մեր հավանությունը մեղքի հանդեպ չի վերածվում խորշանքի, և եթե մեր կապվածությունը մեղքին չի վերածվում դրանից ազատվելու ձգտման: Մենք զուր ենք ծոմ պահում, եթե լիարժեք որոշում չենք կայացնում հակառակվել դեպի մեղքն արված ցանկացած քայլի մեր սրտում և մեղքի ցանկացած բռնկման մեր կյանքում: Մենք զուր ենք ծոմ պահում, եթե չենք դառնում Աստծուն՝ մեր օրինավոր Տիրոջը, և չենք վերադառնում մեր կոչմանը՝ Նրա ծառաները լինելուն: Եթե ճշմարտապես ապաշխարենք, մենք կշրջվենք մեղքից ոչ միայն՝ որ այն վտանգավոր և կործանարար է մեզ համար, այլև՝ որ այն վիրավորում է Աստծուն, անարգում է Նրա Որդուն, տրտմեցնում է Նրա Հոգուն, զանցում է Նրա օրենքը և եղծանում է Նրա պատկերը: Եթե ճշմարտապես ապաշխարենք, մենք կհեռացնենք մեզնից մեր բոլոր օրինազանցությունները՝ ինչպես մի մարդ, որը դեն է նետում իրենից այն վառվող ածուխը, որն այրում է իրեն, և ինչպես մի մարդ, որը դեն է նետում իրենից այն պիղծ բանը, որը կեղտոտում է և զզվանք է պատճառում իրեն: Բայց այս ամենի հետ մեկտեղ մենք պետք է հիշենք, որ խստացած սրտի հետ աշխատելու և այն նման խառնվածքի հասցնելու ճշմարիտ միջոցը ***Ավետարանի հանդեպ հավատքն է:*** Ինչպես որ գիշատիչ թռչունները սկզբում վեր են սավառնում, իսկ հետո ցած են նետվում դեպի իրենց զոհերը, այնպես էլ մենք պետք է նախ՝ հավատքով վեր սավառնենք, իսկ հետո ցած իջնենք՝ խորին խոնարհությամբ, անկեղծ և ազատ խոստովանությամբ ու ճշմարիտ ապաշխարությամբ. «Նրանք պիտի մտիկ տան Ինձ, Ում խոցեցին, և սուգ պիտի անեն» (Զաքարիա 12.10): Սուրբ գիրքը հայտնում է մեզ, որ մեր ապաշխարության դրդապատճառն Աստծո շնորհքի խոստումն է, և ցույց է տալիս, որ հավատքն այս խոստման հանդեպ կշարժի խստացած սրտերը. «Եվ ետ դարձե՛ք դեպի ձեր Տեր Աստվածը, ըստ որում (կամ՝ «որովհետև») ողորմած... է» (Հովել 2.13): Ինչ-որ մեկը կարող է երկար և ծանր աշխատանք կատարել՝ ապաշխարելու համար. այնուամենայնիվ, առանց հավատքի Աստծո այս խոստման հանդեպ, այդ ամենը զուր է: Առանց հավատքի «անկարելի է» հաճելի լինել Աստծուն (Եբրայեցիների 11.6). նշանակում է՝ առանց հավատքի անկարելի է հասնել ճշմարիտ խոնարհության, իրական խոստովանության և անկեղծ ապաշխարության՝ այն ամենին, ինչը մեծապես հաճելի է Նրան (Երեմիա 31.18-20): Օրենքը կարող է զարհուրանք առաջացնել չապաշխարող մեղավորի մոտ, բայց նա երբեք սրտանց չի սգա մեղքի պատճառով՝ առանց Ավետարա-

[16] Բնօրինակում՝ «Որովհետև այստեղ պատշաճ կերպով խոնարհված մեղավորը շատ անելիք ունի...»:

նի ազդեցության[17]: Երբ մարդը հանցանքի մեջ է, նրա սիրտը պատվում է անհավատության սառույցով: Այնուամենայնիվ, հավատքը Փրկչի արյան հանդեպ՝ հալեցնում է այդ սառույցը, և այն սկսում է հոսել՝ աստվածահաճո տրտմության արցունքների տեսքով: ***Անհավատությունը*** հանցանքից ծանրացած անձին առաջարկում է Աստծո մասին խիստ մտքեր, որոնք միայն ավելի ու ավելի են օտարացնում նրան Աստծուց, որպեսզի նա վախով հեռանա Նրանից՝ պաշտպանելով ինքն իրեն: Բայց ***հավատքը*** Աստծո խոստացած ներման հանդեպ այնպես է հպվում ապստամբի սրտին, որ նա գցում է իրեն իր Գերագույն Իշխանի ոտքերի մոտ՝ հոժարաբար անձնատուր լինելով Նրան:

5. ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՈՒԽՏ ԱՍՏԾՈ ՀԵՏ. Այս ուխտը պետք է արվի բարձրաձայն և գիտակցաբար: Որքանով որ ծոմապահության օրը «անիրավության կապանքները» քանդելու օր է (Եսայի 58.6), այնքանով էլ այն բացահայտ կերպով սուրբ ուխտի մեջ մտնելու օր է. «Քայլելով ու լալով պիտի գնան և իրենց Տեր Աստծուն որոնեն... եկեք և Տիրոջը հարենք հավիտենական անմոռաց ուխտով» (Երեմիա 50.4,5): Այս ուխտը բնականորեն հաջորդում է խոնարհությանը, խոստովանությանը և ապաշխարությանը, որոնց միջոցով մեր դաշինքը մեղքի հետ քանդվում է: Այն բաղկացած է հանդիսավոր խոստովանությունից Աստծո առջև, (1) որ մենք ընդունում ենք Նրա ուխտը՝ հավատալով Նրա Որդու անվանը որպես այս աշխարհի Փրկչի և մեր Փրկչի, (2) որ Իր Որդու մեջ և Նրա միջոցով Նա կլինի մեր Աստվածը, և մենք կլինենք Նրա ժողովուրդը, և (3) որ մենք գոհ ենք մեր անձում՝ ընտրելով Նրան որպես մեր բաժինը և մեր Տերը, և հանձնելով մեր անձերը միայն Նրան՝ լիովին և հավիտյան[18]:

6. ԱՐՏԱՍՈՎՈՐ ԱՂՈԹՔ. Մենք պետք է դիմենք մեր ուխտի Աստծուն հաստատակամ[19] խնդրանքներով՝ համաձայն մեր ծոմապահության մասնավոր նպատակի: Խոստովանությունը և ուխտի մեջ մտնելը (համաձայն նախորդ կետերի) պետք է արվեն աղոթքով (կարդացե՛ք Դանիել 9.4-15 և Նեեմիա 9.6-38): Դրա հետ մեկտեղ պետք է բարձրացվեն աղոթքներ, աղաչանքներ և խնդրանքներ այն հատուկ իրավիճակի կամ կարիքի համար, որը դրդել է մարդուն ծոմապահության. «Բայց ես քուրձ էի հագնում՝ նրանք հիվանդանալիս, իմ անձը ծոմով չարչարում էի, բայց իմ աղոթքը իմ ծոցն է դառնում» (Սաղմոս 35.13): Իսկապես որ, այսպիսի ծոմապահության մեծագույն նպատակն է ավելի ***շահագրգռված*** և ***սպառազինված*** դարձնել ծոմապահության մեջ լինող մարդուն, որպեսզի նա աղոթքի մեջ պայքարի Աստծո հետ այն հարցի վերաբերյալ, որը ծանր բեռ է նրա սրտին: Այսպես Նինվեի թագավորը, կործանման սպառնալիքի ծանր բեռի ներքո, հրամայեց, որ «քուրձ հագնեն մարդիկ և անասունները», և որ բոլոր մարդիկ «ուժով աղաղակեն առ Աստված» (Հովնան 3.8): Նինվեացիները պետք է աղաղակեին՝ խնդրելով խղճալ և ողորմել իրենց: Եվ որպեսզի նրանք ավելի ջանասիրաբար անեին դա, հրամայված էր, որ նույնիսկ նրանց կենդանիները ծածկվեին քուրձով: Այս հանգամանքները՝ հուսահատ մարդկանց աղաղակները, անհարմարավետություն և քաղց զգացող կենդանիների ձայներին խառնված (Հոբ 38.41), մեծ լրջություն կհաղորդեին այդ արտասովոր սգին, և մարդկանց սրտերը, որոնք կցավեին անվնաս կենդանիների բոլոր կողմերից լսվող աղաղակներից, կսկսեին ավելի լուրջ, ջանասեր և հաստատակամ աղաչել՝ Աստծո ողորմությունը խնդրելով:

[17] Բնօրինակում՝ «Անհավատ մեղավորին կարելի է դրդել հառաչանքի՝ օրենքի զարհուրանքի պատճառով, սակայն մարդը երբեք հոժարաբար սգացող չի լինի, եթե ոչ Ավետարանի ազդեցությունների ներքո»:

[18] Կարդացե՛ք Սաղմոս 16.2, Եսայի 44.5, 49.8, 56.6, Հովհաննես 1.12 և Եբրայեցիների 8.10 խոսքերը՝ այս մասին ավելին իմանալու համար:

[19] Բնօրինակում՝ «թախանձագին»:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Որո՞նք են Բոստոնի կողմից թվարկված ծոմապահության երեք արտաքին կամ օժանդակ կողմերը։

_____

_____

_____

2. Ընտրե՛ք ծոմապահության ներքին կամ էական կողմերից մեկը կամ երկուսը, որոնք հատկապես տպավորեցին ձեզ։ Ձեր բառերով նկարագրե՛ք այդ քայլ(եր)ի օգուտը ծոմապահության ժամանակ։

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 2. Աստվածային երաշխիք անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու համար

Ոչ մի արարք չի կարող համարվել հնազանդություն Աստծուն, եթե այն չի բխում Աստծո հայտնված կամքից և չի առաջնորդվում դրանով, քանի որ Խոսքը դատապարտում է «ինքնահնար կրոնը» (Կողոսացիների 2.23): Այս պատճառով, ովքեր ցանկանում են հավատքով ծոմապահություն կատարել, պետք է մտածեն այն մասին, թե ***ով է երաշխավորում այն***, որպեսզի իրենք ճշմարտապես հնազանդ լինեն: Որպեսզի լույս սփռենք այս հարցի վրա և այն տպավորվի մեր գիտակցության մեջ՝ որպես Աստծո կողմից հանձնարարված պարտականություն, եկեք մտորենք հետևյալի շուրջ:

1. **Ծոմապահությունն ակնկալվում է Աստծո ժողովրդից Աստծո Խոսքում՝ և՛ ուղղակի, և՛ անուղղակի կերպով**:

   ա. *Այն ակնկալվում է Խոսքում ուղղակի կերպով:* «Տառապե՛ք և սուգ արե՛ք և լացե՛ք» (Հակոբոս 4.9): Այս հրահանգի նախորդ և հաջորդ խոսքերից պարզ է, որ այն տրված է որոշակի մարդկանց՝ նրանց անձնական իրավիճակների կապակցությամբ (կարդացե՛ք 8-րդ և 10-րդ խոսքերը): Այն, թե ինչ էին այս պատվերները պահանջում նրանցից, այսինքն՝ ծոմապահություն կատարելը և իրենց անձերը խոնարհեցնելը, ակնհայտ էր նրանց համար, քանի որ այս նամակը գրվել էր հրեա ազգի ներկայացուցիչներին, որոնք «ցրված» էին (Հակոբոս 1.1), և շարադրված էր Հին կտակարանի լեզվով: Նրանց մարգարեները կանչում էին նրանց ծոմապահության՝ որպես պարտականություն՝ օգտագործելով նման տեսակի արտահայտություններ. «Նաև այս յոթերորդ ամսվա տասին քավության օրն է... պիտի ***խոնարհեցնեք ձեր անձերը»,*** այսինքն՝ ծոմով (Ղևտացիների 23.27): «Այսպե՞ս կլինի այն ծոմը, որին Ես եմ հավանում, իբրև մի օր, որ մարդը ճգնում է իր հոգով» (Եսայի 58.5): «Դեպի Ինձ դարձե՛ք ձեր ամբողջ սրտով և ծոմով ու ***լացով և սուգով»*** (Հովել 2.12): Ուշադրություն դարձրեք, որ այս խոսքերում պահանջվող ***սուգը*** նույնը չէ, ինչ ***լաց լինելը***, ինչպես որ սգացողների ***երեսը*** նույնը չէ, ինչ նրանց ***արցունքները*** (Ծննդոց 37.34, Ժողովող 3.4):

   բ. *Այն ակնկալվում է Խոսքում անուղղակի կերպով:* Հաշվի առնելով, որ Աստված ցուցումներ է տվել մեզ ծոմապահության վերաբերյալ, բնական է ենթադրելը, որ սրբերը կկատարեն այս պարտականությունը: Մեր Փրկիչը ցուցումներ է տալիս մեզ անձնական ծոմապահության մասին. «Եվ երբ որ ծոմ եք պահում, տրտում մի՛ եղեք, ինչպես կեղծավորները, որովհետև նրանք իրենց երեսները տխրեցնում են, որ մարդկանց ծոմ պահող երևան: Ճշմարիտ ասում եմ ձեզ, թե նրանք իրենց վարձքն առած են: Բայց դու ծոմ պահելիս գլուխդ օծիր և երեսդ լվա, որ մարդկանց ծոմ պահող չերևաս, այլ քո Հորը, որ ծածուկում է: Եվ քո Հայրը, որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կհատուցի քեզ» (Մատթեոս 6.16-18): Այս հատվածը ցույց է տալիս, որ ծոմապահությունն իսկապես պարտավորություն է, որը Նա պահանջում է, քանի որ Աստծո սրբության հետ անհամատեղելի կլիներ, եթե Նա ցուցումներ տար «ինքնահնար կրոնի» վերաբերյալ, որն Ինքը դատապարտում է (Մատթեոս 15.9, Կողոսացիների 2.23, Երեմիա 7.31):

2. **Ծոմապահությունը խոստացված է Աստծո Խոսքում, այսինքն՝ այն, որ սրբերը կատարելու են այս պարտականությունը**: Աստված հստակ նշում է Իր Խոսքում, որ Իր ժողովուրդն անձնական ծոմապահություն է կատարելու: «Եվ պիտի թափեմ Դավթի տան վրա և Երուսաղեմում բնակվողի վրա շնորհքի և

աղոթքի Հոգին, և նրանք պիտի մտիկ տան Ինձ, Ում խոցեցին, և ***սուգ պիտի անեն*** Նրա վրա... և ***պիտի ցավեն*** Նրա վրա... Այն օրը ***սուգը մեծ պիտի լինի*** Երուսաղեմում... Եվ ***երկիրը պիտի սուգ անի,*** ամեն ազգատոհմ՝ առանձին... և նրանց կանայք՝ առանձին» (Զաքարիա 12.10-12): Այս հատվածում խոստացված է, որ ծոմապահությունը և սեփական անձերը խոնարհեցնելը տեղի կունենան որպես Աստծո ժողովրդի հնազանդության քայլ: Ավելին՝ մեր Տեր Հիսուսը խոստացավ այն Իր աշակերտների վերաբերյալ. «Օրեր կգան, որ փեսան նրանցից վեր կառնվի, և այն ժամանակ ***ծոմ կպահեն»*** (Մատթեոս 9.15):

3. **Ծոմապահությունը հանձնարարվում է Աստծո խոսքում՝ Սուրբ գրքում հիշատակված սրբերի սովորույթների միջոցով**: Ինչպես արդեն տեսանք, այն կատարվում էր ***Դավթի*** կողմից, ով Աստծո սրտի համեմատ մարդ էր (Բ Թագավորաց 12.16, Սաղմոս 35.13): Այն կատարվում էր ***Դանիելի*** կողմից, ով մեծապես սիրված էր (Դանիել 9.3, 10.2,3): Այն կատարվում էր նվիրյալ հարյուրապետ ***Կոռնելիոսի*** կողմից (Գործք 10.30): Այն ***Պողոսի***՝ հեթանոսների աշխատասեր առաքյալի հաճախակի վարժանքն էր (Բ Կորնթացիների 11.27): Բոլոր այս սրբերը հաճեցնում էին Աստծուն իրենց գործերով, և մեր պարտականությունն է քայլել Նրա հոտի հետքերով՝ հետևելով այս մարդկանց հաստատված օրինակին:

4. **Աստծո խոսքում ծոմապահությունը խրախուսվում է հասարակական ծոմապահության և սեփական անձերը խոնարհեցնելու ոչ պարբերաբար կատարվող պարտականության միջոցով**: Այս հասարակական ծոմապահությունների իրական լինելը, կարծում եմ, չի վիճարկվի[20]: Այս օրինակներից կարող ենք քաղել հետևյալ քաջալերանքներն անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու համար:

   ա. *Կրոնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու մեջ չկա մի բան, ինչն իր բնույթով հասարակական է կամ պարտադիր կերպով պահանջում է մարդկանց խմբի առկայություն:* Խոսքի քարոզչությունը և եկեղեցական խորհուրդները կատարելը բնականորեն պահանջում են հասարակություն կամ համայնք. այդ իսկ պատճառով, դրանք նախատեսված չեն անհատի համար, որը գտնվում է իր սենյակում, մենության մեջ: Բայց ծոմապահությունն այդպիսին չէ: Մարդը կարող է ծոմապահություն կատարել մենության մեջ ճիշտ այնպես, ինչպես որ կարող է աղոթել, Աստվածաշունչ կարդալ կամ փառաբանության երգեր երգել մենության մեջ: Եթե Աստված կարգել է որևէ պարտականություն և չի կապակցել այն հասարակությունների, ժողովների կամ հատուկ խմբերի հետ, նշանակում է՝ այն պատկանում է յուրաքանչյուր անհատի, ով կարող է կատարել այն:

   բ. *Այն արտառոց իրավիճակները, որոնք պահանջում են հասարակական ծոմապահություն և սեփական անձերի խոնարհեցում, նույնպես վերաբերում են անհատներին:* Եթե որևէ եկեղեցի կամ համայնք կանչված է ծոմապահության և սեփական անձերը խոնարհեցնելու որոշակի իրավիճակներում, մի՞թե դա չի վերաբերում նաև անհատին, որի կյանքում նման իրավիճակներ են լինում: Եթե որևէ եկեղեցական համայնքի տարածված մեղքը կամ որևէ ազգի վերահաս դատաստանը պահանջում է հանդիսավոր հրապարակային ծոմապահություն և *սեփական անձերի խոնարհեցում,* մի՞թե անհատի կյանքում տարածված մեղքը և նրա անձի վերահաս դատաստանը չի առաջացնում անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու անհրաժեշտություն: Անկասկած, յուրաքանչյուրը պետք է պահպանի իր սեփական այգին նույն ջանասիրությամբ, որով պետք է պահվի հանրային այգին. հակառակ դեպքում այն, ի վերջո, դառը պտուղ է տալու (Երգ երգոց 1.6):

   գ. *Քանի որ ծավալուն մարմինները դանդաղ են շարժվում, ազգերը և համայնքները հազվադեպ են արագորեն պատասխանում մեծ ճգնաժամին կամ կարիքին հրապարակայնորեն արձագանքելու Աստծո կանչին:* Աստծո նախախնամության կանչն ազգային կամ համայնքային ծոմապահությանը և սեփական անձերը խոնարհեցնելուն հաճախ անուշադրության է մատնվում: Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի այն անհատ հավատացյալների արձագանքը, որոնք հասկանում են Աստծո կանչը նման դեպքերում: Մի՞թե

[20] Կարդացե՛ք Դատավորաց 20.26, Եզրաս 8.21-23, Հովել 1.14 և Հովնան 3.5-9՝ որպես օրինակներ:

նրանք պետք է անգործ նստեն և չպատասխանեն այդ կանչին ***այնպես, ինչպես իրենք կարող են*** (այսինքն՝ անհատապես)՝ միայն, որովհետև նրանք չեն կարող պատասխանել դրան ***այնպես, ինչպես ցանկանում են*** (այսինքն՝ հավաքականորեն)։ Մի՞թե նրանք չպետք է անձնական ծոմապահություններ կատարեն այն խնդիրների համար, որոնց համար այլ մարդիկ կա՛մ չեն կարող, կա՛մ չեն ցանկանում հասարակական ծոմապահություններ կատարել։ Երբ Աստված խոսք ուղղեց Եգիպտոսի ազգին, այն մարդիկ «փարավոնի ծառաներից, ովքեր վախենում էին Տիրոջ Խոսքից», քայլ արեցին ի պատասխան Նրա զգուշացմանը (Ելից 9.20), թեև իրենց ազգը հավաքականորեն հրաժարվեց ապաշխարել։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Համաձայն Բոստոնի, ինչո՞ւ է անչափ կարևոր իմանալ, որ Աստված երաշխավորում է ծոմապահությունն Իր Խոսքում։

_____

_____

_____

_____

2. Անվանե՛ք մեկ հատված Հին կտակարանից և մեկ հատված Նոր կտակարանից, որոնցում Աստծո ժողովրդի ծոմապահությունն ակնկալվում, խոստացվում, հանձնարարվում կամ խրախուսվում է։ Ի՞նչ են սովորեցնում մեզ նման հատվածները այն մասին, թե ինչպես է Աստված վերաբերվում պատշաճ կերպով կատարվող ծոմապահությանը։

_____

_____

_____

_____

_____

3. Ի՞նչ կարող ենք սովորել աստվածաշնչյան պատմություններից հավաքական կամ հանրային ծոմապահությունների մասին, ինչը կարելի է կիրառել մեր անձնական ծոմապահությունների մեջ։ Ինչպե՞ս հավատացյալը պետք է արձագանքի, երբ գիտակցում է հանդիսավոր ժողովի անհրաժեշտությունը (կարդացե՛ք էջեր 45-47), սակայն մենակ է մնում այդ բեռի հետ։

_____

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 3. Նախախնամության կանչ անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու համար

Որևէ ***անհատի***, նրա ***եկեղեցում*** գտնվող մարդկանց կամ նրա ***մերձավորի*** հանգամանքները առանձին-առանձին կամ նույնիսկ բոլորը միասին կարող են առաջացնել նախախնամության կանչ անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու համար: Դանիել մարգարեն անձնական ծոմապահություն կատարեց եկեղեցու համար (Դանիել 9.2,3), իսկ Դավիթը՝ իր մերձավորի (Սաղմոս 35.13), ինչպես նաև իր համար (Բ Թագավորաց 12.16):

Աստծո զավակները պետք է իրենցը համարեն Աստծո թագավորության շահերը: Այդ իսկ պատճառով, ծածուկ անձնական ծոմապահությունը Աստծո թագավորության համար մեծապես գովելի է և, պատշաճ կերպով կատարվելու դեպքում, շատ ընդունելի է Նրա համար (Դանիել 9.20,21)[21]:

Հաղորդությունը սրբերի հետ ամենից օգտակար երևույթն է: Մեզ համար օգտակար կլինի դիտարկել այս երևույթի կողմերից երկուսը՝ ***բեռների*** հաղորդությունը (Գաղատացիների 6.2) և ***աղոթքների*** հաղորդությունը (Հակոբոս 5.16): Դրանք լավագույն բալասաններից են, որոնք Սիոն ճանապարհվողներն ունեն իրենց ճանապարհին: Հավատացյալի սերն իր մերձավորի հանդեպ, որի համոզիչ ապացույցներից է ծածուկ ծոմապահությունն իր մերձավորի համար, ավելի լավ է, քան բոլոր ողջակեզները և զոհերը (Մարկոս 12.33): Եվ անկախ այն բանից՝ դա օգուտ կբերի իր մերձավորին, թե ոչ, այդ ծոմապահությունը, ճիշտ կերպով կատարելու դեպքում, շատ առավելություններով կվերադառնա իր իսկ ծոցը՝ համաձայն սաղմոսերգուի փորձառության (Սաղմոս 35.13):

Ինչևիցե, հազիվ թե արժե ակնկալել, որ ինչ-որ մեկը ծոմ կպահի այլ մարդկանց համար, եթե նա դեռ չի արել դա հենց իր համար: Բայց, անկասկած, եթե կրոնը դավանող մարդիկ ավելի մեծ ուշադրություն դարձնեին իրենց իսկ հոգևոր բարեկեցությանը և առաջընթացին և ավելի շատ ներգրավված լինեին այս բաներում, անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու պարտականությունը չէր լինի այնքան հազվագյուտ, որքան հիմա է: Պողոս առաքյալը, ով մեծ ուշադրություն էր դարձնում այս բաներին (Գործք 24.16), «շատ անգամներ ծոմի մեջ» էր (Բ Կորնթացիների 11.27) և ճնշում ու նվաճում էր իր մարմինը (Ա Կորնթացիների 9.27):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՊՔԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՆՉՈՒՄ ԵՆ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ

Գոյություն ունեն երեք տեսակի դեպքեր, որոնք կանչում են այս արտառոց պարտականությանը, երբ հանգամանքները և նախախնամությունը թույլ են տալիս մեզ կատարել այն:

Առաջինը՝ երբ կա որևէ ***հատուկ չարիք***՝ մեղք կամ դրա հետևանքը, որին բախվում ենք մենք, եկեղեցին կամ որևէ մերձավոր, որի հանդեպ մենք հատուկ մտահոգություն ունենք: Կան որոշ մեղքեր, որոնք այնպիսի՜ խղճի խայթ են առաջացնում և այնպե՜ս են ապականում սիրտը և կյանքը, որ ասես բարձրաձայն կոչ են անում ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու՝ իրենց աղետալի հետևանքներից վերա-

[21] Բնօրինակում՝ «Սիոնի զավակները պետք է համարեն դրա շահերն իրենցը, և որքան որ ծածուկ անձնական ծոմապահությունը հանրային խնդիրների համար բացահայտում է ճշմարտապես հանրային հոգի, այնքան էլ այն մեծապես գովելի է և ճիշտ կերպով կատարվելու դեպքում շատ ընդունելի է Աստծո առջև (Դանիել 9.20,21)»:

կանգնվելու համար: Հակոբոս 4.8,9-ում գրված է. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: Սրբե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ, և ձեր սրտերը մաքրե՛ք, ո՛վ երկմիտներ: Տառապե՛ք և սուգ արե՛ք և լացե՛ք. ձեր ծիծաղը թող սուգ դառնա, և ձեր ուրախությունը՝ տրտմություն»: Այսպես իսրայելցիները, գիտակցելով այն գարշելի կռապաշտությունը, որում իրենք հայտնվել էին, հավաքվեցին Մասփայում և «այն օրը ծոմ բռնեցին և այնտեղ ասացին. «Տիրոջ դեմ մեղք գործեցինք»» (Ա Թագավորաց 7.6):

Նմանապես, երբ Աստծո սաստիկ անհավանությունը մեր մեղքի պատճառով արտահայտվում է այն հետևանքներով, որոնք Նրա նախախնամությունը թույլ է տալիս, ժամանակն է խոնարհությամբ թավալ գալ փոշու մեջ: Նրա առջև մեր անձերը ծոմով խոնարհեցնելը օգտակար միջոց է՝ մեզ այդ վիճակին հասցնելու համար[22]: Այսպես Նեեմիան ծոմապահության կանչ զգաց, երբ լուր ստացավ, որ Երուսաղեմը դեռ ավերակների մեջ էր, իսկ գերությունից վերադարձածները դեռ տառապանքներ էին կրում (Նեեմիա 1.3,4): Այսպես Դավիթը և նրա հետ գտնվող մարդիկ ծոմապահության կանչ զգացին, երբ լսեցին թե՛ Իսրայելի պարտության, թե՛ Սավուղի և Հովնաթանի մահվան մասին (Բ Թագավորաց 1.12): Եվ այսպես Իսրայելի ժողովուրդը ծոմապահության կանչ զգաց, երբ մարտի ժամանակ բենիամինցիները սպանեցին հազարավորների իրենց ազգակիցներից (Դատավորաց 20.26):

Երկրորդը՝ երբ կա որևէ ***հատուկ վտանգ***, որը սպառնում կամ նշմարվում է: Այսպես Երուսաղեմի բնակիչները, բախվելով իրենց թշնամիներից եկող վերահաս վտանգին, նախախնամությամբ լաց լինելու և սգալու կանչ ստացան, թեև ուշադրություն չդարձրին դրան (Եսայի 22.12,13): Նինվեացիները, այնուամենայնիվ, վախենալով իրենց վերահաս կործանումից, ուշադրություն դարձրին նախախնամության կանչին (Հովնան 3.4-9): Նույն կերպով վարվեց Դավիթը, երբ Աստված զարկեց նրա զավակին հիվանդությամբ (Բ Թագավորաց 12.15,16): Իրականում, նույնիսկ Աքաաբն այսպես վարվեց, երբ լսեց Եղիայի խիստ ուղերձն իր և իր տան մասին (Գ Թագավորաց 21.27): Ինչպես որ առյուծի մռնչյունը վախ է առաջացնում մեզանում, այնպես էլ, երբ Աստծո ձեռքը բարձրանում է՝ պատրաստ զարկելու, ժամանակն է, որ խոնարհեցնենք և նվաստացնենք մեր անձերը:

Եվ ***երրորդը***՝ երբ կա որևէ ***հատուկ ողորմություն և բարեհաճություն***, որը մենք ցանկանում ենք Տիրոջից: Այսպես Դանիելը, փափագելով Իսրայելի վերադարձը Բաբելոնի գերությունից, ծոմ պահեց (Դանիել 9.1-3): Այն քրիստոնյաները, ովքեր ճշմարտապես ձգտում են աստվածապաշտության, հազվադեպ են մնում (եթե նման բան ընդհանրապես կարող է լինել) առանց Աստծո կա՛մ անմիջապես տրվող, կա՛մ հետաձգված պատասխանի այն խնդրանքներին, որոնք բերում են Նրա շնորհքի գահի առջև: Երբեմն Աստված այնպես է անում, որ որոշ ողորմություններ ընկնում են մարդկանց գիրկը, նույնիսկ երբ նրանք չեն էլ բերել իրենց կարիքները կամ ցանկությունները Նրա առջև: Այնուամենայնիվ, հաճախ Նա թույլ է տալիս, որ Իր զավակները գան Իր առջև և ներկայացնեն իրենց խնդրանքները շատ անգամներ, մինչև որ Ինքը կշնորհի դրանք: Առաջինները ստանում են իրենց պարգևները միայն ընդհանուր ողորմության միջոցով, սակայն, երբեմն ճակատագրի բերումով, ողորմության հետ մեկտեղ կարող է ի հայտ գալ նաև անեծք: Վերջինները պետք է ընթացք անցնեն և հուսան Աստծո խոստումներին: Դրանով իսկ նրանք ոչ միայն օրհնվում են պարգևներով, այլև սրբացվում են այդ ընթացքի միջոցով[23]:

---

[22] Բնօրինակում՝ «Նմանապես, երբ Աստծո խիստ անհավանության նշաններն արձակվում են նախախնամության չարչարող գործերով, ժամանակն է, որ թավալ գանք փոշու մեջ, և այդ կերպով համապատասխանեցնենք մեր հոգին և ճանապարհը այդ վիճակին՝ խոնարհեցնելով մեզ Նրա առջև ծոմապահությամբ»:

[23] Բնօրինակում՝ «Քրիստոնյաները, որոնք վարժված են աստվածապաշտության, հազվադեպ զուրկ կմնան (եթե նման բան ընդհանրապես կարող է լինել) Աստծո գահի առջև բերված իրենց մասնավոր խնդրանքներից և հատուկ հայցումներից: Նույն Աստված, որն այնպես է անում, որ որոշ ողորմություններ ընկնեն ոմանց գիրկը՝ առանց այն բանի, որ նրանք մեծ ջանք թափեն դրանց համար, առաջադրանք կտա Իր զավակներին, որ բազում անգամներ խնդրանքներով դիմեն Իրեն, մինչև որ ստանան դրանք, քանի որ նրանք պետք է ունենան դրանք ուխտի ճանապարհով, այն դեպքում, երբ մյուսներին տրվում են միայն հասարակ նախախնամության միջոցով, որով կործանարար անեծքը կարող է գալ ողորմության հետ մեկտեղ»:

ՄԱՍՆԱՎՈՐ ԴԵՊՔԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՆՉՈՒՄ ԵՆ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ

Այս բաժինն ավելի պարզ դարձնելու համար կդիտարկենք որոշ օրինակներ ստորև գտնվող վերնագրերի ներքո: Դրանք հիմնականում վերաբերում են հավատացյալի մասնավոր հանգամանքներին, թեև որոշ դեպքերում նույնպես կիրառելի են նրա եկեղեցու կամ մերձավորի հանգամանքներում: Ստորև ներկայացված են որոշ մասնավոր դեպքեր, որոնք (երբ հավատացյալը հասկանա, որ դրանք վերաբերում են իր իրավիճակին) կանչում են անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու:

1. **Երբ երկարատև մեղսալի կյանքի և անփույթ ընթացքի պատճառով մարդու անձը հայտնվում է անկարգ և խառնաշփոթ վիճակում**: «Ո՛վ վստահալիցներ, դողացե՛ք, սարսռե՛ք, ո՛վ ապահովներ, հանվե՛ք ու մերկացե՛ք, մեջքներիդ քուրձ կապե՛ք» (Եսայի 32.11): Աստծո հորդորը նման մարդկանց միանշանակ հետևյալն է. «Այսպես է ասում Զորաց Տերը. «Ձեր ուշը դարձրե՛ք ձեր ճանապարհներին»» (Անգե 1.5): Սեփական անձի ստուգման բացակայությունը կործանում է շատերին: Նրանք վարվում են իրենց անձերի հետ այնպես, ինչպես որոշ անմիտ մարդիկ վարվում են իրենց ձեռնարկությունների հետ՝ դրանք անփութորեն տնօրինելով, մինչև որ բախվում են մեծ դժվարությունների: Բայց նրանք, ովքեր որոշ ժամանակ տրվել են մեղքին, պետք է նույնպես որոշ ժամանակ տրամադրեն սգալուն, քանի որ չպետք է ակնկալել, որ վաղուց ժամկետանց հաշիվները մարվելու և ճշգրտվելու են մեկ ակնթարթում: Ո՛վ անփույթ մեղավոր, ուշադրությո՛ւն դարձրու Աստծո և քո հարաբերությանը. արդյո՞ք դու պատրաստ ես մահվանը և հավիտենությանը: Չէ՞ որ քո անձը թշվառ վիճակում է: Չէ՞ որ դու վատնվում ես քո անօրինության մեջ: Չէ՞ որ քո անձի վիճակը նման է ծույլ մարդու խաղողի այգուն, որտեղ «բոլորը փշեր էին դուրս եկել, նրանց երեսը ծածկել էին եղինջներ, և նրա քարի պատը փուլ էր եկած» (Առակաց 24.31): Հանձն առ անձնական ծոմապահությունը և քո անձը խոնարհեցնելը: Սովորական աշխատանքը բավական չէ՝ երկար ժամանակ անտեսված այգին վերականգնելու համար. այն պետք է հիմնովին վերականգնվի: Մի փոքր աշխատանքը կարող է օգտակար լինել այն այգու համար, որը պարբերաբար էտվում և մշակվում է, բայց այն բավական չի լինի քո այգու համար, որը չափազանց երկար ժամանակ անտեսված է:

2. **Երբ մարդը հանդիմանություն է զգում և ցանկանում է փոխվել**: Հենց այսպիսի ժամանակ Իսրայելի զավակները ծոմ պահեցին (Նեեմիա 9.1,2), և այն խիստ դրական արդյունք ունեցավ (10.28,29): Ծոմապահությունն օգտավետ միջոց է՝ դրդելու համար մարդկանց լրջորեն վերաբերվել վերափոխմանը և ամրապնդելու համար նրանց վճռականությունը, որը հակառակ դեպքում կարող է անպտուղ լինել: Որոշ մարդիկ ժամանակ առ ժամանակ հանդիմանություն են զգում, և երբեմն դա դրդում է նրանց աղոթել, բայց այդպես էլ չի հաստատում կյանքի վերափոխման ճանապարհին: Նրանց հիվանդությունը չափազանց խորը արմատներ ունի՝ այդքան հեշտորեն հեռանալու համար: Բայց եթե նրանք այնքան իմաստուն լինեին, որ մեծ լրջությամբ վերաբերվեին այդ հանդիմանություններին և որոշ ժամանակ առանձնացնեին անձնական ծոմապահությանը և սեփական անձը խոնարհեցնելուն, Աստծո շնորհքով նրանց վերափոխման ձգտումը կարող էր պսակվել հաղթանակով:

3. **Երբ մարդը սաստիկ խղճի խայթ է զգում որևէ զարհուրելի մեղքի պատճառով**: Եթե նման հանցանքը՝ գործված ազգի կողմից, դրդում է համազգային ծոմապահության, մի՞թե անհատի կողմից գործված նույն տեսակի հանցանքը չպետք է դրդի անձնական ծոմապահության: Իսկապես որ, այդպիսի դեպքերում Աստված կանչում է մարդկանց տառապելու, սուգ անելու և լաց լինելու (Հակոբոս 4.8,9): Նման այն բանին, որ սաստիկ հիվանդությունների համար պահանջվում են ուժգին դեղամիջոցներ, խիղճն այրող հանցանքի համար պահանջվում է խորապես խոնարհեցնել սեփական անձը, ինչպես որ դա տե-

ղի ունեցավ Դավթի (Սաղմոս 51) և Պետրոսի (Մատթեոս 26.75) կյանքերում: Այդպիսի հանցանքը, որը խորապես խոցում և խայթում է անձը, նաև ապականում և կործանում է խիղճը, միգուցե չբացահայտվի և ի ցույց չհանվի ամբողջ աշխարհին՝ որպես մեծ խայտառակություն: Բայց Աստված տեսնում է ծածուկ մեղքերը, նույնիսկ սրտի մեղքերը, և զգայուն խիղճ ունեցող մարդիկ սրտի ցավ կապրեն նման մեղքերի պատճառով, նույնիսկ եթե դրանք ծածկված են ամբողջ աշխարհից:

4. **Երբ մարդն ուրախ կլիներ հաղթահարել այն ծուղակը, որի մեջ հաճախ է ընկել, և պարտության մատնել այն կիրքը, որը հաճախ է իշխել իրեն**: Շատերի մասին կարելի է բազմաթիվ լավ բաներ ասել, սակայն նրանց կյանքում կա մեկ բաց: Այդ մեկ բացը, ամենայն հավանականությամբ, կանգնում է երկնքի և իրենց միջև՝ մթագնեցնելով նրանց բոլոր դրական հատկանիշները (Մարկոս 10.21): Խոսքը մի սխալի մասին է, որը նրանք կրկին ու կրկին որոշում են շտկել, և որից նրանք ուրախ կլինեին ազատվել: Բայց երբ նոր գայթակղություն է գալիս, և սատանան հարձակվում է նրանց թույլ տեղի վրա, նրանց բոլոր որոշումներն ի չիք են դառնում նույնքան հանկարծակի, որքան ընկնում է բարձր սյունը՝ չկարողանալով պահել իր վրա դրված ծանրությունը, և նրանք կրկին հայտնվում են նույն ծուղակում: Ընկերնե՛ր, այս ցեղը դուրս չի գա, եթե ոչ աղոթքով և ծոմով (Մատթեոս 17.20): Այնպես որ, ժամանակ առանձնացրե՛ք անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու համար՝ այդ ծուղակի պատճառով, որպեսզի աղոթքի մեջ պայքարեք Աստծո հետ դրա վերաբերյալ: Արե՛ք դա կրկին ու կրկին, մինչև որ հաղթահարեք: Հակառակ դեպքում, այդ մեկ բանը կարող է կործանել ձեզ, և դուք կդատապարտվեք դրա համար, ոչ թե այն պատճառով, որ չէիք կարողանում չանել դա, այլ որովհետև չէիք օգտագործել այն միջոցները, որոնք Աստված տրամադրել էր՝ դրանից ազատվելու համար:

5. **Երբ մարդը գտնվում է «մահացած լքվածության» վիճակում**: Սրանով ես նկատի ունեմ այնպիսի վիճակ, որում Տերը թողել է մարդուն, և երկնքի սովորական ազդեցությունները պահված են նրանից, սակայն նա գրեթե չի ազդվում և չի ցավում այն հոգևոր մահացության պատճառով, որը պատել է իրեն: Այսպիսին էր այն ամուսնուհու վիճակը, որի մասին գրված է Երգ երգոց 3.1-ում. «Իմ անկողնու մեջ գիշերը ես որոնեցի իմ հոգու սիրածին. ես որոնեցի նրան, բայց չգտա»: Եվ նա արտասվոր ջանքեր գործադրեց՝ այդ վիճակից դուրս գալու համար (խոսքեր 2-4): Նույնը, թվում է, վերաբերում է շատերին, որոնց վիճակն ավելի լավ էր անցյալում, քան հիմա: Աստված թաքցնում է Իր երեսը նրանցից: Երկնքի առավելությունները հազվագյուտ և սակավ են՝ անցյալի համեմատ: Նրանք սպառվել են և ետընթաց են ապրում: Թեև նրանք դեռ հաճախում են կրոնական հավաքույթների, սակայն երկար ժամանակ չեն վերապրել ոչինչ Սիրելիից և չեն զգացել հաղորդություն Աստծո հետ: Ծո՛մ պահեք և աղոթե՛ք վերականգնման համար: Այսպես վարվեց Իսրայելը, երբ երկար ժամանակ լքված լինելուց, սակայն գրեթե չզղջալուց հետո ժողովուրդը սկսեց սգալ և հառաչել Տիրոջ ետևից (Ա Թագավորաց 7.2-6): Պահանջվում է մեծ աշխատանք՝ վերականգնելու համար այն ամենը, ինչը ծուլությունը վնասել է, նման լքված և կիսախարխլված շենքը վերականգնելուն: Թեև ճշմարիտ շնորհքը երբեք չի կարող լիովին կորսվել, այն կարող է գրեթե կորցնել իր ազդեցությունը:

6. **Երբ մարդը գտնվում է «գիտակցված լքվածության» վիճակում**: Սրանով նկատի ունեմ այնպիսի վիճակ, որը նման է նախորդ կետին, սակայն Տիրոջ կողմից թողնված լինելը մեծապես ազդում է մարդու վրա. նա զգում է դրա խայթը: «Բայց Սիոնն ասաց. «Տերն ինձ ձգել է», և «Տերը մոռացել է ինձ»» (Եսայի 49.14): Սա ավելի հուսադրող իրավիճակ է, քան նախորդը, թեև այն խորապես ցավալի է: «Մարդու հոգին կարող է դիմանալ նրա հիվանդությանը, բայց ինչ վերաբերում է կոտրված հոգուն, ո՞վ կարող է տանել այն» (Առակաց 18.14, NASB): Գոյություն ունեն բազմաթիվ դառը հանգամանքներ, որոնք դարձ-

նում են այս իրավիճակը տխրալի և խիստ ցավալի անձի համար, նման «մի երեսից ձգված և հոգով վշտացած կնոջ» (Եսայի 54.6)։ Այսպիսի լքվածության մեջ գտնվող մարդը տեսնում է բարկություն Աստծո երեսին և իր բոլոր հանգամանքներում (Սաղմոս 88.7,8)։ Այսպիսի մարդու և՛ զգայարանները, և՛ զգացողություններն ասում են նրան. «Քո աղոթքներն արգելվա՛ծ են։ Զարհուրանքը կկործանի՛ քեզ» (Ողբ Երեմիայի 3.8, Սաղմոս 88.15,16)։ Նման ճնշման ներքո նույնիսկ զգաստ և լրջախոհ մարդիկ չեն կարողացել զսպել իրենց. «Սևացած եմ ման գալիս, բայց ոչ թե արևից (կամ՝ «Ես շրջում եմ սգալով՝ առանց մխիթարության»), կանգնում եմ ժողովքի մեջ, աղաղակում» (Հոբ 30.28)։ Այս գիտակցված լքվածությունը՝ ավելի մեծ կամ ավելի փոքր չափով, հաճախ եղել է մահացած լքվածության զարհուրելի հետևանքը, ինչպես վերևում նշված ամուսնուհու դեպքում (Երգ երգոց 5.3-7)։ Եվ այն անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու բարձրաձայն կանչ է. «Օրեր կգան, որ փեսան նրանցից վեր կառնվի, և այն ժամանակ ծոմ կպահեն» (Մատթեոս 9.15)։

7. **Երբ մարդուն ընդդիմանում է ինչ-որ արտաքին նեղություն՝ իր մարմնում, իր փոխհարաբերությունների մեջ, կապված իր անվան կամ դիրքի հետ, և այլն**։ Նման մի դեպքում «Հոբը վեր կացավ և պատռեց իր վերարկուն և խուզեց իր գլուխը և ընկավ գետնին և երկրպագություն արեց» (Հոբ 1.20), իսկ Դավթի ծնկները «տկարացան ծոմից» (Սաղմոս 109.24)։ Նեղության ընթացքը հատուկ ժամանակ է ծոմապահության և աղոթքի համար։ Տերը հաճախ նեղություն է բերում Իր ժողովրդի վրա, որպեսզի արթնացնի իրենց պարտականության համար և ցույց տա դրա կարևորությունը։ «Խոնարհվե՛ք Տիրոջ առջև, և Նա կբարձրացնի ձեզ» (Հակոբոս 4.10)։ Ահա թե ինչպես է նեղությունը սրբացնում մարդուն և (ճիշտ ժամանակին) հեռացվում։ Այդ իսկ պատճառով, մենք պետք է զգույշ լինենք, որ չնմանվենք նրանց, ովքեր չեն կանչում Աստծուն, երբ Նա նեղություն է բերում. փոխարենը, մենք պետք է սովորենք Բենադադի ծառաներից, որոնք մարտի դաշտում լիակատար պարտություն կրելով՝ քուրձ հագան և գնացին խոնարհաբար աղերսելու Իսրայելի թագավորին, ով նվաճել էր իրենց (Գ Թագավորաց 20.31)։

8. **Երբ ինչ-որ մեկին սպառնում է նմանատիպ նեղություն՝ Աստծո նախախնամությամբ**։ Հանցավոր խստասրտության պատճառով, մենք չենք ազդվում, երբ Տերը բարձրացնում է Իր ձեռքը մեր դեմ[24]։ Սաղմոսերգուն՝ գերազանց հոգու տեր մի մարդ, ասաց. «Մարմինս դողում է Քո ահից, և Քո դատաստաններից վախենում եմ» (Սաղմոս 119.120)։ Թեև այն մարդը, ով մեծ կարողություն ունի, կարող է չվախենալ ոչ մի մարդու երեսից, նա ճիշտ կվարվի, եթե մի կողմ դնի իր հոգու քաջությունը՝ կանգնելով իր Աստծո երեսի առջև։ Ահա թե ինչու Տիրոջ բարկությունը Դավթի անարգանքի պատճառով և նրա մանկան կյանքին ուղղված սպառնալիքը դրդեցին Դավթին ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու Տիրոջ առջև՝ իր մանկան կյանքի համար (Բ Թագավորաց 12.16,22)։

9. **Երբ մարդը ցանկանում է պարզություն և առաջնորդություն ստանալ որևէ անչափ կարևոր հարցում**։ Ցավալի իրականություն է, որ նրանք, ովքեր դավանում են, որ աստվածային նախախնամությունը վեր է մարդկային գործերից, հաճախ իրենց վրա են վերցնում իրենց գործերի բեռը՝ վստահելով իրենց իմաստությանը և հաշվի չառնելով Աստծուն։ Նման վարքը մատնում է նրանց նպատակը՝ հաճեցնել միայն սեփական անձին, ոչ թե իրենց Աստծուն։ Նրանց վարքից երևում է, որ իրենց որոշումների վճռորոշ գործոնը իրենց ցանկություններն են, հարմարավետությունը և օգուտը, ոչ թե իրենց խիղճը։ Նույնիսկ իմաստուն մարդիկ, համակված նման հպարտությամբ, հաճախ անմիտ սխալներ են գործում և թողնվում են Աստծո արդար ցասմանը՝ իրենց չմտածված որոշումների պատճառով։ Հեսուն և Իսրայելի իշխանները, մտածելով գաբավոնցիների հետ ուխտ կնքելու մասին, որոշեցին գործադրել իրենց դատողությու-

[24] Բնօրինակում՝ «Շնորհազուրկ խստություն է չազդվելը, երբ Տերը բարձրացնում է Իր ձեռքը մեր դեմ»։

նը, ոչ թե հավատքը: Ունայնաբար մտածելով, որ կարող էին բավականին լավ տեսնել իրենց աչքերով՝ նրանք «վեր առան դրանց այն պաշարի պատճառով, իսկ Տիրոջը չհարցրին» (Հեսու 9.14): Այսպիսով, գաբավոնցիները խորամանկորեն օգտագործեցին նրանց, իսկ Հեսուն հասկացավ դա միայն՝ երբ արդեն շատ ուշ էր (խս. 22): Մեզ տրված է աստվածային պատվեր և խոստում, որը վերաբերում է մեր և՛ ժամանակավոր, և՛ հոգևոր հարցերին. «Տիրոջն ապավինի՛ր քո ամբողջ սրտով և քո հասկացողությանը մի՛ վստահիր: Քո բոլոր ճանապարհներում ճանաչի՛ր Նրան, և Նա կուղղի քո ճանապարհները» (Առակաց 3.5,6): Այս խոսքերը հստակ ցույց են տալիս, որ մենք՝ որպես ստեղծվածներ, լիովին կախված ենք մեր Աստծուց և Արարչից: Այնպես որ, մենք պետք է դիտարկենք Նրան որպես մեր ***Ղեկավարի***, Ով պտտում է մեր կյանքի ղեկն Իր ցանկալի ուղղությամբ՝ Իր Խոսքով և նախախնամությամբ: Քանի որ Նա խոստացել է. «Իմաստուն կանեմ քեզ և կսովորեցնեմ քեզ այն ճանապարհը, որ նրանում պիտի գնաս: Կխրատեմ քեզ, Իմ աչքը քեզ վրա կլինի» (Սաղմոս 32.8): Մենք, անկասկած, պարտավոր ենք մշտապես պահել Տիրոջը մեր առջև (Սաղմոս 16.8): Նրա աստվածային առաջնորդությունը պետք է ուղղորդի մեզ, որպեսզի գործենք կամ չգործենք՝ նման իսրայելցիներին անապատում, որոնք չվում էին կամ իջևանում էին՝ հետևելով կրակի կամ ամպի սյանը, որն առաջ էր գնում կամ կանգնում էր (Թվոց 9.15-23): Երբեմն այնպես է լինում, որ հանգամանքները թույլ չեն տալիս մեզ ժամանակ տրամադրել լուրջ աղոթքի՝ Աստծուց իմաստություն խնդրելու համար, սակայն չկա այնպիսի հանգամանք, որը կարող է թույլ չտալ մեզ բարձրացնել մեր աչքերն Աստծուն և կարճ աղոթք ուղղել Նրան՝ խնդրելով Նրա առաջնորդությունը, ինչպես վարվեց Նեեմիան (Նեեմիա 2.4,5)[25]: Եվ այս աղոթքների վերաբերյալ կա մի մխիթարող խոստում, որը հաճախ է հաստատվել աստվածային առաջնորդությունը խնդրող սրբերի փորձառությամբ. «Դու գնալիս՝ քո քայլերը չպիտի նեղվեն, և վազելիս՝ չես գայթակղվի (կամ՝ «սայթաքի»)» (Առակաց 4.12): Այնուամենայնիվ, քրիստոնյաները պետք է սովորեն ներկայացնել իրենց հարցերն Աստծո առջև լուրջ աղոթքով՝ պարզություն և առաջնորդություն խնդրելով, որքան որ հանգամանքները թույլ են տալիս: Այսպես վարվեց Աբրահամի բարեպաշտ ծառան այն հանձնարարության վերաբերյալ, որն իր տերը տվել էր իրեն (Ծննդոց 24.12-14): Եվ նա ականատես եղավ այս խոստման իրականացմանը. «Դու գնալիս՝ քո քայլերը չպիտի նեղվեն»: Իսկ երբ խոսքն անչափ կարևոր հարցի մասին է, օրինակ՝ խոշոր փոփոխություն կյանքում, որոշում աշխատանքի վերաբերյալ, որևէ նշանակալի ձեռնարկություն կամ նման մի բան, լուրջ քրիստոնյայի համար դա հատուկ առիթ է արտասովոր աղոթքի և ծոմապահության համար, որպեսզի նա պարզություն և իմաստություն ստանա Տիրոջից՝ լույսերի Հորից, և բացահայտի, թե ինչ է Նա պատվիրում իրեն: Այսպես Եզրասի հետ Բաբելոնից վերադարձող գերիները ծոմ պահեցին Աստծո առջև Ահավա գետի մոտ, «որ Նրանից (Աստծուց) հաջող ճանապարհորդություն խնդրենք» (Եզրաս 8.21):

10. **Երբ Աստված առաջնորդություն է տվել որևէ կարևոր հարցում, և մարդը պետք է սկսի գործել դրա հիման վրա**: Նման դեպքում մարդը պետք է հասկանա, որ իրեն անհրաժեշտ է Աստծո ներկայությունը, եթե ինքը ցանկանում է հաջողության հասնել այդ հարցում: Այսպես Եսթերը, պատրաստվելով գնալ թագավորի առջև և խնդրել Իր ժողովրդի համար, ծոմապահություն կատարեց Շուշան քաղաքի հրեաների հետ (Եսթեր 4.8,16): Եվ Բառնաբասն ու Սողոսը, կանչվելով Աստծուց հատուկ աշխատանքի համար, ուղարկվեցին միայն ծոմապահությունից և աղոթքից հետո (Գործք 13.2,3): Մեզ անհրաժեշտ է ***առաջնորդություն*** Տիրոջից, որպեսզի իմանանք մեր անելիքը մասնավոր հարցերում: Բայց երբ Նա տալիս է այն, մեզ նույնպես անհրաժեշտ է Նրա ***ներկայությունը***, որպեսզի կարողանանք արդարությամբ գնալ այնտեղ, որտեղ Նա առաջնորդում է մեզ: Ահա թե ինչու Մովսեսն աղոթեց Աստծուն. «Եթե

[25] Բնօրինակում՝ «Երբեմն, իսկապես, իրավիճակը կարող է լինել այնպիսին, որը հնարավորություն չի ընձեռում դիմել Աստծուն լուրջ աղոթքով՝ դրանում լույս խնդրելու համար. բայց մենք երբեք այնքան ծանրացած չենք հանգամանքներով, բայց մենք մուտք ունենք՝ բարձրացնելու մեր աչքերը դեպի սուրբ խոսքը՝ նվիրյալ պոռթկումով, ինչպես Նեեմիան վարվեց նման իրավիճակում»:

Քո երեսը մեզ հետ չգնա, մեզ այս տեղից մի՛ հանիր» (Ելից 33.15)։ Մեղքը պղծում է ամեն ինչ մեզանում։ Որքան էլ այս աշխարհում գտնվող որևէ բան խոստումնալից թվա, եթե դրանում չկա Աստծո ներկայությունը և Նրա սրբացնող օրհնությունը, դա ծուղակը կգցի մեզ։

11. **Երբ մարդուն սպառնում է արտասովոր դժվարություն, և նա կարող է ընկնել մեղքի կամ վտանգի ծուղակը**։ Շուշան քաղաքի ծոմապահությունը կատարվեց այդպիսի հանգամանքում. Եսթերը վտանգելու էր իր կյանքը՝ գնալով «ներսի սրահը», թեև նա կանչված չէր թագավորի կողմից (Եսթեր 4.11,16)։ Ուժեղ քամու պայմաններում նավարկող նավը պետք է ամուր և համաչափ կերպով կառուցված լինի, և դժվարին ու վտանգավոր ժամանակներով անցնող քրիստոնյան ունի աղոթքի և ծոմապահության կարիք, որպեսզի ստանա առաջնորդություն Աստծուց և ապահով անցնի դրանցով[26]։ Այն մարդիկ, որոնք նման դեպքերում վստահում են իրենց ուժերին, անպայման ծուղակում կհայտնվեն։

12. **Երբ մարդը ցանկանում է մոտենալ Աստծուն հատուկ հանդիսավորությամբ, ինչի համար անհրաժեշտ է հատուկ պատրաստություն**։ Այսպես Հակոբը կոչ արեց իր ընտանիքին պատրաստել իրենց, երբ նրանք ապաշխարեցին Տիրոջ առջև Բեթելում (Ծննդոց 35.2,3)։ Իսրայելցիները ստացան նույն կոչը, մինչև որ Օրենքը հանդիսավոր կերպով տրվեց Մովսեսին Սինա սարի վրա (Ելից 19.10,11,15)։ Նույնպես ուշագրավ է, որ թեև Տաղավարահարաց տոնն ամենաուրախալի տոնն էր, որը հրեաները տոնում էին ամբողջ տարվա ընթացքում, Աստված սահմանել էր հանդիսավոր ծոմապահություն, որը պետք է մշտապես կատարվեր դրանից առաջ (Ղևտացիների 23.27,34)։ Շնորհքի համակարգում ոչ ոք չունի բարձրանալու այնպիսի հավանականություն, ինչպես նրանք, ովքեր խորապես են խոնարհվել (Եսայի 40.4, Ղուկաս 18.14, Հակոբոս 4.10)։

Իմանալով այս ամենը՝ յուրաքանչյուր քրիստոնյա կկարողանա ինքնուրույն հասկանալ, երբ իր կյանքում կա նախախնամության կանչ անձնական ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու համար։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ կերպով ծոմապահությունը կարող է դառնալ աստվածային սիրո արտահայտություն մեր մերձավորի հանդեպ։ Ինչպե՞ս հաղորդությունը հավատացյալների հետ կարող է օգնել մեզ այս հարցում։

_____

_____

_____

_____

_____

_____

[26] Բնօրինակում՝ «Նավը, որը նավարկում է, երբ քամին ուժգնորեն փչում է, պետք է լավ հավասարակշռված լինի. դժվարին ու վտանգավոր ժամանակում անհրաժեշտ է աղոթք և ծոմապահություն՝ Երկնքի ապահով ուղեկցության համար»։

2. Որո՞նք են Բոստոնի կողմից թվարկվող երեք ընդհանուր դեպքերը, որոնք կանչում են ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու: Հակիրճ նկարագրե՛ք յուրաքանչյուրը ձեր բառերով:

3. Բոստոնի կողմից նկարագրվող մասնավոր դեպքերից որո՞նք են տեղի ունեցել ձեր կյանքում: Արդյո՞ք ներկայումս վերապրում եք դրանցից որևէ մեկը: Ըստ այն ամենի, ինչ սովորեցիք ծոմապահության մասին, ամփոփե՛ք, թե ինչ կերպով ծոմապահությունը կարող է օգտակար և արժեքավոր լինել այն մասնավոր հանգամանքում, որին դուք բախվել եք անցյալում կամ որում ներկայումս գտնվում եք:

HeartCry

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայացք «Հարթ Քրայ» Միսիոներական ընկերությանը.

«Հարթ Քրայ» Միսիոներական ընկերությունը հիմնադրվել է 1988 թվականին Պերուի Հանրապետությունում: Մենք ցանկանում էինք աջակցել տեղացի միսիոներներին՝ իրենց ժողովրդին հասնելու և աստվածաշնչյան եկեղեցիներ հիմնելու համար: Այդ ժամանակվանից ի վեր Տերն ընդլայնել է մեր սահմանները. ներկայումս աշխատանք ենք իրականացնում ոչ միայն Լատինական Ամերիկայում, այլև Աֆրիկայում, Ասիայում, Եվրասիայում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Ամերիկայում:

Մեր ծառայության նպատակն է օժանդակել տեղացի միսիոներների աշխատանքը ամբողջ աշխարհում: Մեր ռազմավարությունն ունի չորս հիմնական ուղղություն. ֆինանսական աջակցություն, աստվածաբանական ուսուցում, Աստվածաշնչերի և հոգևոր գրականության տարածում և ցանկացած միջոցների տրամադրում, որոնք անհրաժեշտ են Մեծ Հանձնարարականն իրականացնելու համար:

Ներկայումս աջակցում ենք շուրջ 250 միսիոներական ընտանիքի (մի շարք ընթացիկ նախագծերի հետ մեկտեղ) աշխարհի 40 երկրներում:

Ծանոթացում «Հարթ Քրայի» հետ

«Հարթ Քրայ» Միսիոներական ընկերությունը հիմնադրվել է և մինչև օրս գոյություն ունի՝ չորս հիմնական նպատակ իրագործելու համար.

- Փառք բերել Աստծուն
- Ծառայել մարդկանց
- Հիմնել աստվածաշնչյան եկեղեցիներ
- Հայտնել Աստծո հավատարմությունը

1. Փառք բերել Աստծուն

Մեր առաջին հիմնական նպատակն Աստծուն փառք բերելն է: Ամենից առավել մենք ցանկանում ենք, որ Նրա անունը մեծարվի ազգերի մեջ «արեգակի ելքից մինչև մուտքը» (Մաղաքիա 1.11), և որ մորթված Գառը ստանա Իր չարչարանքների լիարժեք վարձատրությունը (Հայտնություն 7.9,10): Մեր գլխավոր նպատակը և դրդապատճառը ո՛չ մարդն է, և ո՛չ նրա կարիքները, այլ՝ Աստված, Նրա նվիրվածությունն Իր փառքին և մեր աստվածատուր ցանկությունը, որ Նա երկրպագություն ստանա բոլոր ազգերից, ցեղերից, ժողովուրդներից և լեզուներից: Մենք վստահում ենք ոչ թե այն փաստին, որ Եկեղեցին ի զորու է կատարել Մեծ Հանձնարարականը, այլ՝ որ Աստված ունի անսահմանափակ և անարգել զորություն, որպեսզի իրականացնի այն, ինչ որոշել է:

2. Ծառայել մարդկանց

Մեր երկրորդ հիմնական նպատակը կորսված և մահվան մատնված մարդկանց փրկությունն է: Այն քրիստոնյան, ով ճշմարտապես ձգտում է փառավորել Աստծուն և վստահ է, որ գերագույն իշխանությունը պատկանում

է Նրան, անտարբեր չի լինի ամբողջ աշխարհում ապրող միլիարդավոր մարդկանց հանդեպ, որոնք դեռևս չեն լսել Հիսուս Քրիստոսի Ավետարանը (Հռոմեացիների 15.21)։ Եթե մենք ճշմարտապես նման ենք Քրիստոսին, մարդկության կորսված բազմությունները մեզանում կառաջացնեն գթասրտություն (Մատթեոս 9.36), նույնիսկ՝ մեծ տրտմություն և չփարատվող վիշտ (Հռոմեացիների 9.2)։ Մեր քրիստոնեական դավանությունը պետք է վիճարկելի համարել, եթե չենք ցանկանում անել այն, ինչ կարող ենք, որպեսզի հայտնի դարձնենք Քրիստոսի անունն ազգերի մեջ և համբերել ամեն բանի Աստծո ընտրյալների համար (Բ Տիմոթեոս 2.10)։

3. Հիմնել աստվածաշնչյան եկեղեցիներ

Մեր երրորդ հիմնական նպատակն աստվածաշնչյան եկեղեցիներ հիմնելն է։ Թեև մենք գիտակցում ենք, որ մարդկությունն ունի բազմաթիվ կարիքներ և ապրում է տառապանքի մեջ, մենք համոզված ենք, որ այդ ամենն ունի մեկ պատճառ. մարդու սիրտը խիստ ապականված է, թշնամաբար է տրամադրված Աստծո հանդեպ և մերժում է ճշմարտությունը։ Այդ իսկ պատճառով, մենք հավատում ենք, որ մարդկանց ծառայելու լավագույն միջոցն է՝ քարոզել Ավետարանը և հիմնել տեղական եկեղեցիներ, որոնք կհռչակեն Աստվածաշնչի խորհուրդն ամբողջությամբ և կծառայեն համաձայն Աստծո Խոսքի պատվիրանների, դրույթների և իմաստության։ Այսպիսի աշխատանքը չի կարող կատարվել մարդկային ուժերով, այլ միայն Աստծո գերբնական կանխատեսմամբ և այն միջոցներով, որոնք Նա սահմանել է՝ Աստծո Խոսքը քարոզելը, բարեխոսական աղոթքը, անձնազոհ ծառայությունը, անպայմանական սերը և ճշմարիտ քրիստոսանմանությունը։

4. Հայտնել Աստծո հավատարմությունը

«Հարթ Քրայ» Միսիոներական ընկերության չորրորդ և վերջին հիմնական նպատակն է ցույց տալ Աստծո ժողովրդին, որ Նա ճշմարտապես կարող է և ցանկանում է հոգալ մեր բոլոր կարիքներն Իր հարստության չափով, փառքով։ Ծառայության կարիքները լրացված կլինեն աղոթքի միջոցով։ Մենք չենք պատրաստվում աջակցություն ձեռք բերել ինքնագովազդման միջոցով, և ո՛չ էլ պարտադրելով կամ շահարկելով Քրիստոսի մեջ մեր եղբայրներին և քույրերին։ Եթե այս ծառայությունը Տիրոջից է, ուրեմն Նա էլ կլինի մեր Հովանավորը։ Եթե Նա մեզ հետ է, Նա կառաջնորդի մարդկանց մեզ միջոցներ տրամադրելու համար, և մենք կբարգավաճենք։ Եթե Նա մեզ հետ չէ, մենք հաջողություն չենք ունենա և չպետք է ունենանք։ Պետք է խոստովանել, որ այս ծառայության գոյության տարիների ընթացքում մեր հավատքը ոչ բավարար և թույլ է եղել, բայց Աստված միշտ հավատարիմ է եղել։ Ինչպես ասում է մի հրաշալի եղբայր. «Մեր Աստծուն հաճելի է, որ պաշտպանի նույնիսկ նվազագույն վստահությունը, որն ունեն Իր զավակները»։

Կոչ

Որպես քրիստոնյաներ՝ մենք ունենք կոչում, հանձնարարություն և պատվիրան՝ դնելու մեր կյանքը, որպեսզի Ավետարանը քարոզվի երկնքի տակ ապրող ամեն ստեղծվածի։ Աստծուն սիրելուց հետո սա պետք է լինի մեր երկրորդ «մոլուցքը»։ Չկա առավել ազնվագույն առաջադրանք, որի համար արժե տալ մեր կյանքը, քան Աստծո փառքը տարածելը, այսինքն՝ մարդկանց փրկության բերելը Հիսուս Քրիստոսի Ավետարանը քարոզելու միջոցով։ Եթե քրիստոնյան ճշմարտապես հնազանդ է Մեծ Հանձնարարականին, նա կա՛մ կտա իր կյանքը՝ հանքն իջնելու համար, կա՛մ կպահի իջնողի պարանը (Վիլյամ Քերի)։ Երկու դեպքում էլ անհրաժեշտ է նույն վճռական նվիրվածությունը։

Իմացե՛ք ավելին.

Այցելե՛ք մեր «**heartcrymissionary.com**» կայքը, որպեսզի իմանաք ավելին մեր ծառայության մասին՝ այն, թե որն է մեր նպատակը, ինչին ենք հավատում և ինչպես ենք գործում։ Բացի այդ, դուք կարող եք ծավալուն տեղեկություններ ստանալ այն միսիոներների մասին, որոնց մենք ծառայելու արտոնություն ունենք։

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

«Աղոթքով ուսումնասիրե՛ք այս ձեռնարկը, մանրակրկիտորեն կիրառե՛ք այն և սրտանց ապրե՛ք այս սկզբունքներով՝ Քրիստոսի փառքի համար: Այսպես վարվելով՝ դուք անպատճառ օգուտ կբերեք ձեր անձին»:

— **Ջեֆ Փոլարդ, «Սիոն սարի աստվածանչյան եկեղեցու»** հովիվ և ***«Ֆրի Գրեյս Բրոդքաստեր»*** պարբերականի խմբագիր

Լավ է, որ Աստծո ժողովուրդը դեռևս համարում է, որ Աստվածաշնչի ուսումնասիրությունը և աղոթքը հիմնարար են քրիստոնեական կյանքի համար, իսկ դրանցում հավատարիմ մարդիկ ազնիվ և իմաստուն են: Միևնույն ժամանակ, ցավալի է, որ բազմաթիվ ժամանակակից քրիստոնյաներ ունեն խիստ սխալական պատկերացումներ ծոմապահության մասին՝ որ այն անցյալի վերապրուկ է, որ այն անհնարին սխրանք է, որը պետք է կատարվի միայն «հոգևոր վերնախավի» կողմից, կամ (ամենավատը), որ այն վնասակար ծես է, և այն կատարում են միայն ծանրագույն մոլեռանդները, որոնք հավատում են, որ մարմնի կործանումը միակ ճանապարհն է դեպի ճշմարիտ սրբությունը:

«Հասկանալ ծոմապահությունը» գիրքն օգտագործում է Աստծո Խոսքը՝ հերքելու համար այս սխալական գաղափարները ծոմապահության մասին և ցույց տալու ուսանողին այն հրաշալի օգնությունը, որը նա կարող է ստանալ ծոմապահության միջոցով: Հեղինակը ցանկացել է ստեղծել այնպիսի աշխատություն, որը պարզապես մատնացույց է անում Աստվածաշնչին և թույլ է տալիս, որ Աստծո Խոսքը խոսի իր փոխարեն: Այսպիսով, այս դասընթացի նպատակն է, որ ուսանողը հանդիպում ունենա Աստծո հետ՝ Նրա Խոսքի միջոցով: Այս ուսումնական ձեռնարկն այնպես է կազմված, որ ուսանողը բառացիորեն անկարող է ընթերցել այն՝ առանց բաց Աստվածաշնչի:

Ծոմապահությունը հաճախակի մոռացվող հոգևոր պաշտամունք է: Թեև այն անչափ օգտավետ է, դժբախտաբար, տեղեկության խիստ պակասի պատճառով, դրա վերաբերյալ առաջացել են բազմաթիվ թյուրըմբռնումներ և սխալ տեղեկություններ: Այս աշխատանքային գրքում, որը չորրորդն է **«Աստվածաշնչյան հիմունքներ քրիստոնեական հավատքի համար»** շարքում, Փոլ Վոշերը շարունակաբար մատնացույց է անում ուսանողին Սուրբ գիրքը՝ քողազերծելու համար այս սխալական գաղափարները և օգնելու համար Աստծո ժողովրդին հասկանալ ծոմապահությունը և դրա պատշաճ տեղը քրիստոնեական կյանքում: Այս էջերում նույնպես գտնվում է շոտլանդացի աստվածաբան Թոմաս Բոստոնի կրճատված և արդիականացված աշխատությունը ծոմապահության և սեփական անձը խոնարհեցնելու մասին:

Փոլ Դեյվիդ Վոշերը տասը տարի շարունակ միսիոներ է եղել Պերուի Հանրապետությունում: Այդ ընթացքում նա հիմնադրել է «Հարթ Քրայ» Միսիոներական ընկերությունը, որի նպատակն է աջակցել պերուացի եկեղեցիներ հիմնադրողներին: Ներկայումս Փոլը «Հարթ Քրայի» Միսիոներական բաժնի տնօրենն է (heartcrymissionary.com): Աստծո օրհնությամբ, այն կարողանում է աջակցել միսիոներների աշխարհով մեկ գտնվող ավելի քան քառասուն երկրում: Նա և կինը՝ Զարոն, ունեն չորս զավակ՝ Յանը, Էվանը, Ռոուենը և Բրոնվինը: